ԲԱԲԵԼՈՆԻ
ամենահարուստ
ՄԱՐԴԸ

Ջորջ Ս. Քլեյսոն

Թարգմանեց
Վահագն Սարգսյանը



Ջորջ Ս. Քլեյսոն

ԲԱԲԵԼՈՆԻ ամենահարուստ ՄԱՐԴԸ

Երևան
Մագաղաթ
2018

ՀՏԴ 330+159.9+93/94
ԳՄԴ 65+88.4+63.3
Ք 620

Քլեյսոն Ջորջ Սամուել
Ք 620 Բաբելոնի ամենահարուստ մարդը/ Ջ. Ս. Քլեյսոն.- Եր.: Մագաղաթ պլյուս, 2018.- 128 էջ:

Առանց տարրական ֆինանսական գիտելիքների՝ անհնար է հասնել հարստության և բարեկեցության, ինչպես առանց բժշկական գիտելիքների՝ անհնար է վիրահատություն կատարել:

Բոլորս էլ աշխատավարձ ենք ստանում և այս կամ այն կերպ առնչվում ենք դրամի հետ: Բայց քանի՞սն են շաբաթական մեկ կամ երկու ժամ տրամադրում ֆինանսական գիտելիքներ ձեռք բերելուն: Կարդալով այս գիրքը՝ դուք կհամոզվեք, որ դրամը կուտակվում ու բազմապատկվում է ֆինանսական տարրական գիտելիքներին տիրապետողների մոտ և, հակառակը, փախչում է նրանցից, ովքեր չունեն այդ գիտելիքները:

ՀՏԴ 330+159.9+93/94
ԳՄԴ 65+88.4+63.3

ISBN 978-9939-9165-7-6

© Վահագն Սարգսյան
© George S. Clason
© Մագաղաթ պլյուս, 2018

Բովանդակություն

Հեղինակի մասին | **6**
7 | Ներածություն
Պատմական ակնարկ Բաբելոնի մասին | **8**
14 | Ոսկի տենչող մարդը
Բաբելոնի ամենահարուստ մարդը | **20**
30 | Յոթ միջոց՝ հարստանալու համար
Միջոց առաջին. սկսիր գիրացնել քսակդ | **34**
36 | Միջոց երկրորդ. կառավարիր ծախսերդ
Միջոց երրորդ. բազմապատկիր ոսկիդ | **39**
41 | Միջոց չորրորդ. ապահովիր ներդրումներիդ անվտանգությունը
Միջոց հինգերորդ. կացարանդ դարձրու՛ շահավետ ներդրում | **43**
45 | Միջոց վեցերորդ. ապահովիր ապագայիդ եկամուտը
Միջոց յոթերորդ. զարգացրու՛ դրամ վաստակելու ունակությունդ | **47**
50 | Հանդիպիր հաջողության աստվածուհուն
Ոսկու հինգ օրենքները | **62**
70 | Ոսկու առաջին օրենքը
Ոսկու երկրորդ օրենքը | **70**
71 | Ոսկու երրորդ օրենքը
Ոսկու չորրորդ օրենքը | **71**
72 | Ոսկու հինգերորդ օրենքը
Վաշխառուն Բաբելոնից | **74**
86 | Բաբելոնի պարիսպները
Ողտավաճառը Բաբելոնից | **90**
100 | Բաբելոնի կավե սալիկները
Սալիկ առաջին | **102**
103 | Սալիկ երկրորդ
Սալիկ երրորդ | **104**
105 | Սալիկ չորրորդ
Սալիկ հինգերորդ | **107**
112 | Բաբելոնի ամենահաջողակ մարդը

Ինչպես տարածության մեջ ձգվող մի ճանապարհ՝ ձեր առջև բացվում է ապագան: Այդ ճանապարհին կան նպատակներ, որոնք դուք ուզում եք իրագործել, ցանկություններ, որոնք ուզում եք բավարարել:
Այդ ձգտումներն ու ցանկություններն իրագործելու համար դուք պետք է ֆինանսապես հաջողակ լինեք: Կիրառեք հաջորդ էջերում բացահայտվող ֆինանսական սկզբունքները: Թող դրանք ձեզ հեռու պահեն դատարկ դրամապանակից լի դրամապանակ տանող ճանապարհի դժվարություններից, առաջնորդեն ձեզ դեպի ավելի լիարժեք ու երջանիկ կյանք, որը հնարավոր է դարձնում լի դրամապանակը:
Ձգողականության օրենքի պես այս սկզբունքները ևս ունիվերսալ են և անփոփոխ: Թույլ տվեք, որ դրանք ապացուցեն իրենց արդյունավետությունը նաև ձեր դեպքում, ինչպես արդեն շատերի դեպքում են ապացուցել՝ դառնալով հուսալի բանալի այն ճանապարհին, որը տանում է դեպի լի դրամապանակ, խոշոր բանկային հաշիվներ և ֆինանսական առաջընթաց:

Փողն առատ է նրանց համար, ովքեր հասկանում են այն կուտակելու պարզ օրենքները:

1 \ Սկսի՛ր գիրացնել քսակդ:
2 \ Կառավարի՛ր ծախսերդ:
3 \ Բազմապատկի՛ր ոսկիդ:
4 \ Ապահովի՛ր ներդրումներիդ անվտանգությունը:
5 \ Կացարանդ դարձրու՛ շահավետ ներդրում:
6 \ Ապահովի՛ր ապագայիդ եկամուտը:
7 \ Ձարգացրու՛ դրամ վաստակելու ունակությունդ:

Հեղինակի մասին



Ջորջ Սամուել Քլեյսոնը ծնվել է Լուիզիանայի Միսսուրի քաղաքում 1874 թվականի նոյեմբերի 7-ին: Նա հաճախել է Նեբրասկայի համալսարան, ապա իսպանա-ամերիկյան պատերազմի ընթացքում ծառայել է ամերիկյան բանակում: Իր երկարատև հրատարակչական գործունեությունն սկսել է՝ հիմնադրելով «Քլեյսոն Մափ» ընկերությունը Կոլորադոյի Դենվեր քաղաքում: Հրատարակել է ԱՄՆ ու Կանադայի առաջին ճանապարհային քարտեզը: 1926 թվականին հրապարակել է առաջինը պամֆլետների իր հայտնի շարքից՝ տնտեսողության և ֆինանսական հաջողության վերաբերյալ, որտեղ իր դրույթները կառուցում էր՝ օգտագործելով անտիկ Բաբելոնի հայտնի առակները: Դրանք լայն տարածում գտան միլիոնավոր մարդկանց, բանկերի և այլ ֆինանսական հասատությունների շրջանում: Ամենահայտնի առակի անվանումը՝ ‹‹Բաբելոնի ամենահարուստ մարդը››, ընտրվեց՝ որպես գրքի վերնագիր: Արդի ժամանակներում «Բաբելոնյան առակները» դարձել են ոգեշնչման դասական աղբյուր:

Ներածություն

Մեր ազգի բարգավաճումը կախված է մեզանից յուրաքանչյուրի անհատական ֆինանսական բարեկեցությունից:

Այս գիրքն առնչվում է յուրաքանչյուրիս անձնական հաջողություններին: Հաջողությունը մեր ձեռքբերումներն են՝ որպես մեր ջանքերի ու կարողությունների արդյունք: Պատշաճ պատրաստվածությունը մեր հաջողության բանալին է: Մեր գործողությունները չեն կարող ավելի իմաստուն լինել, քան մեր միտքը: Եվ մեր մտքերը չեն կարող մեր գիտակցությունից իմաստուն լինել:

Նիհար քսակները բուժող այս գիրքը համարվում է ֆինանսական հիմունքների ընկալման ուղեցույց: Այսպիսով, գիրքը նրանց համար է, ովքեր ձգտում են հասնել ֆինանսական հաջողության: Ցույց է տալիս, թե ինչպես դրամ կուտակել, պահել այդ կուտակածը և բազմապատկել այն:

Հաջորդող էջերը մեզ կտանեն Բաբելոն՝ ամբողջ աշխարհում հայտնի և գործածվող այս պարզ ֆինանսական հիմունքների բնօրրան:

Նոր ընթերցողներին հեղինակը մաղթում է, որ նրանք ևս այս էջերում ոգեշնչում գտնեն՝ բարելավելու իրենց բանկային հաշիվները, ձեռք բերելու ֆինանսական հաջողություններ ու գտնելու ծանր ֆինանսական վիճակից դուրս գալու լուծումներ՝ մի բան, որի կարիքն այսքան շատ է աշխարով մեկ:

Հեղինակն իր երախտագիտությունն է հղում այն գործարարներին, ովքեր իրենց աշխատողներին, ընկերներին, բարեկամներին, շրջապատին քաջալերել ու ուղորդել են դեպի այս գիրքը: Ոչ մի երաշխիք այդքան ազդեցիկ չէ, որքան այն, որը տրված է մարդուց, ով գործնականում ուսանել ու կիրառել է այդ հիմունքները և հասել ֆինանսական հաջողության:

Բաբելոնը դարձել էր ամենահարուստ քաղաքը, քանզի նրա բնակիչները ժամանակի ամենահարուստ մարդիկ էին: Նրանք հասկանում էին փողի արժեքը: Կիրառում էին գումար ստեղծելու, այն պահելու, ապա կրկին գործի դնելու և բազմապատկելու այս առողջ հիմունքները: Նրանք իրենց համար ստեղծում էին այն, ինչ մենք բոլորս ենք տենչում՝ կայուն եկամուտ ապագայի համար:

Ջ. Ս. Ք.

Պատմական ակնարկ
ԲԱԲԵԼՈՆԻ
մասին

Պատմության մեջ չի եղել ավելի փառահեղ քաղաք, քան Բաբելոնը: Հենց միայն նրա անունը զուգորդվում է հարստության և շքեղության հետ: Այնտեղ կուտակված գանձերը, ոսկին ու զարդերն ապշեցնող են: Բնականաբար, ենթադրվում է, թե այդպիսի հարուստ քաղաքը պետք է գտնվի բարենպաստ արևադարձային գոտում՝ շրջապատված հարուստ բնական ռեսուրսներով՝ անտառներով և հանքերով: Բայց իրականությունն այլ էր: Այն գտնվում էր Եփրատ գետի ափին՝ մի վայրի, հարթ, անապատային հովտում: Չուներ ո՛չ անտառներ, ո՛չ օգտակար հանածոներ և ո՛չ անգամ քար՝ շինարարության համար: Նույնիսկ տեղակայված չէր բնական առևտրային ճանապարհի վրա: Տեղումների քանակը բավարար չէր հացահատիկ աճեցնելու համար:

Բաբելոնն արտակարգ օրինակ է, թե մարդն ինչպես կարող է հասնել իր նպատակներին՝ անկախ իրավիճակից: Այս հսկա քաղաքին անհրաժեշտ բոլոր ռեսուրսներն ստեղծվել էին մարդու կողմից: Ամբողջ հարստությունը մարդածին էր:

Բաբելոնն ուներ միայն երկու բնական ռեսուրս՝ պարարտ հող և ջրառատ գետ: Նրանք օգտվեցին բոլոր ժամանակների ամենահանճարեղ ճարտարապետական ձեռքբերումից. ջրանցքների ու ամբարտակների միջոցով ստեղծեցին հսկայական ջրամատակարարման ցանց՝ այդպիսով հնարավոր դարձնելով գետի ջրի բաշխումն ու կա-

ռավարումը: Այդ ջրանցքները, երկար տարածություններ անցնելով չոր հովիտներով, կենսատու ջուր էին պարգևում բերրի հողին: Սա պատմությանը հայտնի առաջին ինժեներական գլուխգործոցներից մեկն էր: Այս ոռոգման համակարգի շնորհիվ ստացվում էր այնպիսի առատ բերք, որպիսին աշխարհը մինչ այդ չէր տեսել:

Բարեբախտաբար, իր երկարատև գոյության ընթացքում Բաբելոնում իշխել են մի շարք հաջող թագավորներ, որոնց օրոք ասպատակություններ և զավթումներ եթե նույնիսկ եղել են, ապա դրանք չեն կրել պարբերական ու նպատակաուղղված բնույթ: Սակայն, փոխարենը, Բաբելոնը վարել է բազմաթիվ տեղային կամ պաշտպանական բնույթի պատերազմներ հավակնոտ նվաճողների դեմ, որոնք համառորեն փորձում էին տիրանալ Բաբելոնի անհամար գանձերին: Բաբելոնյան այդ նշանավոր թագավորները պատմության մեջ մնացին որպես իմաստուն, ստեղծագործ ու արդարամիտ կառավարիչներ: Բաբելոնը չտվեց և ոչ մի խրոխտ աշխարհակալ, որ ձգտեր նվաճել ժամանակի հայտնի աշխարհը:

Որպես քաղաք՝ Բաբելոնն այլևս գոյություն չունի: Երբ այն կառուցած և հազարավոր տարիներ պահպանող մարդկային կենարար ուժը լքեց քաղաքը, այն շատ արագ կրկին վերածվեց անապատի և ավերակների: Ներկայումս Բաբելոնի տարածքը նշմարելի է Սուեզի ջրանցքից վեց հարյուր մղոն դեպի արևելք՝ Պարսից ծոցից հյուսիս: Ինչպես Արիզոնա նահանգի Յումա քաղաքը՝ Բաբելոնի աշխարհագրական լայնությունը ևս հասարակածից երեսուն աստիճան դեպի հյուսիս է: Ունի նույն շոգ ու չոր կլիման, ինչպես այդ ամերիկյան քաղաքը:

Եփրատի այդ հովիտը, որ ժամանակին ոռոգվող ու բազմամարդ գյուղատնտեսական մարզ էր, այսօր կրկին ամայի տափաստան է, որտեղ անվերջ սուլում է քամին: Հազվադեպ հանդիպող խոտն ու տատասկը գոյության կռիվ են տալիս քամու բերած ավազի դեմ: Անցյալում են մնացել բազմապիսի բարիքներով առատ բերրի դաշտերը, հսկա քաղաքներն ու քարավանները: Միակ բնակիչներն արաբական քոչվոր ցեղերն են, որոնք ապրում են՝ զբաղվելով անասնապահությամբ: Այսպիսին է Բաբելոնը՝ սկսած մոտավորապես Քրիստոսի ծնունդից:

Հովիտը պատված է հողաբլուրներով, որոնք հարյուրամյակներով անտեսվում էին անցորդների կողմից: Ժամանակ առ ժամանակ հորդառատ անձրևների բերած կավե սպասքի կտորներն ու աղյուսներն ի վերջո գրավեցին հնէաբանների ուշադրությունը: Եվրոպական և ամերիկյան թանգարանների կողմից ֆինանսավորվող արշավախմբերն ուղարկվեցին՝ տարածքը հետազոտելու: Քլունգով ու բահով բացահայտվեց, որ այդ բլուրները հնադարյան քաղաք-

ներ են եղել: Ավելի ճիշտ կլիներ՝ հովիտն անվանել քաղաքների գերեզմանոց:

Բաբելոնը դրանցից մեկն էր: Քսան դար շարունակ քամիներն անապատի ավազով ծածկել էին քաղաքը: Կառուցված լինելով աղյուսից՝ բոլոր արտաքին պարիսպները, մաշվելով ու քայքայվելով, կրկին հող էին դարձել: Այսպիսին է այսօր երբեմնի հարուստ Բաբելոնը: Այնքան վաղուց լքված հողակույտ, որ մարդիկ անգամ անունը չգիտեին, մինչև որ մանրազնին մաքրման ու վերականգնման աշխատանքների շնորհիվ կրկին բացահայտվեցին դարերով անտեսված փողոցներն ու շինությունները:

Շատ գիտնականներ համարում են, որ Բաբելոնն ու հարակից քաղաքները հնագույն քաղաքակրթությունն են, որտեղից մեզ են հասել հստակ գրավոր արձանագրություններ: Հաստատված է, որ որոշ գտածոներ մինչև 8000 տարվա հնություն ունեն: Հատկապես, հետաքրքիր են մեթոդները, որոնք օգտագործվել են այս տարեթվերը բացահայտելու համար: Հայտնաբերվել են արևի խավարումը նկարագրող արձանագրություններ: Ժամանակակից աստղագետները ճշգրտությամբ հաշվարկել են ժամանակը, երբ Բաբելոնից տեսանելի է եղել այդ խավարումը՝ այդպիսով հաստատելով նրանց և մեր օրացույցների միջև կապը:

Այս մեթոդով ապացուցվել է, որ Միջագետքի բնակիչ շումերներն ապրել են պարսպապատ քաղաքներում: Կարելի է միայն գուշակել, թե դրանից էլ քանի դար առաջ են այդ քաղաքները գոյություն ունեցել: Դրանց բնակիչները պարզապես բարբարոսներ չէին, ովքեր ապրում էին պարիսպներից ներս: Նրանք կրթված ու լուսավորված մարդիկ էին: Եվ ինչպես վկայում են գրավոր աղբյուրները, նրանք առաջին ճարտարագետներն էին, առաջին աստղագետները, առաջին մաթեմատիկոսները, առաջին ֆինանսիստները և առաջին մարդիկ, ովքեր գրավոր լեզու են ունեցել:

Արդեն նշվել է ոռոգման համակարգի մասին, որ ամայի հովիտը փոխակերպել էր գյուղատնտեսական դրախտի: Այդ ջրանցքների մնացորդներն այսօր էլ նշմարելի են՝ չնայած դրանք հիմնականում լցված են ավազով: Դրանցից որոշներն այնքան լայն էին, որ դատարկ լինելու դեպքում կողք կողքի կարող էր տասներկու ձի անցնել: Չափերը համեմատելի են Կոլորադո և Յուտա նահանգների ամենամեծ ջրանցքների հետ:

Բացի ոռոգվող հովտից, բաբելոնյան ճարտարագետները նման մասշտաբի ևս մեկ նախագիծ են իրագործել: Դրենաժային համակարգ մշակելով՝ նրանց հաջողվել էր Տիգրիսի ու Եփրատի գետաբերանների ճահճուտները ևս վերածել մշակվող հողատարածքների:

Հույն ճանապարհորդ ու պատմիչ Հերոդոտոսը եղել է Բաբելոնում քաղաքի ամենածաղկուն շրջանում, և նրա թողած գրավոր վկայությունները միակ օտար աղբյուրն են համարվում: Նա պատկերավոր նկարագրություններ է թողել քաղաքի ու նրա բնակիչների որոշ տարօրինակ սովորությունների մասին: Իր վկայություններում նա նշում է հողի անհավանական բերքատվության մասին, և թե ինչ աննախադեպ քանակի հացահատիկ էին ստանում:

Բաբելոնի երբեմնի փառքը մարել է, բայց մեզ է հասել իմաստությունը, ինչի համար մենք պարտական ենք նրանց թողած գրավոր վկայություններին: Այն հեռավոր ժամանակներում թուղթը դեռ հայտնագործված չէր, ուստի նրանք իրենց գրառումները փորագրում էին կավե խոնավ սալիկների վրա: Փորագրելուց հետո դրանք թրծվում էին՝ դառնալով ամուր սալիկներ: Պատրաստի սալիկներն ունեին 21սմ երկարություն, 15սմ լայնություն և 2,5սմ հաստություն:

Կավե սալիկներն ունեին նույն կիրառությունը, ինչպես ժամանակակից գրավոր կրիչները: Դրանց վրա փորագրվել են պոեմներ, լեգենդներ, պատմություններ, օրենքներ, պարտավորագրեր, թագավորական կարգադրություններ ու անգամ նամակներ, որոնք սուրհանդակների միջոցով ուղարկվել են մի քաղաքից մյուսը: Այս կավե սալիկների միջոցով մենք հնարավորություն ենք ստանում թափանցել մարդկանց անձնական գործերի մեջ, օրինակ՝ նման մի սալիկից, որն ակնհայտորեն խանութպանի գրառում է, իմանում ենք, որ կոնկրետ անունով մի հաճախորդ նշված ամսաթվին բերեց մեկ կով և այն փոխանակեց յոթ պարկ ցորենի հետ, որից երեքը տարավ անմիջապես, իսկ մնացած չորսը ավելի ուշ՝ ըստ իր հարմարության:

Հնագետներն ավազի տակ ապահով թաղված քաղաքների ավերակներից հայտնաբերեցին հարյուր հազարավոր նման սալիկներից բաղկացած գրադարաններ:

Բաբելոնի հրաշքներից մեկը քաղաքը շրջապատող հսկա պարիսպներն էին: Հնում այդ պարիսպները եգիպտական բուրգերի հետ միևնույն շարքին էին դասվում՝ որպես աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը: Համարվում է, որ այդ պարիսպների առաջին հատվածները կանգնեցրել է Շամիրամ թագուհին քաղաքի պատմության վաղ շրջանում: Ժամանակակից էքսկավատորներն անկարող եղան որևէ նշան գտնել սկզբնական պարսպից: Հայտնի չէ նույնիսկ դրանց ճշգրիտ բաձրությունը: Վաղ վկայություններում նշված էր, որ այդ պարիսպներն ունեին մոտ տասնյոթից քսան մետր բարձրություն, արտաքին կողմից պատված էին թրծված աղյուսով և լրացուցիչ պաշտպանված էին ջրով լցված խոր խրամով: Ավելի ուշ՝ մոտավորապես Քրիստոսից 600 տարի առաջ, Նաբոպոլասար թա-

գավորի կողմից սկսեցին կառուցվել առավել հայտնի պարիսպները: Նախագիծն այնքան ահռելի մասշտաբ ուներ, որ նա չհասցրեց տեսնել դրա ավարտը, և աշխատանքները շարունակվեցին նրա որդու՝ Աստվածաշնչից մեզ հայտնի Նաբուգոդոնոսորի օրոք:

Այս նոր պարիսպի բարձրությունն ու երկարությունն անհավանական են թվում: Վստահելի աղբյուրները վկայում են, որ դրանց բարձրությունը մոտ հարյուր վաթսուն ոտնաչափ էր, ինչը համարժեք է ժամանակակից տասնհինգ հարկանի շենքի բարձրությանը, իսկ ամբողջ երկարությունը տասնհինգից տասնութ կիլոմետր էր: Պարսպի լայնությունն այնքան էր, որ վեց ձիանոց մարտակառքը կարող էր հանգիստ անցնել վրայով: Այս հսկա կառույցից մեզ են հասել միայն հիմքի որոշ հատվածներ և ջրի խրամը: Մի կողմից՝ բնական պատճառները, մյուս կողմից՝ արաբները, որոնք պարսպի աղյուսներն օգտագործում էին այլ շինությունների համար, վերջնականապես ավարտին հասցրեցին դրանց քայքայումը:

Բաբելոնի պարիսպները դիմակայել են ժամանակի բոլոր աշխարհակալների արշավանքներին: Շատ թագավորներ են պաշարել քաղաքը, բայց բոլոր այդ փորձերն անարդյունք են եղել: Այն ժամանակների արշավող բանակները չի կարելի համարել թեթև կամ աննշան ուժեր: Պատմաբանները վկայում են, որ եղել են բանակներ տասը հազար ձիավորով, քսանհինգ հազար մարտակառքով, հազար երկու հարյուր հետևակային զորագնդով՝ յուրաքանչյուրում հազար զինվոր: Հաճախ նման արշավանքի համար պահանջվում էր երկուսից երեք տարի նախապատրաստական աշխատանք, ամբողջ ճանապարհի համար զինամթերքի ու պարենի կուտակում և ապահովում:

Բաբելոնում կյանքը կազմակերպված էր ժամանակակից քաղաքների նման. կային փողոցներ ու խանութներ, վաճառականներն իրենց ապրանքն էին առաջարկում բնակելի թաղամասերում: Քրմերը ծառայություն էին մատուցում հոյակապ տաճարներում: Քաղաքն ուներ նաև պարսպապատված միջնաբերդ, որտեղ տեղակայված էին թագավորական պալատները: Ասում են՝ միջնաբերդի պարիսպներն ավելի բարձր էին, քան քաղաքի արտաքին պարիսպները:

Բաբելոնցիները հմուտ էին այնպիսի արվեստներում և արհեստներում, ինչպիսիք են քանդակագործությունը, նկարչությունը, մանածագործությունը, ոսկերչությունը, զինագործությունն ու գյուղատնտեսական գործիքների պատրաստումը: Բաբելոնյան ոսկերիչները պատրաստում էին ամենանրբագեղ զարդերը: Հարուստ քաղաքացիների գերեզմաններից հայտնաբերված բազմաթիվ նմուշներ այժմ ցուցադրված են աշխարհի առաջատար թանգարան-

ներում:

Վաղնջական ժամանակներում, երբ մարդկության մի հատվածը որսորդության ու կովի համար օգտագործում էր հիմնականում քարե գործիքներ և զենքեր, բաբելոնցիներն արդեն իսկ օգտագործում էին մետաղական ծայրերով գործիքներ և զենքեր:

Բաբելոնցիները խելացի ֆինանսիստներ ու առևտրականներ էին: Որքան հայտնի է, նրանք են առաջինը ներդրել դրամը՝ որպես փոխանակման միջոց, ինչպես նաև պարտատոմսերն ու սեփականության վկայականները: Բաբելոնն անառիկ էր մինչև մ.թ.ա. 540 թվականը, և անգամ այդ ժամանակ նրա պարիսպներն անմատչելի մնացին: Բաբելոնի գրավման պատմությունը շատ տարօրինակ է: Այդ ժամանակաշրջանի մեծագույն աշխարհակալ Կյուրոս արքան մտադիր էր արշավել քաղաքի վրա և գրավել նրա անառիկ պարիսպները: Բաբելոնի թագավոր Նաբոնիդուսի խորհրդականները համոզեցին նրան ճակատամարտ տալ Կյուրոսի դեմ, նախքան վերջինս կպաշարեր քաղաքը: Սակայն բաբելոնյան բանակին հաջողությամբ պարտության մատնելով և այն հեռացնելով քաղաքից՝ Կյուրոսը, առանց որևէ դիմադրության, մուտք գործեց Բաբելոնի բաց դարպասներից և գրավեց այն:

Այդ պահից ի վեր քաղաքի ուժն ու հեղինակությունն սկսեցին նվազել, և մի քանի հարյուրամյակ անց այն վերջնականապես լքվեց, ամայացավ՝ թույլ տալով, որ քամիները կրկին վերածեն այն անապատի, ինչից էլ ժամանակին հառնել էր այդ փառահեղ քաղաքը: Բաբելոնն ընկավ, որպեսզի այլևս երբեք ոտքի չկանգնի, սակայն քաղաքակրթությունն ընդմիշտ կմնա նրան պարտական:

Ժամանակը փոշիացրեց Բաբելոնի հպարտ պարիսպներն ու տաճարները, բայց նրա իմաստնությունը շարունակում է ապրել:

Փողը միջոց է, որով չափվում է երկրային հաջողությունը:
Փողը հնարավորություն է տալիս վայելել երկրային բարիքները:
Փողն առատ է նրանց համար, ովքեր հասկանում են այն կուտակելու և կառավարելու պարզ օրենքները:
Փողն այսօր էլ կառավարվում է նույն օրենքներով, որոնցով վեց հազար տարի առաջ կառավարվում էր բարգավաճող Բաբելոնում:

ՈՍԿԻ տենչող մարդը

Բանսիրը, որ Բաբելոնում մարտակառք պատրաստող վարպետ էր, խոր հուսահատության մեջ էր: Նստած իր ուենցվածքը շրջապատող ցածրիկ պարսպին՝ տխուր նայում էր իր հասարակ տանը և բաց արհեստանոցին, որտեղ մի կիսավարտ մարտակառք էր կանգնած:

Նրա կինը հաճախակի հայտնվում էր բաց դռան մոտ: Բանսիրին ուղղված խուսափողական հայացքները նրան հիշեցրեցին, որ տան ուտելիքի պաշարը գրեթե սպառվել է, և որ նա պետք է ավարտին հասցնի այդ մարտակառքի գործը, մուրճ խփի, տաշի, փայլեցնի, ներկի, կաշեպատի անիվները և վերջնական տեսքի բերի, որպեսզի իր հարուստ պատվիրատուն վճարի մնացած գումարը:

Բայցևայնպես, նրա գեր, մկանուտ մարմինը շարունակում էր ամուր նստած մնալ պարսպին: Նրա դանդաղկոտ միտքը համբերատար պայքարում էր մի խնդրի դեմ, որի

լուծումը ոչ մի կերպ չէր գտնում: Եփրատի հովտին բնորոշ տաք արևադարձային արևն անխնա հարվածում էր նրան: Հոնքերին գոյացած քրտինքի կաթիլներն աննկատ սահում էին ու անհետանում նրա կրծքի մազերի մեջ:

Նրա տան հետևում խոյանում էր թագավորի պալատը շրջապատող բարձր պարիսպը, իսկ հարևանությամբ կապույտ երկինքն էր ճեղքում Բելի տաճարի գունազարդ աշտարակը: Դրանց ստվերում էր գտնվում Բանսիրի համեստ տունն ու էլի մի քանի խղճուկ տնակներ: Այսպիսին էր Բաբելոնը՝ շքեղության ու թշվառության, շշմեցնող հարստության ու աննկարագրելի աղքատության համադրություն՝ առանց մի որևէ համակարգի կամ նախագծի, պարսպի պաշտպանության տակ իրար գլխի լցված:

Եթե նա շրջվեր, ապա կտեսներ աղմկոտ մարտակառքերով հարուստ պարոնների, թանկարժեք հագուստներով ու սանդալներով վաճառականների ու նրանց միախառնված ոտաբոբիկ մուրացկանների: Անգամ հարուստներն ստիպված մի կողմ էին քաշվում, երբ ծանր տիկերը շալակած ծառաների շարքերը ջուր էին կրում թագավորական կախովի այգիների համար:

Բանսիրը չափազանց կլանված էր իր խնդիրներով, որպեսզի լսեր կամ հետևեր անհանգիստ քաղաքի իրարանցմանը: Հարազատ քնարի տխուր ելևէջներն անսպասելիորեն դուրս բերեցին նրան իր մտորումներից: Նա շրջվեց ու տեսավ իր երաժիշտ ընկերոջ՝ Քորբիի ժպտացող դեմքը.

-Թող Աստվածներն առատորեն օրհնեն քեզ, իմ լա՛վ ընկեր, - շռայլորեն ողջունեց Քորբին, - Չնայած, կարծես թե նրանք այնքան առատաձեռն են քո հանդեպ, որ դու աշխատելու կարիք չունես: Ես ուրախ եմ քեզ բաժին ընկած ճակատագրով: Ավելին, ես անգամ կկիսեի այն քեզ հետ: Խնդրում եմ՝ քո գեր քսակից մի երկու խղճուկ շեկել պարտքով տաս ինձ մինչ երեկո, երբ ազնվականները կսկսեն իրենց խնջույքը: Այնքան արագ տվածդ կվերադառնա քեզ, որ չես էլ հասցնի նկատել դրա բացակայությունը:

-Եթե ունենայի երկու շեկել, - մռայլորեն պատասխանեց Բանսիրը, - ես չէի կարող որևէ մեկին դրանով օգնել, անգամ քեզ՝ իմ ընկերներից լավագույնին, քանզի այն կլիներ իմ ամբողջ կարողությունը: Ոչ ոք պարտքով չի տա իր ամբողջ կարողությունը, անգամ իր լավագույն ընկերոջը:

-Ինչ, - զարմացած բացականչեց Քորբին, - Քո քսակում անգամ մեկ շեկել չունես, բայց արձանի պես պարապ նստել ես պարսպի վրա՛… Ինչու՞ չես ավարտում այդ մարտակառքը: Ուրիշ ինչպե՞ս կարող ես հագեցնել քո ազնիվ քաղցը: Սա քեզ նման չէ, իմ ընկեր: Որտե՞ղ է քո անսպառ եռանդը: Քեզ ինչ-որ բա՛ն է վշտացնում: Մի՞թե

Աստվածները քեզ դժբախտություն են բերել:

-Իրոք որ Աստվածների զայրույթն է, - համաձայնեց Բանսիրը: - Այն սկսվեց երազով՝ մի անիմաստ երազով, որտեղ ես ինձ հնարավորությունների տեր մարդ էի զգում: Գոտուցս մի կարգին քսակ էր կախված՝ ծանր, մետաղադրամներով լի: Ունեի շեկելներ, որ առանց երկմտելու՝ աջ ու ձախ մուրացկաններին էի տալիս: Ունեի արծաթ, որով կնոջս համար ճոխ հագուստ ու զարդեր էի գնում և այն ամենը, ինչ ինքս էի ցանկանում: Ունեի ոսկի, որ ինձ ապագայի հանդեպ վստահություն էր ներշնչում և անհոգություն՝ արծաթը ծախսելիս: Բավարարվածության փառավոր զգացում էր: Մտքովդ չէր անցնի, որ ես քո իմացած այն աշխատասեր ընկերն էի, և ոչ էլ կնոջս կճանաչեիր, քանի որ նրա դեմքին կնճիռներ չկային, և նա փայլում էր երջանկությունից: Նա կրկին մեր ամուսնության առաջին օրերի ժպտերես աղջնակն էր:

-Իրոք, շատ հաճելի երազ էր, - նկատեց Քոբբին, - բայց ինչու՞ պիտի նման հաճելի երազը քեզ պատին նստած արձանի վերածեր:

-Իրոք, ինչու՞... Որովհետև, երբ արթնացա և հիշեցի, թե իրականում որքան դատարկ է իմ քսակը, հոգիս խռովվեց: Արի խոսենք սրա մասին, քանզի ինչպես նավաստիներն են ասում, մենք երկուսս էլ նույն նավակի մեջ ենք: Երբ պատանի էինք, միասին գնացինք քրմերի մոտ՝ իմաստություն սովորելու: Երբ երիտասարդ էինք, միասին կիսում էինք մեր հաճույքները: Հասուն տարիքում էլ միշտ մտերիմ ընկերներ ենք եղել: Մենք մեր տեսակով ինքնաբավ ենք եղել: Մեզ բավարարում էր երկարատև աշխատանքը և ազատորեն ծախսում էինք մեր վաստակածը: Անցած տարիներին մենք շատ փող ենք վաստակել, բայց միայն երազել կարող ենք այն բարիքների մասին, որ գալիս են հարստությունից: Բա՛... Հիմա մենք ավելի՞ն ենք, քան հիմար ոչխարները: Ապրում ենք աշխարհի ամենահարուստ քաղաքում: Ճանապարհորդներն ասում են, որ իր հարստությամբ աշխարհում սրան հավասարը չկա և ոչ մի տեղ: Մեր շուրջբոլորը հարստություն է, բայց մենք ինքներս դրանից ոչինչ չունենք: Դու, իմ լավագույն ընկեր, կես կյանք ծանր աշխատելով, այժմ ունես դատարկ քսակ և ինձ ասում ես. «Կարո՞ղ եմ քեզնից պարտքով երկու շեկել վերցնել մինչև երեկո, երբ ազնվականները կսկսեն իրենց խնջույքը»: Եվ արդյո՞ք ես պատասխանում եմ. «Ահա իմ քսակը: Սրա պարունակությունը ես հաճույքով կկիսեմ քեզ հետ»: Ոչ, ես խոստովանում եմ, որ իմ քսակը նույնքան դատարկ է, որքան քոնը: Ի՞նչն է պատճառը... Ինչու՞ մենք չենք կարող ունենալ այնքան արծաթ ու ոսկի, որն ավելին կլինի, քան անհրաժեշտ է միայն ուտելու և հագնելու համար: Մտածի՛ր մեր որդիների մասին, - շարունակեց Բանսիրը, - մի՞թե նրանք էլ դատապարտված չեն՝ կրկնելու իրենց

հայրերի ճակատագիրը: Արդյո՞ք նրանք էլ, նրանց ընտանիքներն էլ, որդիներն էլ, որդիների ընտանիքներն էլ պիտի իրենց կյանքն ապրեն ոսկու և հարստության կողքին, բայց մեզ նման բավարարվեն միայն այծի կաթով ու հասարակ շիլայով:

-Մեր ընկերության այս ողջ ընթացքում դու երբեք այսպես չես խոսել, Բանսի՛ր, - շփոթված պատասխանեց Քոբբին:

-Նախկինում ես երբեք այդպես չեմ մտածել: Արևածագից մինչև մայրամուտ քրտնաջան աշխատել եմ՝ պատրաստելով լավագույն մարտակառքերը, և հույս փայփայել, որ մի օր Աստվածներն ի վերջո կգնահատեն իմ արածներն ու բարգավաճում կպարգևեն ինձ: Սակայն նրանք դա չարեցին: Վերջապես հասկացա, որ նրանք դա երբեք չեն անի: Ուստի իմ սիրտը տխուր է: Ուզում եմ հնարավորությունների տեր մարդ լինել: Ուզում եմ ունենալ հողեր, անասուններ, լավ հագուստ և շատ դրամ իմ քսակում: Եվ դրա համար պատրաստ եմ անխոնջ աշխատել մեջքիս ամբողջ ուժով, ձեռքերիս ամբողջ շնորհքով, մտքիս ողջ ճարպկությամբ, բայց ուզում եմ նաև, որ իմ ջանքերն առատորեն փոխհատուցվեն: Ի՞նչը մեզ հետ այն չէ… Կրկին հարցնում եմ քեզ. Ինչու՞ մեզ նույնպես հասանելի չեն այն բարիքները, որոնք այդքան առատ են շատ ոսկի ունեցողների համար:

-Ու՞ր էր, թե պատասխանն իմանայի, - ասաց Քոբբին, - Քեզանից ավելի լավ վիճակում չեմ ես: Իմ քնարով վաստակածը շատ արագ է սպառվում: Հաճախ ես ստիպված եմ ինչ-որ ելք գտնել, որպեսզի ընտանիքս սոված չմնա: Եվ ես երազում եմ մի այնպիսի մեծ քնար ունենալ, որի հնչյունները կարտահայտեն իմ միտքն ալեկոծող ողջ թախիծը: Երևի նման քնարն այնքան հուզիչ կհնչի, որ կգրավի թագավորի ուշադրությունը:

-Դու պետք է այդպիսի մի քնար ունենաս: Բաբելոնում ոչ ոք չի կարող այդ քնարն այնպես քաղցր հնչեցնել, որ ոչ միայն թագավորին, այլև Աստվածներին հաճելի լինի: Բայց ի՞նչ միջոցներով ես պատրաստվում այն ունենալ, երբ երկուսս էլ աղքատ ենք՝ ինչպես թագավորի ստրուկները: Լսի՛ր զանգերը, ահա և նրանք: - Նա ցույց տվեց կիսամերկ, քրտնակոխ ծանր տիկերով ջուր կրողների շարքերը, որոնք հաղթահարում էին գետից դեպի թագավորի այգիները բարձրացող նեղ ճանապարհը:

-Տե՛ս՝ ի՞նչ լավ կազմվածք ունի նրանց առաջնորդողը, - Քոբբին մատնացույց է անում առանց բեռի դիմացից քայլող մարդուն, ով զանգեր էր կրում, -պարզ երևում է, որ իր երկրում հարգված մարդ է:

-Նրանց մեջ շատերը լավ կազմվածք ունեն, - համաձայնում է Բանսիրը, - Մեզ նման բարձրահասակ շիկահերներ հյուսիսից, ծիծաղկոտ սևամորթներ հարավից, փոքրամարմին, թխամաշկ մարդիկ՝ հարևան երկրներից: Բոլորն էլ կողք կողքի քայլում են գետից

դեպի այգիներ, անընդհատ՝ օրեր, տարիներ շարունակ: Երջանկության ոչ մի ակնկալիք ապագայից: Քնելու համար՝ ծղոտե անկողիններ և ձավարի շիլա՝ ուտելու համար... Խղճում եմ նրանց, Քոբբի:

-Ես էլ եմ խղճում, սակայն քո ասածից պարզ երևում է, թե որքան քիչ ենք մենք տարբերվում նրանցից՝ չնայած ազատ քաղաքացիներ ենք համարվում:

-Եվ սա է ճշմարտությունը, Քոբբի, որքան էլ որ այն դառն է: Սակայն մենք չենք ցանկանում շարունակել ստրուկի կյանքով ապրել և այդպես տարիները գլորել իրար հետևից: Աշխատել, աշխատել, աշխատել և ոչինչի չհասնել:

-Գուցե չենք կարողանում բացահայտել հարստանալու գաղտնի՞քը, և պետք է սովորենք մյուսներից ու գործենք նրանց պե՞ս:

-Երևի այդտեղ մի գաղտնիք կա, որ մենք պետք է սովորենք նրանցից, - մտախոհ պատասխանեց Բանսիրը:

-Հենց այսօր, - միջամտեց Քոբբին, - պատահական տեսա մեր հին ընկեր Արկադին՝ իր ոսկեզօծ մարտակառքով: Ու պետք է նշեմ, որ նա հայացքը չփախցրեց իմ խղճուկ անձից, ինչպես շատերը կանեին նրա կարգավիճակում: Փոխարենը՝ ձեռքը թափահարեց այնպես, որ բոլորը կողքից տեսան, թե ինչպես է նա ողջույններ հղում և ընկերական ժպիտ շնորհում երաժիշտ Քոբբիին:

-Նա համարվում է Բաբելոնի ամենահարուստ մարդը, - մտածկոտ ասաց Բանսիրը

-Այնքա՞ն հարուստ մարդ, որ անգամ թագավորն է նրանից օգնություն խնդրում, երբ գանձարանը ոսկու կարիք է ունենում, - պատասխանեց Քոբբին:

-Այնքան հարուստ, - ընդհատեց Բանսիրը, - որ վախենում եմ, թե հանկարծ գիշերվա մթին հանդիպեմ նրան, ձեռքս կգցեմ նրա գեր քսակին:

-Հիմարություն, - առարկեց Քոբբին, - մարդու հարստությունը նրա քսակում չէ: Գեր քսակը շատ արագ է դատարկվում, եթե ոսկին անդադար չի հոսում նրա մեջ: Արկադը կայուն եկամուտ ունի, որը նրա քսակը կայուն կերպով լի է պահում՝ անկախ այն բանից, թե որքան շռայլ են ծախսերը:

-Մշտական եկամուտ. դա է գաղտնիքը, - բացականչեց Բանսիրը: -Ուզում եմ մշտական եկամուտ, որն անընդհատ կհոսի իմ քսակի մեջ՝ անկախ նրանից՝ ես նստած եմ պարսպին, թե ճանապարհորդում եմ հեռու երկրներում: Արկադը պետք է որ իմանա՝ ինչպես մշտական եկամուտ ապահովել: Կարծում եմ՝ նա հեշտությամբ կպարզաբանի դա իմ դանդաղկոտ ուղեղի համար:

-Վստահ եմ, որ նա սովորեցրել է դա իր որդուն՝ Նոմասիրին,-

ասաց Քոբբին: Մի՞թե նա չէր, ինչպես պանդոկում էին պատմում, որ գնաց Նինվե և առանց իր հոր օգնության՝ դարձավ այդ քաղաքի ամենահարուստ մարդկանցից մեկը:

-Քոբբի, դու ինձ մի շատ լավ միտք հուշեցիր: - Մի նոր լույս շողաց Բանսիրի աչքերում, - Ոչինչ չարժե խելացի խորհուրդ հարցնել հին լավ ընկերոջից, իսկ Արկադը միշտ այդպիսին է եղել: Ու կարևոր չէ, որ մեր քսակները դատարկ են, ինչպես բազեի՝ մեկ տարի առաջ լքած բույնը: Սա չպիտի մեզ հետ պահի: Մենք հոգնել ենք առատության մեջ աղքատ լինելուց: Մենք ուզում ենք հնարավորությունների տեր դառնալ: Արի՛ գնանք Արկադի մոտ և հարցնենք, թե ինչպե՞ս մենք էլ մշտական եկամուտ ստեղծենք մեզ համար:

-Քո խոսքը շատ ոգևորող է, Բանսի՛ր: Միտքս պարզվում է քո խոսքից: Դու ինձ օգնում ես գիտակցել, թե ինչու՞ մենք մինչ օրս չենք գտել հարստանալու միջոցը: Մենք ուղղակի չենք ձգտել դրան: Դու ջանասիրաբար աշխատել ու պատրաստել ես Բաբելոնի ամենաչքնաղ մարտակառքերը և այդ նպատակին դու ուղղել ես քո ամբողջ եռանդը: Դա է պատճառը, որ դու այդ արհեստում հաջողել ես: Ես ձգտել եմ լավ երաժիշտ լինել և նույնպես հասել եմ հաջողության:

Մենք հաջողության ենք հասել այն ամենում, ինչին ուղղել ենք մեր եռանդը, և Աստվածները մեզ չեն խոչընդոտել: Վերջապես մենք տեսանք լույսը, այնքան պայծառ, ինչպես ծագող արևն է: Դա մեզ կսովորեցնի ավելին, քան գիտենք, և մենք կհարստանանք: Նոր մտածողությամբ մենք կգտնենք մեր ձգտումները բավարարելու արժանավայել ուղիներ:

-Արի՛ հենց այսօր գնանք Արկադի մոտ, - պնդեց Բանսիրը: - Արի՛ մեզ հետ տանենք մեր մանկության բոլոր ընկերներին, ովքեր նույնպես նրա իմաստուն խորհուրդների կարիքն ունեն:

-Դու երբեք չես մոռանում ընկերներիդ, Բանսի՛ր: Դրա համար էլ այդքան շատ ընկերներ ունես: Քո ասածով կանենք: Հենց այսօր կգնանք և նրանց մեզ հետ կտանենք:

ԲԱԲԵԼՈՆԻ
ամենահարուստ մարդը

Հին Բաբելոնում մի շատ հարուստ մարդ էր ապրում, ում անունն Արկադ էր: Նրա հարստության հռչակը տարածված էր աշխարհով մեկ: Նա նաև հայտնի էր իր առատաձեռնությամբ: Շատ բարեգործություններ էր անում: Առատաձեռն էր իր ընտանիքի հանդեպ, բայց չնայած իր շռայլությանը՝ նրա եկամուտը գնալով շատանում էր:

Նրա մանկության ընկերներից ոմանք եկան նրա մոտ ու ասացին.

-Դու, Արկա՛դ, ավելի բախտավոր ես, քան մենք: Դու դարձել ես Բաբելոնի ամենահարուստ մարդը, մինչդեռ մենք պայքարում ենք օրվա հացի համար: Դու ուտում և հագնում ես ամենաընտիրը, մինչդեռ մենք հազիվ ենք պատշաճ հագցնում և կերակրում մեր ընտանիքները: Բայցևայնպես, ժամանակին մենք իրար հավասար էինք: Ունեինք նույն ուսուցիչը, խաղում էինք նույն խաղերը, և ո՛չ ուսման մեջ, ո՛չ խաղերում դու մեզանից առավել չէիր: Եվ հետո էլ առաքինությամբ ավելին չես եղել, քան մենք: Մեր դատողությամբ ո՛չ ավելի ջանասեր ես եղել և ո՛չ ավելի պարտաճանաչ, քան մենք: Ինչու՞ ուրեմն կյանքը վայելելու համար բախտն ընտրեց միայն քեզ և արհամարհեց մեզ,

մինչդեռ մենք հավասարապես արժանի էինք դրան:

Արկադը հակադարձեց.

-Եթե մեր երիտասարդ տարիներից մինչև հիմա դուք չեք հասել ավելիին, քան միայն ձեր գոյությունը պահելը, ապա դա նրանից է, որ կամ չեք սովորել փող կուտակելու և այն կառավարելու հիմունքները, կամ անուշադրության եք մատնել դրանք: Պատահաբար բախտի արժանանալը դաժան ճակատագիր է, որը երբեք ոչ ոքի հարատև երջանկություն չի բերել: Ճիշտ հակառակը՝ այն կործանել է նրանց, ում չվաստակված հարստություն է տվել: Նման դեպքերում ծախսելու անհագ ախորժակ է առաջանում, և շուտով նրանք մսխում են այդ ամենը՝ այդպես էլ չբավարարելով իրենց անվերջ մեծացող ձգտումները, որոնց համար այլևս միջոցներ չունեն: Որոշներն էլ, պատահաբար բախտի արժանանալով, դառնում են գծուծ՝ դողալով իրենց ունեցածի վրա, քանզի գիտեն, որ երբ այդ ամենը վերջանա, այլևս չեն կարողանա հետ բերել: Նրանք էլ ապրում են վախը սրտներում՝ սարսափելով գողերից, և ի վերջո, իրենք իրենց դատապարտում են դատարկ կամ առեղծվածային կյանքի: Հավանաբար կան նաև հազվադեպ բախտավորներ, ովքեր կարողանում են չվաստակած ոսկին ընդունել և ավելացնել՝ շարունակելով ապրել երջանիկ և բովանդակալից կյանքով: Բայց նման դեպքերն իրոք այնքան հազվադեպ են, որ անձամբ ես նրանց մասին միայն լսել եմ: Իսկ դուք հիշու՞մ եք մեկին, ով պատահաբար հարստացած լինի և այս ասածներիս չհամապատասխանի:

Ընկերներն ընդունեցին, որ, իսկապես, իրենց ճանաչած պատահաբար հարստացածները բոլորն էլ համապատասխանում են Արկադի ասածներին, և խնդրեցին նրան բացատրել, թե ինչպե՞ս կարողացավ այդպես հարստանալ, և Արկադը շարունակեց.

-Երբ երտասարդ էի, փորձում էի հասկանալ՝ ի՞նչն է երջանկություն ու բավարավածություն բերում, ու նկատեցի, որ հարստությունը մեծացնում է դրանց հասնելու հավանականությունը: Հարստությունն ուժ է, և դրանով շատ բաներ են հնարավոր դառնում: Կարելի է տունը շքեղ կահավորել, նավարկել ծովերով, ճաշակել ամենանըրբահամ ուտեստները: Կարելի է գնել ոսկի ու թանկարժեք քարեր և հսկա տաճարներ կառուցել Աստվածների համար: Մարդ կարող է անել այն ամենը և մի բան էլ ավելին, ինչ մտքով կանցնի ու կբերի բավարարվածություն և կջերմացնի նրա հոգին: Ու հենց ես հասկացա սա, որոշեցի, որ կյանքից պիտի վերցնեմ ինձ հասանելիք բաժինը: Չպիտի լինեմ նրանց նման, ովքեր, հեռու կանգնած, նայում ու նախանձում են, թե ինչպես են ուրիշները վայելում կյանքը: Ես ինձ

լավ չեմ զգա էժանագին հագուստով և չեմ համակերպվի աղքատության հետ: Ընդհակառակը, ես կլինեմ մեկը, ով լիարժեք կօգտըվի կյանքի բարիքներից: Ինքներդ էլ գիտեք, որ լինելով հասարակ վաճառականի որդի բազմանդամ ընտանիքից՝ ժառանգության որևէ հույս չունեի: Եվ ինչպես դուք անկեղծորեն նկատեցիք, չունենալով առանձնահատուկ օժտվածություն, ուժ և իմաստնություն՝ ես հասկացա, որ իմ նպատակներին հասնելու համար ինձանից կպահանջվի ժամանակ և ուսում: Ինչ վերաբերում է ժամանակին, կյանքը մեզ բոլորիս էլ դրանից առատորեն տալիս է: Ձեզանից յուրաքանչյուրն անիմաստ վատնել է իր այն ժամանակը, որն իրեն հարուստ կդարձներ: Երևի դուք էլ կընդունեք, որ հիմա չունեք ոչինչ, բացի ձեր հրաշալի ընտանիքներից, որոնցով կարող եք պարզապես հպարտանալ: Ինչ վերաբերում է ուսմանը՝ մի՞թե մեր ուսուցիչը մեզ չի սովորեցրել, որ գիտելիքը լինում է երկու տեսակ: Մեկն այն է, ինչ մենք սովորել ենք և գիտենք, իսկ մյուսը՝ այն, թե ինչպե՞ս հասկանանք՝ ի՞նչը չգիտենք: Ուստի որոշեցի նախ պարզել, թե ինչպե՞ս կարող է մարդը հարստանալ, և պարզելուց հետո այդ գիտելիքի վրա հենվելով՝ հետևողականորեն շարժվել դեպի նպատակը: Չէ՞ որ արժե վայելել կյանքն այս շողացող արևի տակ, քանզի խավար օրեր դեռ շատ կլինեն, երբ հոգիների աշխարհ գնալու ժամանակը գա: Ես գրագրի աշխատանք գտա և ամեն օր ջանասիրաբար փորագրում էի կավե սալիկների վրա: Շաբաթ շաբաթի, ամիս ամսվա հետևից էր անցնում, սակայն իմ աշխատածը չէր երևում: Ուտելիք, հագուստ, նվիրատվություն Աստվածներին և այլ բաներ, որոնց վրա մսխվում էր իմ ամբողջ եկամուտը: Բայց ես վճռական էի տրամադրված: Եվ մի օր Վարպետի տուն եկավ Ալգամիշը, որ պարտատու էր, ու պատվիրեց իններորդ օրենքի կրկնօրինակը և ասաց, որ եթե ես այն երկու օրում փորագրեմ, ինձ երկու պղնձադրամ կտա: Սկսեցի եռանդով աշխատել, բայց օրենքը շատ երկար էր, ու երբ Ալգամիշը վերադարձավ, ես այն դեռ չէի ավարտել: Նա զայրացավ, ու եթե ես նրա ստրուկը լինեի, հաստատ կծեծեր ինձ: Բայց ես վստահ էի, որ Վարպետը դա թույլ չէր տա, և համարձակորեն ասացի. «Ալգամիշ, դու շատ հարուստ մարդ ես: Ասա՛ ինձ, թե ինչպե՞ս կարող եմ ես էլ հարստանալ, ու ես ամբողջ գիշեր կփորագրեմ քո պատվերը, և երբ արևը ծագի, այն պատրաստ կլինի»: Նա ժպտաց ու պատասխանեց. «Դու շիտակ տղա ես երևում, և ես համաձայն եմ քո պայմանին»: Ես ամբողջ գիշեր ջանասիրաբար փորագրեցի՝ չնայած մեջքս ցավում էր, պատրույգի հոտից գլխացավ ունեի, աչքերս հազիվ էին տեսնում: Ու երբ արևածագին նա եկավ, սալիկնե-

որը պատրաստ էին: «Դե՛, պատմի՛ր ինձ այն, ինչ խոստացել էիր», - ասացի ես: «Դու կատարեցիր մեր պայմանի քո բաժինը, որդի՛ս», - բարեհոգաբար ասաց նա, - «Հիմա իմ հերթն է: Ես պատրաստ եմ քեզ հետ կիսվել իմ գիտելիքներով, քանզի ես ծերանում եմ, իսկ ծեր լեզուն սիրում է խոսել: Ու երբ երիտասարդը ծերի մոտ է գալիս խորհրդի համար, նա ստանում է տարիների իմաստությունը: Շատ հաճախ երիտասարդը կարծում է, որ ծերի իմաստությունը հնացած է, ու դրանից օգուտ չկա: Բայց հիշի՛ր սա. արևը, որ շողում է այսօր, նույն արևն է, որ շողում էր, երբ ծնվեց քո հայրը և կշողա, երբ քո թոռն անցնի խավարի աշխարհ: Ձահելի միտքը վառ ասուպ է, որ սլանում, անցնում է երկնակամարով, մինչդեռ տարիների իմաստությունն անշարժ աստղերն են, որ հավերժ անփոփոխ են և շողալով օգնում են նավաստուն պահել նավի ուղղությունը: Լավ ականջ դի՛ր իմ խոսքին, քանզի, եթե խորությամբ չընկալես ճշմարտությունը, որը պատմելու եմ քեզ, դու քո գիշերվա աշխատանքն անիմաստ և զուր վատնում կհամարես»: Ապա նա նայեց ինձ խորաթափանց հայացքով ու ցածր, ազդեցիկ ձայնով ասաց. «Ես գտա հարստության ճանապարհը, երբ գիտակցեցի, որ իմ աշխատած փողի մի մասը կարող եմ պահել ինձ համար: Եվ նույնը կանես դու»: Ապա նա շարունակեց իր թափանցող հայացքով նայել ինձ, բայց էլ ոչ մի բառ չավելացրեց: «Այդքա՞ն բան», - ասացի ես: «Այդքանը բավարար էր, որ հովվի սիրտը վերածվի պարտատուի սրտի», - պատասխանեց նա: «Բայց չէ՞ որ ես արդեն տերն եմ իմ ամբողջ եկամտի», - շարունակեցի պնդել ես: «Դա միայն թվում է այդպես», - պատասխանեց նա, - «Արդյոք դու չես վճարու՞մ դերձակին հագուսի համար: Դու չես վճարու՞մ կոշկակարին կոշիկի համար: Դու չես վճարու՞մ ուտելիքիդ համար: Դու կարո՞ղ ես Բաբելոնում ապրել՝ առանց փող ծախսելու: Ի՞նչ կարող ես ինձ ցույց տալ, որ մնացել է քո անցած ամսվա եկամտից… կամ ի՞նչ՝ անցած ողջ տարվա եկամտից: Հիմա՛ր: Դու վճարել ես բոլորին, բացի քեզանից: Տխմա՛ր, դու աշխատում ես ուրիշների համար: Իսկ ինչո՞վ ես դու տարբերվում ստրուկից, որ աշխատում է իր տիրոջ համար ու փոխարենը ստանում սնունդ և որոշ հագուստ: Եթե դու քեզ պահեիր քո եկամուտի տասը տոկոսն անցած տասը տարիների ընթացքում, հիմա արդեն որքա՞ն փողի տեր կլինեիր»: Ես դեռ հաշվելու ընդունակությունս չէի կորցրել, ուստի արագ պատասխանեցի, - «Այնքան, որքան մեկ տարում եմ աշխատում»: «Դու միայն ճշմարտության կեսն ես ասում»: - առարկեց նա, - «Ամեն մի ոսկին, որ դու ձեռք ես բերել, դառնում է ծառա և սկսում է աշխատել քեզ համար: Ամեն մի պղնձադրամ, որ աշխատում է այդ ոսկին, նրա

պտուղն է, որն էլ իր հերթին կարող է աշխատել քեզ համար: Եթե ուզում ես հարստանալ, ապա քո խնայողությունները պիտի վաստակեն քեզ համար, և դրանց պտուղները նույնպես պիտի վաստակեն, որպեսզի ապահովեն կայուն, առատ եկամուտ, որին դու այդպես ձգտում ես: Երևի թե այս պահին քեզ խաբված ես համարում ամբողջ գիշերվա քո աշխատանքի համեմատ», - շարունակեց նա, - «բայց ես քեզ հազարապատիկ ավելի եմ վճարում, եթե իրոք խելացի ես ու ի վիճակի ես ընկալել խոսքերիս արժեքը: Քո վաստակածի մի մասը պիտի խնայես քեզ համար: Այն մեկ տասներորդից պակաս չպետք է լինի՝ անկախ նրանից, թե որքան քիչ ես վաստակում: Այն կարող է լինել մեկ տասներորդից այնքան շատ, որքան դու կարող ես քեզ թույլ տալ: Նախ՝ վճարիր ինքդ քեզ: Դերձակին և կոշկակարին մի՛ վճարիր ավելին, քան մնացել է քեզ մոտ մեկ տասներորդը վերցնելուց հետո: Պլանավորի՛ր այնպես, որ քո սնունդը, հագուստը, բարեգործութունը, Աստվածներին զոհաբերությունը և մնացած ծախսերդ չանցնեն այդ գումարից: Հարստությունը ծառի պես աճում է փոքրիկ սերմից: Առաջին խնայված պղնձադրամը կլինի այն սերմը, որից էլ կաճի քո հարստության ծառը: Որքան շուտ ցանես սերմը, այնքան շուտ կաճի ծառդ: Որքան լավ ծառդ սնուցես ու ջրես քո հոգատարությամբ և կանոնավոր շարունակական ներդրումներով, այնքան առատ բերք ու հաճելի ստվեր կտա այն, որի տակ կարող ես ապահով նստել և վայելել»: - Սա ասելով՝ նա վեր կացավ, վերցրեց իր սալիկներն ու գնաց: Ես երկար մտածեցի նրա ասածի մասին, և այն ինձ իրատեսական թվաց: Այսպիսով, որոշեցի փորձել: Իմ ամեն մի վարձատրությունից տասը պղնձադրամից մեկը պահում էի ինձ: Եվ որքան էլ տարօրինակ թվա, իմ կյանքի որակը դրանից ոչ մի կերպ չտուժեց: Ես գրեթե տարբերություն չնկատեցի: Բայց խնայողություններիս աճին զուգահեռ՝ մեծանում էր նաև փյունիկիացի վաճառականների բերած մի որևէ լավ ապրանքի վրա դրանք ծախսելու գայթակղությունը: Լավ է, որ խոհեմություն ունեցա՝ դրան չտրվելու: Ալգամիշի գնալուց տասներկու ամիս էր անցել, երբ նա կրկին հայտնվեց ու ասաց. «Որդիս, արդյոք անցած տարվա քո վաստակածի առնվազն մեկ տասներորդը հավատարմորեն վճարե՞լ ես ինքդ քեզ»: «Այո, վարպետ», - հպարտորեն պատասխանեցի ես: «Լավ է…», - պայծառացավ նա, - «Իսկ ինչպե՞ս ես վարվել հավաքված գումարի հետ»: «Ես այն տվել եմ Ազմուրին՝աղյուսագործին, ով ինձ ասաց, որ նավարկելու է դեպի Տյուրոս և ինձ համար փյունիկիացիներից հազվագյուտ զարդեր կգնի: Երբ նա վերադառնա, մենք կվաճառենք դրանք բարձր գներով և կկիսենք մեր շահույ-

թը»: «Ամեն անգետ պիտի իր դասն առնի», - մրթմրթաց նա: - «Բայց ինչու՞ զարդերի հարցում վստահել աղյուսագործին: Դու հացթուխին կհարցնե՞ր աստղերի մասին… Իհարկե՝ ոչ: Եթե խելք ունենայիր, կգնայիր աստղագետի մոտ: Քո խնայողությունները կորած են, երիտասարդ: Հազիվ էր ծիլը ծառ դառնում, իսկ դու այն արմատախիլ արեցիր: Բայց, ոչինչ, աճեցրու նորը: Կրկին փորձիր: Եվ հաջորդ անգամ, եթե զարդեղենի մասին խորհրդի կարիք ունենաս, ապա գնա զարդերի վաճառականի մոտ: Եթե քեզ գիտելիք է պետք ոչխարների մասին, գնա հովվի մոտ: Խորհուրդն անվճար տրվող մի բան է, բայց վերցնելիս պիտի ուշադիր լենես, որ արժանահավատ խորհուրդ վերցնես: Ով իր խնայողությունների մասին խորհուրդ է վերցնում անփորձ մարդուց, նա իր խնայողություններով էլ վճարում է՝ դրա սխալ լինելն ապացուցելու համար»: Սա ասելով՝ նա հեռացավ: Եվ եղավ ճիշտ այնպես, ինչպես Ալգամիշն ասել էր: Խաբեբա փյունիկիացիները թանկարժեք քարերի փոխարեն գույնզգույն ապակիներ էին վաճառել Ազմիրին, որոնք իրականում ոչինչ չարժեին: Սակայն ես հետևեցի Ալգամիշի խորհրդին և նորից շարունակեցի խնայել իմ եկամտի մեկ տասներորդը: Ու քանզի ես արդեն սովորություն էի ձեռք բերել, դա արդեն ինձ համար դժվար չէր: Տասներկու ամիս անց Ալգամիշը կրկին եկավ մեր արհեստանոց ու դիմեց ինձ. «Ի՞նչ առաջընթաց ունես մեր անցած հանդիպումից ի վեր…»: «Ես կանոնավոր վճարել եմ ինքս ինձ», - պատասխանեցի ես, - «ու խնայողություններս վստահել եմ զինագործ Ագգերին՝ բրոնզ գնելու համար, և ամեն չորրորդ ամսին նա ինձ տոկոս է վճարում»: «Դա լավ է: Իսկ ինչպե՞ս ես վարվում տոկոսների հետ…»: «Վայելում եմ մեղր, լավ գինի ու անուշահամ թխվածքներ: Գնել եմ նաև մի կարմիր թիկնոց ինձ համար, և պատրաստվում եմ գնել մի մատղաշ ջորի, որպեսզի ոտքով չշրջեմ»: Ի պատասխան՝ Ալգամիշը ծիծաղեց. «Դու ուտում ես քո խնայողությունների պտուղները. այդ դեպքում ինչպե՞ս ես ակնկալում, որ դրանք քեզ համար կաշխատեն: Եվ ինչպե՞ս պիտի այդ պտուղների պտուղներն էլ աշխատեն քեզ համար: Նախ՝ ստեղծիր ոսկե ծառաների զորեղ բանակ և միայն դրանից հետո կկարողանաս առանց զղջումի վայելել դրանց պտուղները», - այսպես ասելով՝ նա հեռացավ: Երկու տարի ես նրան չտեսա, և երբ նա կրկին հայտնվեց, նկատեցի, որ կնճռոտվել էր, իսկ աչքերն ասես խամրել էին. նա շատ էր ծերացել: Եվ նա հարցրեց ինձ. «Արկա՛դ, հաջողվե՞ց քեզ հասնել հարստության, որին դու այդքան ձգտում էիր»: Ես պատասխանեցի. «Դեռևս ոչ այն ամենին, ինչին ձգտում էի, բայց իմ խնայողությունները հիմա ավելի

շատ են վաստակում, և դրանց պտուղները նույնպես ավելի շատ են վաստակում»: «Իսկ դու դեռ խորհուրդներ վերցնու՞մ ես աղյուսագործներից…»: «Աղյուսագործության մասին նրանք լավ խորհուրդներ են տալիս», - պատասխանեցի ես: «Արկա՛դ», - շարունակեց նա, - «դու քո դասերը լավ ես յուրացրել: Սկզբում դու սովորեցիր ապրել ավելի քիչ գումարով, քան վաստակում ես: Հետո սովորեցիր խորհուրդ հարցնել նրանցից, ովքեր այդ հարցերում փորձ ունեն: Եվ վերջապես սովորեցիր ստիպել ոսկուն, որ աշխատի քեզ համար: Դու սովորեցիր կուտակել փողը, պահպանել և կառավարել այն: Ուստի դու հիմա արժանի ես պատասխանատու պաշտոնի: Ես ծերանում եմ: Իմ որդիները միայն ծախսել գիտեն և չեն մտածում վաստակելու մասին: Իմ շահերը մեծ են, և ես լուրջ մտավախություն ունեմ, որ այլևս ի վիճակի չեմ լինի այդ ամենին պատշաճ հետևել: Եթե դու գնաս Նիպպուր և այնտեղ հետևես իմ կալվածքներին, ես քեզ իմ գործընկերը կդարձնեմ, և դու բաժին կունենաս իմ կարողությունից»: Այսպիսով, ես գնացի Նիպպուր ու սկսեցի կառավարել նրա կալվածքները, որոնք շատ ընդարձակ էին: Եվ քանզի ես շատ հավակնոտ էի ու տիրապետում էի հարստություն ստեղծելու երեք կանոններին, ապա կարողացա բարձրացնել նրա կալվածքների արժեքը: Այդպիսով, ես լավ բարգավաճեցի, ու երբ Ալգամիշի հոգին տեղափոխվեց խավարի աշխարհ, նրա կտակի համաձայն՝ ես նրա ունեցվածքից ստացա իմ բաժինը:

Այսպես խոսեց Արկադը և երբ ավարտեց իր պատմությունը, նրա ընկերներից մեկն ասաց.

-Արկադ, դու, անշուշտ, բախտավոր ես, որ Ալգամիշը քեզ ժառանգության արժանացրեց:

-Բախտավոր եմ միայն այնքանով, որ հարստանալու ձգտումն իմ մեջ ծագեց նախքան Ալգամիշին հանդիպելը: Միթե՞ չորս տարիների ընթացքում ես չապացուցեցի իմ անսահման վճռականությունը՝ խնայելով իմ ողջ վաստակի մեկ տասներորդը: Արդյո՞ք դուք բախտավոր կհամարեք ձկնորսին, ով տարիներ շարունակ ժամանակ ու եռադ չի խնայել՝ սովորելու ձկնորսության գաղտնիքները, ուսումնասիրելով ձկներին՝ կարողացել է քամու ամեն մի փոփոխության հետ ձկներով լցնել իր ցանցերը: Հաջողությունը քմահաճ աստվածուհի է, որը երբեք ժամանակ չի վատնում նրանց վրա, ովքեր անպատրաստ են:

-Դու հզոր կամքի ուժ ունես, Արկադ, որ չնայած կորցրեցիր մեկ տարվա խնայողություններդ՝ շարունակեցիր սկսածդ գործը: Եվ հենց դրանով դու յուրահատուկ մարդ ես, - խոսեց մյուսը:

-Կամքի ու՞ժ,- հակադարձեց Արկադը, - Ինչպիսի՜ անհեթեթություն… Կարծու՞մ ես՝ միայն կամքի ուժով կարելի է բարձրացնել այն բեռը, որն ուղտը չի՜ կարող տանել, կամ քաշել բեռը, որը եզը չի՜ կարող քաշել: Կամքի ուժն ընդամենը նպատակին հասնելու ճանապարհից չշեղվելու անխոնջ ձգտումն է: Եթե ես նպատակ եմ դրել իմ առջև, անկախ դրա կարևորությունից՝ ես պետք է հասնեմ դրան: Ուրիշ ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես պատրաստ եմ լուրջ գործեր նախաձեռնել: Եթե այնպես պատահի՝ որոշեմ, որ հարյուր օր շարունակ կամրջով քաղաք գնալիս պիտի քարի մի կտոր գետը գցեմ, ապա ես դա կանեմ: Եթե յոթերորդ օրն անցնեմ կամուրջն ու մոռանամ քարը գցել, ինքս ինձ չեմ ասի, թե՝ ոչինչ, վաղը երկու հատ կգցեմ, այլ հետ կգնամ, կգցեմ քարն ու նոր կշարունակեմ իմ ճանապարհը: Ոչ էլ քսաներորդ օրը կասեմ՝ Արկադ, անօգուտ բանով ես զբաղված: Ինչի՞ ես հասնելու՝ օրական մի քար գցելով: Միանգամից մի բուռ գցիր ու վերջ տուր: Ոչ, ես ինձ նման բան ո՛չ կասեմ ու ո՛չ էլ կանեմ: Երբ ես իմ առջև առաջադրանք եմ դնում, ես այն ավարտին եմ հասցնում: Դրա համար էլ ես իմ առջև չեմ դնում անհասանելի կամ անհեթեթ նպատակներ, քանզի ես շատ եմ գնահատում իմ ազատ ժամանակը:

Ապա խոսեց մյուս ընկերը.

-Եթե այն, ինչ դու ասում ես, ճշմարիտ է ու խելամիտ, և իրոք այդքան հեշտ է դրան հետևելն ու հասնելը, ապա բոլորն էլ դա կանեին, և արդյունքում բավարար հարստություն չէր լինի, որ հերիքեր բոլորին:

-Հարստությունն աճում է այնտեղ, որտեղ մարդը ջանք է թափում, - պատասխանեց Արկադը, - երբ հարուստն իր համար պալատ է կառուցում, արդյո՞ք նրա ծախսած ոսկին անհետանում է: Ո՛չ: Դրանից բաժին ունեն և՛ աղյուսագործը, և՛ բանվորը, և՛ վարպետը: Ամեն ոք, ով աշխատում է տան վրա, այդ ոսկուց բաժին ունի: Ու երբ պալատի կառուցումն ավարտվում է, արդյո՞ք այն չարժե այնքան, որքան ծախսվել է, եթե ոչ՝ ավելին: Իսկ հողը, որի վրա այն կառուցվե՞ց. մի՞թե դրա գինը չբարձրացավ կառուցված պալատի շնորհիվ: Եվ դրան հարակից հողերն արդյո՞ք ավելի մեծ արժեք ձեռք չեն բերելու պալատի շնորհիվ: Հարստությունն ասես հրաշքով է աճում: Չկա մեկը, ով կարող է ըմբռնել դրա սահմանները: Արդյո՞ք փյունիկիացիներն ամայի ափերում չքնաղ քաղաքներ չեն կառուցել այն միջոցներով, որոնք գալիս էին նավերով առևտրից:

-Այդ դեպքում ի՞նչ խորհուրդ կտաս մեզ, որ մենք էլ հարստանանք, - հարցրեց ընկերներից մեկը, - տարիներն անցել են, իսկ

մենք արդեն երիտասարդ չենք և չունենք որևէ խնայողություն:

-Խորհուրդ կտամ՝ օգտվեք Ալգամիշի իմաստությունից և ինքներդ ձեզ խոստանաք. «Այսուհետ իմ եկամտի մեկ տասներորդը պահելու եմ ինձ»: Ասեք այս խոսքերն առավոտյան արթնանալիս, ասեք կեսօրին, երեկոյան, ամեն օր, ամեն ժամի, այնքան, որ այս բառերը հառնեն ձեր առջև այնպես, ասես դրանք հրե տառերով գրված են երկնքում: Ներշնչվեք այս գաղափարով: Լցվեք այս մտքով: Ապա ինքներդ ձեզ համար սահմանեք այն չափը, որը խելամիտ է թվում ձեզ: Թող այն լինի ոչ պակաս, քան ձեր եկամուտի մեկ տասներորդը, և մի կողմ դրեք: Եթե անհրաժեշտ է, ձեր այլ ծախսերի համար էլ նույն կերպ վարվեք, բայց առաջին հերթին մի կողմ դրեք խնայողության համար նախատեսվածը: Շուտով կունենաք այն հաճելի զգացողությունը, որ տիրապետում եք մի, թեկուզ առայժմ փոքրիկ հարստության, որի տերը միայն ու միայն դուք եք: Եվ որքան այն մեծանա, այնքան ավելի ու ավելի կքաջալերի ձեզ: Կյանքի մի նոր բերկրանք կզգաք: Ավելի մեծ եռանդով ու ջանասիրությամբ կսկսեք վաստակել: Կոգևորվեք այն մտքից, որ ձեր աճող եկամուտները նշանակում են ավելի շատ տոկոսներ, որոնք ձեզ եք պահելու: Ապա սովորեք խնայողություններն աշխատեցնել ձեզ համար: Թող դրանք դառնան ձեր ծառաները: Թող որ դրանց պտուղները և պտուղների պտուղները նույնպես աշխատեն ձեզ համար: Ապագայի համար եկամուտ ապահովեք: Նայեք տարեցներին և հիշեք, որ վաղ թե ուշ դուք էլ եք ծերանալու: Ուստի ներդրեք ձեր խնայողությունները շատ զգուշորեն, որպեսզի դրանք չկորցնեք: Մեծ տոկոսներն անսիրտ Սիրենաներ են, որոնք երգում են, սակայն սառնասրտորեն վրեժխնդիր են լինում՝ կործանման ու մոռացության մատնելով: Ապահովագրեք ձեր ընտանիքները կարիքի մեջ հայտնվելուց, եթե անսպասելիորեն Աստվածներն իրենց մոտ կանչեն ձեզ: Նման դեպքերի համար միշտ էլ կարելի է այնպիսի փաստաթղթեր կազմել, որ ընտանիքը որոշակի պարբերականությամբ կայուն եկամուտ ունենա: Խորհրդակցեք իմաստուն մարդկանց հետ: Խորհուրդ խնդրեք այն մարդկանցից, ովքեր ամեն օր գործ ունեն փողի հետ: Այդպես նրանք հետ կպահեն ձեզ այն սխալներից, որ արեցի ես՝ իմ դրամն աղյուսագործ Ազմուրին տրամադրելով: Փոքր, բայց ապահով եկամուտը շատ ավելի ցանկալի է, քան ռիսկը: Վայելեք կյանքը, քանի դեռ այստեղ եք: Շատ մի՛ լարվեք՝ փորձելով ավելին խնայել: Եթե ձեր վաստակածի մեկ տասներորդն այնքան է, որից ավելին խնայելու համար պիտի գերլարվեք, ապա բավարարվեք այդքանով: Մեկ տասներորդով էլ կարող եք շատ բա-

նի հասնել: Ապրեք ձեր եկամուտին համապատասխան, և թույլ մի՛ տվեք ձեզ՝ վերածվելու ժլատ մարդու, ով վախենում է փող ծախսել: Կյանքը հրաշալի է, լի բարիքներով, որոնք կարելի է վայելել:

Նրա ընկերները շնորհակալություն հայտնեցին և հեռացան: Ոմանք լուռ մնացին, քանզի չունեին այդքան մտքի թռիչք՝ ասվածի խորությունն ընկալելու համար: Ոմանք էլ հեգնանքով մտածեցին, թե այդքան խոսելու փոխարեն նման հարուստ մարդն ուղղակի պետք է կիսվեր իր հին ընկերների հետ, որոնց բախտը չէր ժպտացել: Բայց կային նաև այնպիսիք, որոնց աչքերում մի նոր լույս նշմարվեց: Նրանք հասկացան, որ Ալգամիշն ամեն անգամ վերադառնում էր գրագիրների մոտ, քանի որ հետևում էր մեկին, ով խավարից դեպի լույս տանող ճանապարհն էր ընտրել: Եվ երբ այդ մարդը գտավ լույսը, նրա տեղն արդեն սպասում էր իրեն: Ոչ ոք չէր կարող գրավել այդ տեղը, քանի դեռ պատրաստ չէր այդ հնարավորությանը և ինքն իր համար չէր մշակել դրա սեփական ըմբռնումն ու ընկալումը:

Այս վերջինները նրանք էին, ովքեր հաջորդ տարիներին շարունակեցին պարբերաբար այցելել Արկադին, ով նրանց հաճույքով էր ընդունում: Նա խորհրդակցում էր նրանց հետ, կիսվում իր իմաստությամբ, ինչպես հատուկ է կյանքի մեծ փորձ ունեցող մարդկանց: Եվ օգնում էր նրանց խնայողություններն ապահով ներդնել այնպես, որ կայուն տոկոսներ ունենան, չսնանկանան և ոչ էլ անեն ներդրումներ, որոնք շահույթ չեն բերում:

Այդ մարդկանց կյանքում այդ պահը բեկումնային էր. նրանք հասկացան ճշմարտությունը, որը Ալգամիշից անցել էր Արկադին և Արկադից էլ՝ իրենց:

Վաստակածիդ մի մասը կարող ես խնայել քեզ համար:

ՅՈԹ ՄԻՋՈՑ՝
հարստանալու համար

Բաբելոնի փառքը շարունակվում է: Դարերի խորքից մեզ է հասել Բաբելոնի հռչակը՝ որպես ամենահարուստը բոլոր քաղաքներից և ամենահայտնին՝ իր անհավանական գանձերով:

Բայց դա միշտ չէր այդպես: Բաբելոնի հարստությունը նրա ժողովրդի իմաստնության արդյունք էր: Նախևառաջ՝ նրանք պետք է սովորեին հարստանալ:

Երբ բարեգութ արքա Սարգոնն իր թշնամի էլամացիներին հաղթելուց հետո վերադարձավ Բաբելոն, նա բախվեց լրջագույն իրավիճակի: Թագավորի խորհրդականն այսպես ներկայացրեց դրությունը.

-Ձերդ Գերազանցություն, դուք երկար տարիներ հզոր ոռոգման համակարգերի, Աստվածներին նվիրված հոյակապ տաճարների կառուցմամբ՝ կարողացաք բարգավաճում և առատություն պարգևել մեր ժողովրդին, սակայն հիմա, երբ այդ աշխատանքներն ավարտված են, մարդիկ մնացել են՝ առանց գոյատևման միջոցների: Բանվորներն աշխատանք չունեն, վաճառականները գրեթե գնորդներ չունեն, գյուղացին չի կարողանում վաճառել իր արտադրանքը: Մարդիկ բավարար դրամ չունեն՝ սնունդ գնելու համար:

-Բայց ու՞ր կորավ այն ողջ ոսկին, որ մենք ծախսեցինք այս հսկայածավալ բարեփոխումների վրա, - հարցրեց թագավորը:

-Սարսափելի է մտածել, - պատասխանեց խորհրդականը, - բայց կարծում եմ՝ ամբողջ հարստությունը հոսեց քաղաքի մի խումբ ամենահարուստ մարդկանց գրպանները: Փողը մարդկանց մատների արանքով այնպես արագ մաղվեց, ինչպես այծի կաթը՝ քամիչի միջով: Այժմ, երբ ոսկու հոսքը դադարել է, մարդիկ մնացել են՝ առանց որևէ եկամտի աղբյուրի:

Արքան մի պահ մտքերի մեջ ընկավ, ապա հարցրեց.

-Ինչպե՞ս պատահեց, որ ողջ ոսկին կուտակվեց այդքան փոքրաթիվ մարդկանց ձեռքում:

-Որովհետև նրանք գիտեն, թե ինչպես է պետք հարստություն կուտակել, - պատասխանեց խորհրդականը: - Չի կարելի հաջողության հասած մարդուն դատապարտել միայն այն բանի համար, որ նա գիտի դրա ճանապարհը: Ոչ էլ կարելի է դատարանի միջոցով վերցնել մեկի արդար վաստակը և տալ մյուսին, որն ունակ չէ վաստակելու:

-Այդ դեպքում ինչու՞, - հարցրեց թագավորը, - Ինչու՞ մարդիկ չեն կարող սովորել ոսկի կուտակել և դառնալ ավելի հարուստ ու բարեկեցիկ:

-Դա հնարավոր է, Ձերդ Գերազանցություն, բայց ո՞վ կարող է սովորեցնել նրանց: Անշուշտ՝ ոչ քրմերը, քանզի փող ստեղծելու համար անհրաժեշտ գիտելիքներ նրանք էլ չունեն:

-Իսկ մեր քաղաքում ո՞վ ամենալավը գիտի հարստանալու ճանապարհը,- հարցրեց թագավորը:

-Պատասխանը հենց հարցի մեջ է, Ձերդ Մեծություն: Ո՞վ է Բաբելոնում կուտակել ամենամեծ հարստությունը:

-Լավ է ասված, իմ իմաստուն խորհրդական: Դա Արկադն է: Նա է Բաբելոնի ամենահարուստ մարդը: Վաղն իսկ բե՛ր նրան ինձ մոտ:

Հաջորդ օրը, ինչպես արքան էր պատվիրել, Արկադը ներկայացավ նրան սլացիկ և բարեկազմ՝ չնայած իր յոթանասուն տարիներին:

-Արկա՛դ, - խոսեց թագավորը, - ճի՞շտ է, որ դու Բաբելոնի ամենահարուստ մարդն ես:

-Այդպես են ասում, Ձերդ Մեծություն, և ոչ ոք չի ժխտի դա:

-Ինչպե՞ս դու կարողացար այսպես հարստանալ:

-Օգտվելով այն նույն հնարավորություններից, որ մեր լավ քաղաքը մեզ բոլորիս հավասար է ընձեռում:

-Իսկ դու սկզբում ոչինչ չունեի՞ր…

-Միայն հարստանալու մեծ ձգտում: Ուրիշ ոչինչ:

-Արկա՛դ, - շարունակեց թագավորը, - մեր քաղաքը շատ ծանր դրության մեջ է, որովհետև միայն մի քանիսը գիտեն՝ ինչպես հարստություն կուտակել, և մենաշնորհել են այն, մինչդեռ քաղաքացիների մեծ մասը չգիտի վաստակել ու կառավարել իր վաստակած ոսկին: Իմ ցանկությունն է, որ Բաբելոնը լինի աշխարհի ամենահարուստ քաղաքը: Ուստի այն պետք է ունենա շատ հարուստ քաղաքացիներ, և մենք պետք է սովորեցնենք բոլորին հարստություն կուտակելու արվեստը: Ասա՛ ինձ Արկադ, կա արդյո՞ք հարստանալու գաղտնիք: Կարելի՞ է այն սովորեցնել մարդկանց:

-Իհարկե, Ձե՛րդ Մեծություն, դա հնարավոր է: Այն, ինչ գիտի մեկը, միշտ էլ կարելի է սովորեցնել մյուսներին:

Արքայի աչքերը փայլեցին:

-Արկա՛դ, դու ասում ես այն, ինչը ես ցանկանում եմ լսել: Ժամանակ կտրամադրե՞ս այս մեծ գործի համար: Դու կսովորեցնե՞ս այս ամենը մի խումբ ուսուցիչների, որպեսզի նրանք էլ իրենց հերթին գնան ու սովորեցնեն մյուսներին, մինչև մեր քաղաքում կլինեն բավականաչափ մարդիկ, ովքեր կարող են այս գիտելիքները փոխանցել ցանկացած արժանավորի:

Արկադը խոնարհվեց ու ասաց.

-Ես՝ ձեր խոնարհ ծառան, պատրաստ եմ կատարել ձեր բոլոր հրահանգները: Այն բոլոր գիտելիքները, որոնց ես տիրապետում եմ, պատրաստ եմ փոխանցել մարդկանց՝ ի բարօրություն նրանց և ի փառս իմ Արքայի: Թող որ հարգարժան խորհրդականը հարյուր մարդու համար լսարան կազմակերպի, ու ես նրանց կտամ յոթ սպեղանի, որոնք գիրացրել են իմ քսակը, որից դատարկը չկար ողջ Բաբելոնում:

Երկու շաբաթ անց, արքայի հրամանի համաձայն, հարյուր ընտրյալներ հավաքվեցին Ուսման տաճարի լայնարձակ դահլիճում, որտեղ նրանք, կիսաշրջան կազմած, նստեցին գույնզգույն նստարանների վրա: Արկադը նստեց նրանց դիմաց՝ փոքրիկ սեղանի մոտ, որի վրա դրված սրբազան լամպը խորհրդավոր ու հաճելի բույր էր արձակում:

-Ահա Բաբելոնի ամենահարուստ մարդը, - Արկադի հայտնվելուն պես շշնջաց ուսանողներից մեկը՝ կողքի նստածին բոթելով, - մեզ նման սովորական մարդ է երևում:

-Որպես մեր Մեծ Արքայի խոնարհ ծառա, - սկսեց Արկադը, - կանգնած եմ ահա ձեր առջև՝ կատարելու նրա կամքը. քանզի մի ժամանակ ես էլ ձեզ նման աղքատ էի ու ձգտում էի հարստության: Ես գտա հարստանալու գաղտնիքը, և հիմա այն պիտի փոխանցեմ ձեզ: Ես սկսեցի իմ ճանապարհը համեստ մեկնակետից: Ես չունեի

ոչ մի առավելություն Բաբելոնի որևէ քաղաքացու համեմատ: Իմ քսակը դարձավ իմ առաջին գանձարանը: Ես ատում էի իմ քսակի դատարկությունը: Ուզում էի, որ այն կլորիկ ու լիքը լիներ և զրնգար ոսկու ձայնով: Ուստի ես համառորեն միջոցներ էի փնտրում՝ իմ բարակ քսակը գիրացնելու համար: Եվ ես յոթ այդպիսի միջոց բացահայտեցի: Ես ձեզ կսովորեցնեմ այդ յոթ միջոցները, որոնք կօգնեն լցնել ձեր քսակները շատ ոսկով: Յոթ օրերի ընթացքում ես կբացատրեմ ձեզ այդ յոթ միջոցները: Ուշադի՛ր լսեք այն գիտելիքը, որ ես պատրաստվում եմ փոխանցել ձեզ: Բանավիճե՛ք ինձ հետ: Քննարկե՛ք միմյանց հետ: Սովորե՛ք այս դասերը, քանզի դրանք են լինելու ձեր քսակի մեջ գցված հարստության սերմերը: Նախ՝ ձեզանից յուրաքանչյուրը պետք է սկսի կառուցել իր սեփական կարողությունը, և միայն հաջողելուց հետո այդ ճշմարտությունները սովորեցնի մյուսներին: Ես ձեզ կսովորեցնեմ ձեր քսակները գիրացնելու պարզ ճանապարհները: Սա առաջին քայլն է դեպի Հարստության տաճարը, և ոչ ոք չի կարող վեր բարձրանալ, քանի դեռ ամուր կանգնած չէ առաջին աստիճանին:

Այժմ մենք կուսումնասիրենք առաջին միջոցը:

Միջոց 1
Սկսի՛ր գիրացնել քսակդ

Արկադը դիմեց երկրորդ շարքում նստած մի մտախոհ մարդու.

-Իմ լավ ընկեր, ի՞նչ արհեստի տեր ես:

-Ես, - ասաց նա, - գրագիր եմ: Փորագրում եմ կավե սալիկների վրա:

-Ես ինքս էլ հենց այդ աշխատանքով եմ վաստակել իմ առաջին պղնձադրամները: Ուստի դու էլ ունես հաջողության հասնելու նույն հնարավորությունը:

Նա դիմեց ավելի հեռվում նստած մի կարմրաթուշ մարդու.

-Պատմիր ինձ՝ ինչպե՞ս ես վաստակում քո հացը:

-Ես, - ասաց մարդը, - մսագործ եմ: Այծ եմ գնում անասնապահներից, մորթում եմ, ապա միսը վաճառում եմ տնային տնտեսուհիներին, իսկ մորթին՝ կոշկակարներին:

-Քանզի դու էլ ունես աշխատանք ու եկամուտ, ուրեմն ունես նաև հաջողության հասնելու հնարավորություն, ինչպես ես:

Եվ այսպես, Արկադը շարունակեց պարզել, թե ինչպես է նրանցից յուրաքանչյուրը վաստակում իր ապրուստը: Հարցումներն ավարտելուց հետո նա ասաց.

-Այսպիսով, դուք բոլորդ էլ ինչ-որ կերպ գումար եք վաստակում: Բոլորդ էլ, մեկը՝ շատ, մյուսն՝ ավելի պակաս, կախված ձեր կարողություններից, ունեք որոշակի դրամական հոսք դեպի ձեր քսակները, ուստի դուք բոլորդ էլ ունեք հնարավորություն դրա մի մասը ձեզ պահել: Այդպես չէ՞…՝

Ու բոլորն էլ միահամուռ համաձայնեցին:

-Դե ուրեմն, - շարունակեց նա, - եթե ուզում եք հարստանալ, արդյոք խելմի՞տ չէ սկսել գումար կուտակել հենց այն աղբյուրից, որից արդեն գումարի հոսք կա…

Նրանք կրկին համաձայնեցին: Ապա Արկադը դիմեց մի համեստ մարդու, որը ներկայացել էր՝ որպես ձու վաճառող.

-Եթե դու ամեն առավոտ զամբյուղի մեջ դնես տասը ձու և ամեն երեկո հանես միայն ինը, ի՞նչ կկատարվի…

-Ի վերջո, զամբյուղը կլցվի…

-Ինչու՞…

-Որովհետև ամեն օր ես դնում եմ մեկ ձու ավել, քան վերցնում եմ:

Արկադը շրջվեց դեպի լսարանն ու ժպտալով ասաց.

-Ձեզանից ո՞վ ունի դատարկ քսակ…

Սկզբում բոլորը զարմացան, ապա սկսեցին ծիծաղել և թափահարել իրենց դատարկ քսակները:

-Շատ լավ, - շարունակեց նա, - հիմա ես ձեզ կասեմ դատարկ քսակը լցնելու առաջին միջոցը: Արեք ճիշտ այնպես, ինչպես ես ասացի ձվի վաճառականին: Ձեր քսակները մտնող ամեն տասը մետաղադրամից հանեք միայն ինը: Ձեր քսակները շատ արագ կսկսեն գիրանալ և կարճ ժամանակ անց՝ լիովին կլցվեն: Եվ դրանց անընդհատ աճող քաշը ձեզ կոգևորի ու հոգու բավարարվածություն կպարգևի: Հեգնանքով չմոտենաք ասածիս պարզությանը: Ճշմարտությունը միշտ էլ պարզ է լինում: Ես խոստացել էի ձեզ պատմել, թե ես ինչպես եմ կուտակել իմ հարստությունը: Սա եղել է իմ առաջին քայլը: Ես նույնպես քարշ էի տալիս մի դատարկ քսակ՝ անիծելով այն, քանի որ նրա մեջ ոչինչ չկար, որը կբավարարեր իմ ցանկությունները: Բայց հենց ես սկսեցի քսակիցս հանել միայն ինը՝ ամեն դրված տասից, այն սկսեց գիրանալ: Եվ նույնն էլ կպատահի ձեր քսակների հետ: Իսկ հիմա կպատմեմ ձեզ մի արտասովոր իրողության մասին, որի գաղտնիքն ինքս էլ չեմ հասկանում: Երբ ես սկսեցի իմ ապրուստի համար ծախսել ոչ ավելին, քան իմ վաստակածի ինը տասներորդ մասն է, նկատեցի, որ ոչինչ չփոխվեց: Ես ավելի աղքատ չդարձա, քան առաջ: Ավելին, շուտով ավելի հեշտ սկսեցի դրամ վաստակել, քան առաջ: Երևի դա Աստվածների օրենքն է. երբ մարդը խնայում է ու չի ծախսում իր վաստակածի որոշակի մասը, ոսկին նրա մոտ ավելի հեշտ է գալիս: Նույն կերպ դատարկ քսակից ոսկին խուսափում է: Ինչ եք ամենաշատը դուք ցանկանում… Հագու՞ստ, համեղ կերակու՞ր, մի լավ զմրդ, կամ մի այլ անցողիկ բմն, թե՞ նախընտրում եք մնայուն բաներ, ինչպիսիք են հողը, կալվածքը, ներդրումը, որոնք շարունակական եկամուտ կբերեն: Փողը, որ հանում եք քսակից, ապահովում է առաջինները, իսկ այն փողը, որ մնում է քսակում, ապահովում է երկրորդները: Սա, իմ սիրելի ուսանողներ, դատարկ քսակը գիրացնելու իմ առաջին միջոցն էր. ամեն տասը մետաղադրամից ծախսեք միայն ինը: Քննարկե՛ք սա միմյանց հետ: Եվ եթե կլինի մեկը, ով կապացուցի իմ ասածի սխալ լինելը, ապա կպատմեք ինձ վաղը, երբ կրկին հանդիպենք:

Միջոց 2
Կառավարի՛ր ծախսերդ

-Ձեզանից ոմանք, իմ ուսանողներ, ինձ հետևյալ հարցն են ուղղել՝ ինչպե՞ս կարելի է քսակում պահել վաստակածի մեկ տասներորդը, երբ ամբողջ վաստակածը բավարար չէ նվազագույն անհրաժեշտ ծախսերը հոգալու համար:

Այսպես սկսեց Արկադն իր երկրորդ օրը:

-Երեկ ձեզանից քանիսն էր դատարկ քսակով:

-Բոլորս, - պատասխանեց լսարանը:

-Մինչդեռ բոլորդ նույն եկամուտը չունեք: Ոմանք շատ ավելին են վաստակում, քան մյուսները, իսկ ոմանք էլ իրենց խնամքի տակ ավելի մեծ ընտանիքներ ունեն, քան մյուսները: Բայց բոլորիդ քսակներն էլ հավասարապես դատարկ են: Հիմա ես ձեզ մի անսովոր ճշմարտություն կպատմեմ մարդկանց և նրանց զավակների մասին: Դա հետևյալն է. այն, ինչը մեզանից յուրաքանչյուրն անվանում է նվազագույն ծախսեր, աճում է՝ մեր եկամուտներին համապատասխան, եթե մենք չենք վերահսկում դրանք: Մի շփոթեք անհրաժեշտ ծախսերը ցանկությունների հետ: Ձեզանից յուրաքանչյուրն իր հրաշալի ընտանիքի հետ միասին ունի ավելի շատ ցանկություններ, քան նրա եկամուտները կարող են բավարարել: Դա է պատճառը, որ ձեր եկամուտներն ամբողջությամբ, որքան էլ դրանք աճեն, ծախսվում են այդ ցանկությունները բավարարելու վրա: Եվ, իհարկե, դեռ շատ ցանկություններ մնում են չիրականացված: Ըստ էության մարդու ցանկություններն ու պահանջմունքները միշտ ավելին են, քան նրա հնարավորությունները: Երևի դուք կարծում եք, որ եթե ես այսքան հարուստ եմ, ուրեմն կարող եմ բավարարել ամեն մի ցանկություն... Դա կեղծ պատկերացում է: Իմ ժամանակը սահմանափակ է: Իմ ֆիզիկական ուժը սահմանափակ է: Տարածություններ հաղթահարելու իմ հնարավորությունները

նույնպես սահմանափակ են: Սահմանափակումներ կան իմ սննդի մեջ: Սահմաններ ունի նաև իմ եռանդը, իմ կենսական էներգիան, որը կարող եմ տրամադրել վայելքներին: Ինչպես դաշտում մոլախոտն է բազմանում, եթե հողագործը ժամանակին դրանք արմատախիլ չի անում, այդպես էլ մարդու ցանկություններն են անզուսպ կերպով աճում, երբ դրանց իրացման համար բարենպաստ պայմաններ են ստեղծվում: Ցանկությունները բյուր են, բայց դու կարող ես միայն որոշները բավարարել: Խորությամբ ուսումնասիրե՛ք կյանքի առօրյա սովորությունները: Դրանց մեջ շատ հաճախ կարելի է հայտնաբերել որոշ սովորական դարձած ծախսեր, որոնք կարելի է խելամըտորեն պակասեցնել կամ էլ դրանցից ընդհանրապես հրաժարվել: Ձեր նշանաբանը պիտի լինի՝ հարյուր տոկոսանոց արդյունք՝ ծախսված ամեն մի մետաղադրամի դիմաց: Ուստի փորագրեք սալիկի վրա ամեն բան, որի համար ցանկանում եք դրամ ծախսել: Ցանկից ընտրեք նրանք, որոնք խիստ անհրաժեշտ են, նաև նրանք, որոնք նույնպես կարող են հայտնվել ձեր կողմից ծախսվելիք ինը տասներորդի մեջ: Մնացածը, որոնք դուրս կման, ջնջեք ու դե՛ն նետեք ձեր մտքից, քանզի դրանք դասվում են այն ցանկությունների շարքին, որոնք չեք իրականացնելու, և երբեք մի՛ զղջացեք դրանց համար: Այնուհետև բյուջե կազմեք անհրաժեշտ ծախսերի համար: Երբեք մի դիպչեք այն մեկ տասներորդին, որը պետք է գիրացնի ձեր քսակը: Թույլ տվեք՝ այն դառնա ձեր մեծագույն ցանկությունը, որն իրագործվում է: Շարունակեք աշխատել բյուջեի հետ, շարունակեք ճշգրտել այն, և դա կօգնի ձեզ: Թող բյուջեն դառնա ձեր առաջին օգնականը՝ քսակը գիրացնելու գործում:

Վերջին խոսքի վրա, ուսանողներից մեկը, ով ոսկեգույն և կարմիր թիկնոց էր կրում, ոտքի կանգնեց ու ասաց.

-Ես ազատ մարդ եմ և հավատացած եմ, որ իրավունք ունեմ՝ վայելելու կյանքի բարիքները: Ուստի ես դեմ եմ այդ ստրկացնող բյուջեին, որը պիտի թելադրի ինձ, թե որքան և ինչի վրա փող ծախսեմ: Ինձ թվում է՝ դա ինձանից կխլի կյանքն ազատորեն վայելելու հաճույքը և կդարձնի միայն պարտավորություններով բեռնված ջորի:

Արկադը նրան պատասխանեց.

-Ո՞վ է, իմ ընկեր, կազմելու քո բյուջեն...

-Ես ինքս եմ կազմելու... - պատասխանեց ըմբոստը:

-Այդ դեպքում, եթե բեռնված ջորին կարողանար ինքն իր բեռի բյուջեն կազմել, արդյո՞ք դրանում կներառեր զարդեր, գորգեր և ոսկու ծանր կտորներ: Իհարկե՝ ոչ: Նա իր բյուջեում կներառեր խոտ, գարի ու ջրի պաշար՝ անապատային ճանապարհների համար: Բյու-

ջեի իմաստը քսակի գիրացմանը և դրա հետ մեկտեղ՝ անհրաժեշտ ծախսերը հոգալուն ու հասանելի ցանկությունների իրագործմանը նպաստելն է: Բյուջեն նրա համար է, որ օգնի իրագործել ամենաբաղձալի ձգտումները և պաշտպանել դրանք պատահական ցանկություններից: Ինչպես պայծառ լույսը մութ քարանձավում, բյուջեն ցույց է տալիս քսակիդ անցքերը և հնարավորություն է տալիս վերացնել դրանք ու կառավարել ծախսերդ, որպեսզի հասնես կատարյալ ու բավարարություն բերող նպատակներիդ: Սա, ուրեմն, դատարկ քսակը բուժելու երկրորդ միջոցն է:

Բյուջե կազմիր, որպեսզի միշտ դրամ ունենաս անհրաժեշտ ծախսերդ, հաճելի ժամանցդ ու այլ արժանի ցանկություններդ բավարարելու համար՝ առանց ծախսելու ավելին, քան եկամուտիդ ինը տասներորդն է:

Միջոց 3
Բազմապատկի՛ր ոսկիդ

-Ահա և դատարկ քսակն սկսեց գիրանալ: Դուք վարժվեցիք ձեր ստացածի մեկ տասներորդը պահել ձեզ: Դուք սովորեցիք վերահսկել ձեր ծախսերը: Այժմ ժամանակն է՝ գործի դնել և ավելացնել կուտակածը: Կուտակելը լավ է, բայց դրանից առանձնապես օգուտ չկա, եթե այն ձեզ չի ծառայում: Մեր խնայողություններն ընդամենը սկիզբն են, սակայն դրանց վաստակածն է, որ պիտի դառնա մեր ապագա հաջողության գրավականը, - այսպես խոսեց Արկադն իր դասընթացի երրորդ օրը: -Այդ դեպքում ինչպե՞ս աշխատեցնել մեր խնայած ոսկին: Իմ առաջին ներդրումն անհաջող էր, և ես կորցրեցի իմ բոլոր խնայողությունները: Այս պատմությանը ես կանդրադառնամ ավելի ուշ: Իմ առաջին արդյունավետ ներդրումը փոխառություն էր Ագգեր անունով մի զինագործի: Տարին մեկ անգամ նա իր գործի համար բրոնզի մեծ խմբաքանակ էր գնում, որը բերվում էր ծովով: Վաճառականներին վճարելու համար բավարար գումար չունենալով՝ նա ստիպված էր պարտք վերցնել նրանցից, ովքեր լրացուցիչ դրամ ունեին: Նա պատվարժան մարդ էր, ուստի հենց վաճառում էր իր արտադրանքը, պարտաճանաչ կերպով վերադարձնում էր պարտքը՝ առատորեն վճարելով նաև տոկոսները: Ամեն անգամ, երբ ես նրան պարտք էի տալիս, ես մայր գումարի հետ ստանում էի նաև տոկոսները: Այդպիսով, ոչ միայն իմ դրամագլուխն էր աճում, այլև հենց մայր գումարի բերած եկամուտները: Եվ ես մեծ բավականություն էի ստանում հատկապես այս վերջին փաստից: Իմ սիրելի՛ ուսանողներ, մարդու հարստությունն իր քսակի պարունակությունը չէ, այլ՝ եկամուտի շարունակական հոսքը, որը լցնում է նրա քսակը: Սա այն է, ինչին ամեն մարդ ձգտում է, և սա այն է, ինչին ձգտում է ձեզանից յուրաքանչյուրը. եկամուտ, որը կշարունակի հոսել դեպի ձեր քսակը՝ անկախ նրանից՝ դուք աշխատում

եք, թե ճանապարհորդում: Ինձ հաջողվել է ստեղծել մեծ եկամտահոսք, այնքան մեծ, որ ես համարվում եմ շատ հարուստ մարդ: Ագգերի գործի մեջ արված իմ առաջին հաջող ներդրումն ինձ շատ բան սովորեցրեց: Իմաստնանալով այս փորձառությունից՝ իմ կապիտալի աճին զուգընթաց՝ ես ընդլայնեցի իմ ներդրումներն ու մեծացրեցի իմ կողմից տրված փոխառությունների ծավալը: Սկզբում քիչ աղբյուրներից, հետո ավելի ու ավելի շատ աղբյուրներց դեպի իմ քսակն էր հոսում ոսկին, և այդ ոսկու հոսքն այն հարստությունն էր, որը հնարավորություն էր տալիս ինձ, ըստ իմ հայեցողության, իմաստուն կիրառություն գտնել դրա համար: Եվ այսպես, իմ համեստ խնայողություններից ես ոսկե ծառաների մի հսկայական բանակ ստեղծեցի, որոնցից յուրաքանչյուրն աշխատում և վաստակում էր ավելի շատ ոսկի: Ինչպես դրանք էին աշխատում, այնպես էլ դրանց պտուղներն էին աշխատում, և դրանց պտուղների պտուղներն էին աշխատում, մինչև որ այդ բոլորի միացյալ ջանքերի արդյունքում ձևավորվեց հսկայական եկամտահոսք: Ոսկին շեշտակիորեն է աճում, եթե ներդրված է խելամտորեն, ինչպես հետևյալ օրինակում. մի հողագործ, երբ ծնվեց նրա առաջին որդին, տասն արծաթ տարավ պարտատուի մոտ և խնդրեց, որ պահի այդ գումարն ու տոկոսներ ավելացնի: Նրանք պայմանավորվեցին, որ պարտատուն ամեն չորս տարվա համար գումարը կավելացնի դրա մեկ քառորդի չափով, մինչև որդին դառնա քսան տարեկան: Եվ քանզի հողագործն այդ գումարն ի պահ էր տվել որդու համար, ապա խնդրեց, որ տոկոսները նույնպես գումարվեն մայր գումարին: Երբ որդին դարձավ քսան տարեկան, հողագործը կրկին գնաց պարտատուի մոտ: Պարտատուն հողագործին բացատրեց, որ քանի որ մայր գումարին ավելացել են նաև տոկոսները, և դրանք նույնպես սկսել են աշխատել, ապա նախնական տասը արծաթը քսան տարում վերածվել է երեսուն և կես արծաթի: Հողագործը շատ գոհ էր, և քանի որ որդին այդ դրամների կարիքը չուներ, ողջ գումարը նա կրկին թողեց պարտատուի մոտ: Երբ հողագործի որդին դարձավ հիսուն տարեկան, և հայրը պիտի հեռանար այն աշխարհի, պարտատուն, ըստ պայմանի, որդուն վճարեց հարյուր և վաթսունյոթ արծաթ: Այդպիսով, հիսուն տարվա ընթացքում նախնական ներդրումն ինքն իրեն բազմապատկեց մոտավորապես տասնյոթ անգամ: Եվ սա ձեր երրորդ միջոցն է դատարկ քսակի դեմ:

> *Ամեն մի դրամը պետք է գործի մեջ դնել այնպես, որ այն վերարտադրվի և բազմանա, ինչպես դաշտային ծաղիկները՝ ապահովելով եկամտի կայուն հոսք դեպի ձեր քսակը:*

Միջոց 4
Ապահովի՛ր ներդրումներիդ անվտանգությունը

-Անհաջողությունը սիրում է փայլ: Քսակի ոսկին պետք է ամուր պահպանել, հակառակ դեպքում այն հեշտ կկորչի: Ուստի իմաստուն է նախ՝ սովորել պահպանել փոքր գումարները, նախքան աստվածները մեզ ավելի մեծերը կվստահեն: - Այսպես խոսեց Արկադն իր դասընթացի չորրորդ օրը: -Ոսկու տեր ամեն մարդ ենթակա է ներդրումների միջոցով մեծ գումարներ վաստակելու գայթակղությանը, հատկապես եթե այդ նախագծերն առաջին հայացքից շատ խելամիտ են թվում: Հաճախ ընկերներն ու բարեկամները, շտապելով նման նախագծերում ներդրում կատարել, հորդորում են հետևել իրենց օրինակին: Ներդրում կատարելու առաջին սկզբունքը մայր գումարի ապահովությունն է: Արդյոք խելամի՞տ է գայթակղվել խոշոր եկամուտներով, եթե վտանգ կա կորցնելու մայր գումարը: Ես ասում եմ՝ ոչ: Ռիսկի դիմելու գինը հնարավոր կորուստն է: Նախքան ներդրում կատարելը, մանրազնին ուսումնասիրե՛ք ձեր գումարն ապահով կերպով հետ ստանալու յուրաքանչյուր երաշխիք: Թույլ մի՛ տվեք, որ արագորեն հարստանալու ձեր ռոմանտիկ երազանքները մոլորեցնեն ձեզ: Նախքան որևէ մեկին փոխառություն տալը, համոզվեք, որ վերջինս վճարունակ է և հուսալի մարդու համբավ ունի, որպեսզի ակամա նրան չվիրեք ձեր ծանր աշխատանքով վաստակած հարստությունը: Նախքան որևէ ոլորտում ներդրում կատարելը, ուսումնասիրե՛ք այդ բնագավառի հետ կապված ռիսկերը: Իմ առաջին ներդրումը ողբերգական էր ինձ համար: Մեկ տարի շարունակ կուտակած իմ խնայողությունները ես վստահեցի Ազմուր անունով աղյուսագործին, որը նավարկում էր դեպի հեռավոր ծովեր ու Տյուրոս, և համաձայնեց փյունիկիացիներից հազվագյուտ զարդեր գնել ինձ համար: Նրա վերադարձից հետո մենք պետք է վաճառեինք զարդերն ու բաժանեինք շահույթը: Խաբեբա փյունի-

կիացիներն Ազմուրին էին վաճառել ապակու կտորներ: Իմ հարըստությունը կորսված էր: Այսօր իմ դասընթացը ևս մեկ անգամ ցույց է տալիս, թե ինչ հիմարություն է՝ աղյուսագործին վստահել զարդեր գնելու գործը: Ուստի ես խորհուրդ եմ տալիս ձեզ իմ անձնական փորձից. մի՛ եղեք չափից ավելի ինքնավստահ ձեր իմաստնության վրա, որպեսզի չհայտնվեք այնպիսի անտեսանելի թակարդներում, որոնք կկործեն ձեր ներդրումները: Ավելի լավ է՝ խորհուրդ հարցնել այնպիսի մարդկանցից, ովքեր փորձառու են գումարը շահութաբեր ներդնելու գործում: Նման խորհուրդները պատրաստակամորեն տրվում են հարցնողներին, և դրանք ոսկու գին ունեն՝ համարժեք այն ներդրմանը, որը պատրաստվում եք անել: Եվ, իսկապես, ուղիղ այդքան արժեք ունեն, քանի որ օգնում են չկորցնել ներդրվելիք գումարը: Ուրեմն, սա չորրորդ միջոցն է դատարկ քսակի դեմ, և շատ կարևոր է, քանզի պաշտպանում է քսակը դատարկվելուց, եթե այն արդեն լեցուն է:

Պահպանեք կուտակած գումարը կորըստից՝ ներդնելով այն միայն այնտեղ, որտեղ մայր գումարն ապահով է, և ցանկության դեպքում այն կարելի է հեշտ ստանալ, և որտեղ անհաջողության չեք մատնվի տոկոսները հավաքելիս: Խորհուրդ հարցրեք իմաստուն մարդկանցից: Օգուտ քաղեք այն մարդկանց խորհուրդներից, որոնք ոսկով շահավետ գործարքների մեծ փորձ ունեն: Թույլ տվեք, որ նրանց իմաստությունը պաշտպանի ձեր հարստությունն անապահով ներդրումներից:

Միջոց 5
Կացարանդ դարձրու շահավետ ներդրում

-Եթե մարդը կարողանում է իր վաստակածի ինը տասներորդով ապրել և վայելել կյանքը, և եթե նա կարող է նաև այդ ինը տասներորդի որևէ մասը վերածել շահավետ ներդրման՝ առանց վտանգելու իր բարեկեցությունը, այդ դեպքում որքա՞ն ավելի արագ կաճի նրա հարստությունը... - այսպես խոսեց Արկադն իր դասընթացի հինգերորդ օրը: -Բաբելոնի բնակիչների մեծամասնությունն ապրում է ոչ բարեկեցիկ թաղամասերում: Նրանք կալվածատերերին մեծ վարձավճարներ են վճարում սենյակների համար, որտեղ նրանց կանայք իրենց սրտերը ջերմացնող ծաղիկներ աճեցնելու անկյուն չունեն անգամ, իսկ երեխաները՝ խաղալու տեղ, և ստիպված են խաղալ կեղտոտ նրբանցքներում: Ոչ մի ընտանիք չի կարող լիարժեք վայելել կյանքը, քանի դեռ չունի հողամաս, որտեղ երեխաները կարող են հանգիստ խաղալ մաքուր հողի վրա, իսկ կանայք կարող են աճեցնել ոչ միայն ծաղիկներ, այլ նաև տարատեսակ բույսեր՝ իրենց ընտանիքները կերակրելու համար: Մարդու սիրտ է ուրախանում, երբ նա կարող է ճաշակել իր սեփական ծառերի թուզն ու խաղողը: Սեփական տուն ունենալը և դրա համար հոգ տանելու հպարտությունն ինքնավստահություն են հաղորդում տիրոջը և օգնում էլ ավելի մեծ եռանդով լծվել իր բոլոր ձգտումների իրագործմանը: Ուստի խորհուրդ եմ տալիս, որ ամեն մարդ տեր դառնա իր սեփական տանիքին, որը կպատսպարի իրեն ու իր ընտանիքին: Ոչ մի նպատակասլաց մարդու կարողությունից վեր չէ իր սեփական տունն ունենալը: Չէ՞ որ մեր մեծ Թագավորը Բաբելոնի պարիսպներն այնքան է ընդարձակել, որ դրանց ներսում բավականաչափ ազատ տարածք կա, որտեղ կարելի է խելամիտ գներով հող գնել: Ավելացնեմ նաև, որ պարտատուներն ուրախությամբ գումար կտան նրանց, ովքեր որոշել են սեփական տուն ունենալ: Դուք աղյուսա-

գործին և շինարարին վճարելու համար կկարողանաք պարտք վերցնել, եթե ցույց տաք մի խելամիտ գումար, որը ինքներդ եք պատրաստ վճարել նման մի գովելի նպատակի համար: Եվ երբ տունը պատրաստ լինի, դուք կարող եք պարտատուին վճարել այն նույն պարբերականությամբ, ինչպես որ վճարում էիք կալվածատիրոջը նախկինում: Քանի որ յուրաքանչյուր վճարում նվազեցնելու է պարտատուի նկատմամբ ձեր պարտավորությունը, ապա մի քանի տարի անց դուք ամբողջությամբ կմարեք ձեր պարտքը: Արդյունքում ձեր սիրտն ուրախ կլինի, որովհետև դուք կունենաք սեփական արժեքավոր կարողությունը, և ձեր միակ պարտավորությունը կմնա Թագավորի հարկերի վճարումը: Նաև ձեր կինն ավելի հաճախ կգնա գետի մոտ լվացք անելու, քանի որ ամեն անգամ վերադառնալիս իր հետ տիկով ջուր է բերելու՝ սեփական այգին ջրելու համար: Շատ օրհնություններ են գալիս այն մարդու վրա, ով ունի իր սեփական տունը: Դա բավականին պակասեցնում է նրա ապրուստի գինը՝ այդպիսով եկամուտներից ավելի մեծ բաժին հասանելի դարձնելով հաճույքների և ցանկությունների բավարարման համար: Սա է դատարկ քսակի դեմ հինգերորդ միջոցը:

Ունեցի՛ր քո սեփական տունը:

Միջոց 6
Ապահովի՛ր ապագայիդ եկամուտը

-Ցանկացած մարդու կյանք ձգվում է մանկությունից մինչ ծերություն: Սա է կյանքի օրենքը, և ոչ ոք չի կարող խույս տալ դրանից, քանի դեռ աստվածները նրան վաղաժամ չեն կանչել այն աշխարհ: Այդ է պատճառը, որ մարդը պիտի նախապես հոգա իր ապագայի եկամուտների մասին, երբ նա այլևս երիտասարդ չի լինի, պատրաստություններ տեսնի իր ընտանիքի համար, որպեսզի ապահովի նրանց բարեկեցությունը, երբ այլևս նրանց կողքին չլինի: Այս դասը ձեզ կսովորեցնի ապահովել լեցուն քսակ ծերության օրերի համար, երբ արդեն չեք կարողանա աշխատել նույն եռանդով, - այսպես խոսեց Արկադը վեցերորդ օրը: -Մարդը, ով, հասկանալով հարստություն ստեղծելու օրենքները, կարողացել է կուտակել շարունակաբար աճող հավելյալ գումար, պետք է հոգ տանի նաև իր ապագայի համար: Նա պետք է ծրագրի որոշակի ներդրումներ ու պահուստներ երկար տարիների համար, որոնք ժամանակին հասանելի կդառնան այնպես, ինչպես նա իմաստուն կերպով նախատեսել էր: Ապահով ապագա ունենալու համար տարբեր ուղիներ կան: Կարելի է որևէ գաղտնի վայրում հարստություն թաքցնել, սակայն որքան էլ հմտորեն այն թաքցվի, մի օր անխուսափելիորեն գողերի բաժին կդառնա: Այդ պատճառով նման տարբերակը ես խորհուրդ չեմ տա: Կարելի է տներ կամ հողեր գնել այդ նպատակի համար: Եթե ապագայում դրանց արժեքից ու օգտակարությունից ելնելով՝ իմաստուն ընտրություն կատարվի, ապա դրանք կպահպանեն իրենց արժեքը, և դրանց եկամուտները կամ վաճառքը կծառայեն իրենց նպատակին: Կարելի է նաև պարտատուին փոքրիկ գումար տալ՝ որոշակի պարբերականությամբ աճեցնելով գումարի չափը: Պարտատուի ավելացրած տոկոսները բավականին կմեծացնեն այդ գումարը: Ես ճանաչում եմ Անսար անունով մի կոշկակարի, ով ինձ պատմեց,

թե ինչպես նա ութ տարի շարունակ՝ ամեն շաբաթ, երկու արծաթ է տվել մի պարտատուի: Վերջերս պարտատուն ներկայացրել է հաշիվը, որը նրան շատ է ուրախացրել: Այդ փոքր ներդրումների և ամեն չորս տարվա համար մեկ քառորդի չափով գումարված տոկոսների ամբողջությունը կազմել է հազար քառասուն արծաթ: Հիմնվելով իմ հաշվարկների վրա՝ ես ուրախությամբ նրան խորհուրդ տվեցի, որ եթե նա իր գումարը շրջանառության մեջ թողնի ևս տասներկու տարի, ապա պարտատուն նրան կվերադարձնի չորս հազար արծաթ, ինչը պատկառելի գումար է նրա կյանքի մնացած տարիների համար: Անշուշտ, երբ նման փոքր ներդրումները կատարվում են պարբերաբար, ի վերջո, հանգեցնում են շահութաբեր արդյունքների, և ոչ ոք չի կարող հրաժարվել իր ու իր ընտանիքի բարեկեցիկ ապագան ապահովելու հնարավորությունից՝ անկախ նրանից, թե տվյալ պահին որքանով են լավ ընթանում իր գործերը: Ցանկանում եմ ևս մի բան ավելացնել վերը նշվածի վերաբերյալ: Ես հավատում եմ, որ մի օր իմաստուն մարդիկ մահվան ռիսկերն ապահովագրելու որոշակի ծրագիր կմշակեն: Պարբերաբար որոշակի փոքր վճարումներով հնարավոր կդառնա բավականին մեծ գումար կուտակել, որը մահվանից հետո կվճարվի խավարի աշխարհ հեռացած մարդու ընտանիքին: Ես այս գաղափարը համարում եմ շատ ցանկալի մի բան, որը, սակայն, ապագայի հարց է: Այդ համակարգը պետք է այնքան կայուն լինի, որքան՝ արքայի գահը: Իսկ առայժմ, մենք ինքներս պետք է հոգանք այսօր և ապագայում մեր նպատակներն իրացնելու միջոցների և ուղիների համար: Ուստի խորհուրդ եմ տալիս բոլորիդ՝ խելամտորեն պատրաստվել և միջոցներ ձեռնարկել ձեր ծերության տարիներին հնարավոր դատարկ քսակների դեմ: Քանզի անաշխատունակ մարդու կամ կերակրողին կորցրած ընտանիքի համար դատարկ քսակն իսկական ողբերգություն է: Ահա և վեցերորդ միջոցը դատարկ քսակի դեմ:

Նախօրոք ապահովի՛ր անխուսափելի ծերությունդ և ընտանիքիդ բարեկեցությունը:

Միջոց 7
Զարգացրու՛ դրամ վաստակելու ունակությունդ

-Այսօր, ի՛մ ուսանողներ, կխոսեմ ձեզ հետ ամենակարևոր միջոցի մասին: Կխոսեմ ոչ թե փողի, այլ ձեր մասին՝ բազմագույն հագուստներով դիմացս նստած մարդկանց մասին: Ես կխոսեմ այն մասին, թե ինչ է տեղի ունենում մարդկանց մտքում և կյանքում, երբ նրանք աշխատում են հանուն կամ ընդդեմ իրենց հաջողության: - Այսպես դիմեց Արկադն իր լսարանին յոթերորդ օրը: -Վերջերս մի երիտասարդ էր եկել ինձ մոտ՝ պարտքով գումար խնդրելու: Երբ ես հարցրեցի՝ ինչի՞ համար է նրան պետք այդ գումարը, նա բողոքեց, որ իր եկամուտները չեն բավականացնում իր ծախսերը հոգալու համար: Ես նրան բացատրեցի, որ սա այն դեպքն է, երբ նա անվճարունակ հաճախորդ է պարտատուի համար, քանզի չունի հավելյալ եկամուտ, որպեսզի երաշխավորված կերպով վերադարձնի պարտքը: «Երիտասա՛րդ, դու, նախևառաջ, ավելի շատ դրամ վաստակելու կարիք ունես», - ասացի ես նրան, - «Ի՞նչ ես դու անում, որպեսզի ավելացնես եկամուտներդ...»: «Այն ամենն, ինչ կարող եմ», - պատասխանեց նա: - «Երկու ամսում ես վեց անգամ մոտեցել եմ իմ վարպետին՝ խնդրելով բարձրացնել իմ աշխատավարձը, բայց արդյունքի չեմ հասել: Ոչ ոք ինձանից հաճախ չի դիմել»: Նրա պարզամտությունը ծիծաղ է առաջացնում, բայց պետք է խոստովանեմ, որ նա տիրապետում է եկամուտները մեծացնելու անհրաժեշտ ունակություններից մեկին: Նա իր եկամուտներն ավելացնելու մեծ ձգտում ունի իր մեջ, ինչը շատ գովելի է:

Որևէ ձեռքբերում ունենալու համար նախևառաջ պետք է մեծ ցանկություն լինի: Այդ ցանկությունը պետք է լինի ամուր և հստակ:

Ընդհանրացված ցանկությունները ոչ այլ ինչ են, քան թռուցիկ երազանքներ: Օրինակ՝ եթե նպատակն ուղղակի հարուստ լինելն է, ապա դրա օգուտն աննշան է: Բայց եթե մարդը նպատակ ունի վաստակել հինգ ոսկի, ապա դա շոշափելի և կոնկրետ նպատակ է, որին նա կարող է հասնել: Հենց նա ձեռք բերի ցանկալի հինգ ոսկին, նա կարող է նույն ճանապարհով այժմ էլ ձեռք բերել տասը ոսկի, ապա քսան, հարյուր, հետո հազար, ու մի գեղեցիկ օր էլ նա կհասնի իր հարստությանը: Փոքրիկ նպատակին հասնելու ճանապարհին ձեռք բերած ձեր գիտելիքները կծառայեն ձեզ՝ հետագայում ավելի մեծ նպատակների հասնելու համար: Սա մի գործընթաց է, որով կուտակվում է հարստությունը, սկզբում՝ փոքր գումարներով, հետո՝ ավելի մեծ գումարներով, և այդպես մարդը փորձառություն է ձեռք բերում: Ցանկությունը պետք է լինի պարզ ու հստակ: Մարդու ունակություններից վեր, խառնաշփոթ և չափազանց շատ ցանկությունները որևէ օգուտ չունեն: Երբ մարդը կատարելագործվում է իր մասնագիտության մեջ, մեծանում է նաև գումար վաստակելու նրա կարողությունը: Երբ ես հասարակ գրագիր էի և փորագրում էի կավե սալիկների վրա օրական մի քանի պղնձե դրամի համար, նկատեցի, որ ուրիշներն ինձանից ավելի շատ են փորագրում, ուստի ավելի շատ են վաստակում: Եվ որոշեցի, որ ես պետք է ոչ մեկից հետ չմնամ: Ու ինձանից շատ ժամանակ չպահանջվեց, որ բացահայտեմ նրանց արդյունավետության գաղտնիքը: Ավելի շատ հետաքրքրվածություն գործի նկատմամբ, ավելի մեծ կենտրոնացում առաջադրանքի վրա, ավելի շատ հաստատակամություն իմ ջանքերում, և ահա՝ շատ քչերը կարող էին ինձանից շատ փորագրել: Այսպիսով, խելամիտ ժամանակահատվածում իմ կատարելագործված հմտությունը վարձատրվեց, և բնավ էլ կարիք չառաջացավ աշխատավարձս բարձրացնելու համար վեց անգամ վարպետիս մոտ գնալու: Որքան շատ ենք իմաստնանում, այնքան շատ ենք կարողանում վաստակել: Այն մարդը, որ իր մասնագիտության մեջ ձգտում է կատարելության, միշտ էլ առատորեն է վարձատրվում: Եթե նա արհեստավոր է, ապա նա պետք է ձգտի տիրապետել իր բնագավառի ամենատաղանդավոր վարպետների մեթոդներին ու գործիքներին: Եթե աշխատում է օրենքի կամ բժշկության ոլորտում, ապա նա պետք է խորհրդակցի և գիտելիք փոխանակի իր բնագավառի մյուս մասնագետների հետ: Եթե առևտրական է, ապա պետք է անընդհատ ուսումնասիրի ու գտնի ավելի լավ և ավելի էժան ապրանքներ:

Մարդու գործունեությունը միշտ փոփոխվում ու կատարելագործվում է, քանզի խելացիները միշտ փնտրում ու գտնում են նոր ձևեր՝ իրենց հաճախորդներին ավելի լավ սպասարկելու համար: Ուստի հորդորում եմ բոլորիդ՝ միշտ լինել ձեր մասնագիտությունը-

ների առաջնագծում ու երբեք չկանգնել տեղում, հակառակ դեպքում դուք կհայտնվեք հետևում: Կան բաներ, որոնք մարդու կյանքը հարստացնում են օգտակար փորձառություններով: Իրեն հարգող ամեն մի մարդ պետք է անի հետևյալը.

Պետք է պարտաճանաչ կերպով վճարի իր պարտքերը՝ չգնելով այնպիսի բաներ, որոնց համար չի կարող վճարել:

Պետք է հոգ տանի իր ընտանիքի համար, որպեսզի նրանք բարին մտածեն և խոսեն իր մասին:

Պետք է իր կտակն ունենա, որպեսզի երբ աստվածներն իրենց մոտ կանչեն նրան, իր ստեղծած կարողությունը պատշաճ կերպով բաժանվի:

Պետք է սրտացավ լինի տկարի ու դժբախտության մեջ հայտնվածի հանդեպ և աջակցի նրանց խելամտության սահմաններում: Եվ նա պետք է հոգատար լինի հարազատ մարդկանց հանդեպ:

Այսպիսով, դատարկ քսակի դեմ յոթերորդ միջոցը հետևյալն է. որպեսզի մարդն ինքն իրեն հարգի, պետք է զարգացնի իր առավելությունները, սովորի և դառնա ավելի իմաստուն և ավելի հմուտ: Այդպես նա ձեռք կբերի ինքնավստահություն իր խելամիտ կերպով նախանշված նպատակներին հասնելու համար:

Սրանք այն յոթ միջոցներն էին դատարկ քսակի դեմ, որոնք ստուգվել ու ապացուցվել են իմ երկարատև ու հաջողակ կյանքի փորձով, և որոնք ես խորհուրդ եմ տալիս բոլոր նրանց, ովքեր ձգտում են հարստության: Բաբելոնում, իմ ուսանողնե՛ր, ավելի շատ ոսկի կա, քան դուք կարող եք երևակայել: Այն լիուլի բավարար է բոլորի համար:

Գնացե՛ք և կիրառե՛ք այս գիտելիքները, դրանց օգնությամբ բարգավաճե՛ք և հարստացե՛ք, ինչի իրավունքն ունե՛ք բոլորդ: Ապա նաև սովորեցրե՛ք այս գիտելիքները Նորին մեծության բոլոր պատվարժան հպատակներին, որպեսզի նրանց էլ ազատորեն բաժին հասնի մեր սիրելի քաղաքի անսահման հարստությունից:

ՀԱՆԴԻՊՈՒՐ
հաջողության աստվածուհուն

«Եթե մարդը հաջողակ է, ապա նրա հաջողությունը սահմաններ չի ճանաչում: Գցեք նրան Եփրատը և նա դուրս կլողա մարգարիտը ձեռքին»

Բաբելոնյան առած

Հաջողության ձգտումն ունիվերսալ է: Այդ ձգտումը նույնքան ուժեղ է ժամանակակից մարդու հոգում, որքան չորս հազար տարի առաջ՝ անտիկ Բաբելոնում: Մենք բոլորս էլ ուզում ենք գրավել հաջողության քմահաճ աստվածուհուն: Կա՞ արդյոք միջոց՝ հանդիպելու և արժանանալու նրա բարեհաճությանը, որպեսզի դեպի մեզ ձգենք հաջողությունն ու նրա առատաձեռն շնորհները: Կա՞ հաջողությունը գրավելու ճանապարհ:

Սա այն է, ինչն ուզում էին իմանալ անտիկ Բաբելոնի բնակիչները: Եվ սա հենց այն է, ինչը նրանք որոշել էին բացահայտել: Նրանք ճարպիկ մարդիկ էին ու խելացի մտածողներ: Ի դեպ, հենց սրանով է բացատրվում այն, որ Բաբելոնը դարձավ ժամանակի ամենահարուստ ու զորեղ քաղաքը:

Այդ հեռավոր անցյալում չկային ո՛չ դպրոցներ, ո՛չ էլ հա-

մալսարաններ: Բայց նրանք ունեին բավականին գործնական ուսումնական կենտրոն՝ մի բարձրաշտարակ շենք Բաբելոնում, որն իր կարևորությամբ չէր զիջում անգամ թագավորի պալատին, կախովի այգիներին և աստվածների տաճարներին: Դրա մասին դուք միայն փոքրիկ հիշատակում կգտնեք պատմության գրքերում կամ գուցե և ընդհանրապես ոչ մի հիշատակում չգտնեք, մինչդեռ այն իր ժամանակի ամենաազդեցիկ ինտելեկտուալ կենտրոնն էր:

Այդ շինությունն Ուսման տաճարն էր, որտեղ կամավոր ուսուցիչների կողմից մեկնաբանվում էր անցյալի իմաստությունը, և որտեղ բաց ֆորումներում քննարկվում էին հանրային հետաքրքրություն ներկայացնող թեմաներ: Այդ պատերի ներքո բոլորն իրար հավասար էին: Ամենահասարակ ստրուկն անգամ կարող էր անպատիժ կերպով վիճարկել արքայազնի տեսակետները՝ պնդելով իրենը:

Ուսման տաճարի բազմաթիվ այցելուների մեջ էր նաև Արկադ անունով մի իմաստուն և հարուստ մարդ, որը համարվում էր Բաբելոնի ամենահարուստ մարդը: Նա այնտեղ ուներ իր հատուկ սրահը, որտեղ գրեթե ամեն երեկո հավաքվում էին բազմաթիվ մարդիկ՝ ծերեր, երիտասարդներ, և հիմնականում միջին տարիքի մարդիկ, որպեսզի քննարկեին բազում հարցեր ու բանավիճեին հետաքրքիր թեմաների շուրջ: Երևակայենք, թե մենք ականջ ենք դնում նրանց, որպեսզի տեսնենք՝ ինչ գիտեն նրանք հաջողությունը գրավելու մասին:

Արևն՝ ասես հրե կարմիր գունդ, մայր էր մտնում անապատի ավազների վրա, երբ Արկադը մոտեցավ իր հարազատ հարթակին: Արդեն բազմաթիվ մարդիկ էին հավաքվել և հատակին փռված փոքրիկ գորգերին թիկնած՝ սպասում էին նրան, սակայն մարդիկ դեռ շարունակում էին գալ:

-Ինչ ենք մենք պատրաստվում քննարկել այսօր, - հարցրեց Արկադը:

Կարճ իրարանցում նկատվեց շարքերում, ապա մի բարձրահասակ մանածագործ կանգնեց, ինչպես կարգն էր, և դիմեց նրան.

-Մի թեմա կա, որը շատ կուզեի այստեղ քննարկել, բայց նաև մտավախություն ունեմ, որ այն ծիծաղելի կթվա թե՛ քեզ, Արկադ, և թե՛ այստեղ հավաքված բարի ընկերներին: - Արկադն ու հավաքվածներն սկսեցին քաջալերել նրան, և նա շարունակեց, - Այսօր ես բախտավոր եմ, քանզի քսակ եմ գտել՝ մեջը ոսկե դրամներ: Իմ մեծ ցանկությունն է՝ միշտ այսպես հաջողակ լինել: Զգում եմ, որ բոլորն էլ ունեն նման ցանկություն, ուստի առաջարկում եմ քննարկել, թե ինչպե՞ս կարելի է գրավել հաջողությունը և այն դարձնել մեզ ուղեկից:

-Զափազանց հետաքրքիր թեմա է առաջարկվել, - խոսեց Ար-

կադը, - և այն արժանի է մեր քննարկմանը: Որոշ մարդկանց պատկերացմամբ հաջողությունը մի բան է, որը պատահում է անսպասելի՝ առանց նպատակի կամ պատճառի: Որոշներն էլ հավատում են, որ բոլոր հաջողությունների աղբյուրը մեր ամենաառատաձեռն աստվածուհի Իշտարն է, որը բարեհաճությամբ պարգևատրում է նրանց, ովքեր գոհացնում են իրեն: Խոսեք բարեկամներ, եկեք քննարկենք, տեսնենք՝ կա՞ն արդյոք միջոցներ, որոնց օգնությամբ հաջողությունը կայցելի մեզնից յուրաքանչյուրին և բոլորիս:

-Այո, այո, և, որքան հնարավոր է, շատ, - պատասխանեցին անհամբեր ունկնդիրները:

Ապա Արկադը շարունակեց.

-Որպեսզի սկսենք մեր քննարկումը, եկեք նախ լսենք նրանց, ովքեր մանածագործի նման, առանց ջանք գործադրելու, վայելել են արժեքավոր իրեր, զարդեր գտնելու կամ ստանալու բախտը:

Լռություն տիրեց, և մարդիկ սկսեցին իրենց շուրջը նայել՝ ակընկալելով, որ որևէ մեկը կխոսի, սակայն այդպես էլ ոչ ոք չխոսեց:

-Ինչպե՞ս, ոչ ո՞ք... - ասաց Արկադը, - - Ուրեմն իրոք հազվագյուտ մարդիկ են այդչափ բախտավոր: Այժմ ո՞վ կհուշի՝ ո՞ր ուղղությամբ կարելի է շարունակել մեր որոնումները:

-Ես դա կանեմ... - ասաց լավ հագնված մի երիտասարդ՝ տեղից ելնելով, - Երբ մարդն սկսում է խոսել հաջողությունից, արդյոք բնական չէ՞, որ նրա մտքերն ուղղվում են դեպի խաղասեղանները: Արդյոք այնտե՞ղ չենք մենք գտնում բազմաթիվ մարդկանց, ովքեր փնտրում են աստվածուհու բարեհաճությունը՝ հույս ունենալով, որ նա մեծ շահումներ կպարգևի:

Հենց որ նա նստեց, լսվեց մեկ ուրիշի ձայնը.

-Շարունակի՛ր, խնդրում եմ: Պատմիր՝ քեզ հաջողվե՞ց խաղասեղանների մոտ արժանանալ աստվածուհու բարեհաճությանը: Արդյոք նա շրջե՞ց զառերն այնպես, որ դրանք կանգնեն կարմիր կողմով վեր, որպեսզի քո քսակը լցվի խաղարկողի ոսկիներով: Թե՞ նա թույլ տվեց, որ զառերը կապույտ կողմով վեր կանգնեն, և խաղարկողն իրեն վերցնի քո՝ այդքան դժվար վաստակած արծաթադրամները:

Երիտասարդը ծիծաղեց մնացած անչար ծիծաղողների հետ, ապա պատասխանեց.

-Ինձ թվում է՝ աստվածուհին անգամ տեղյակ չէր, որ ես այնտեղ եմ: Բայց ասացեք՝ արդյոք ձեզանից որևէ մեկին հաջողվե՞լ է հաղթանակած դուրս գալ խաղատնից, երբևէ հանդիպե՞լ եք նրան նման վայրերում, որտեղ նա բարեհաճորեն շրջել է զառերը ձեր օգտին: Մենք բոլորս ուզում ենք լսել և սովորել:

-Իմաստուն սկիզբ, - միջամտեց Արկադը, - մենք այստեղ ենք, որպեսզի ցանկացած հարց քննարկենք բոլոր կողմերից: Խա-

ղատներն անտեսելով՝ մենք կանտեսեինք մարդկանց մեծ մասի ամենապարզ բնազդներից մեկը, այսինքն՝ փոքր ջանքով ու գումարով մեծ հաջողության հասնելու ձգտումը:

-Սա հիշեցրեց ինձ երեկվա մրցավազքի մասին, - ասաց մեկ ուրիշը: -Եթե աստվածուհին հաճախում է խաղատներ, ապա հաստատ նա չի անտեսի նաև մրցավազքերը, որտեղ ոսկեզօծ մարտակառքերն ու քրտնաթոր ձիերն ավելի մեծ կրքեր են բորբոքում: Ասա՛ մեզ ազնվորեն, Արկա՛դ, մի՞թե նա չէր շշնջացել քո ականջին, որպեսզի դու խաղադրույք կատարես Նինվեից բերված այն մոխրագույն ձիերի վրա: Ես կանգնած էի ճիշտ քո հետևում և ականջներիս չհավացի, երբ լսեցի, որ դու խաղադրույք ես կատարել այդ մոխրագույն ձիերի վրա: Դու բոլորից լավ գիտես, որ ամբողջ Ասորեստանում չկա մի թիմ, որը կարող է հաղթել մեր սիրելի նժույգներին արդար մրցավազքում: Աստվածուհին չէ՞ր շշնջացել ականջիդ, որ խաղադրույք կատարես մոխրագույնների վրա, քանզի վերջին պտույտին մեջտեղի սև նժույգը պիտի սայթաքեր և խանգարելով մեր նժույգներին՝ թույլ տար, որ մոխրագույները տիրանան չվաստակած հաղթանակին:

Արկադը ներողամտաբար ժպտաց.

-Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ պիտի բարի աստվածուհուն այդքան հետաքրքրի որևէ մեկի խաղադրույքը ձիարշավի ժամանակ: Իմ կարծիքով, նա սիրո և արժանապատվության աստվածուհի է, ում հաճելի է օգնել կարիքավորներին և պարգևատրել արժանիներին: Ես չեմ փնտրում նրան խաղատներում ու մրցավազքերում, որտեղ մարդիկ ավելի շատ կորցնում են, քան շահում: Ես փնտրում եմ նրան այն վայրերում, որտեղ մարդկանց արարքները շատ ավելի արժանի են պարգևատրման: Հող մշակելիս, ազնիվ առևտրում, մարդու ցանկացած այլ ազնիվ աշխատանքի մեջ, որտեղ հնարավոր է շահույթ ստանալ ներդրված ջանքերից և գործարքներից: Իհարկե, ոչ միշտ է մարդը պարգևատրվում, քանզի երբեմն նրա դատողությունները կարող են սխալ լինել, կամ անբարենպաստ քամիներն ու եղանակը կարող են խանգարել նրա ջանքերին: Սակայն, եթե մարդը չհուսահատվի և համառորեն շարունակի դիմակայել ծագած դժվարություններին, ապա կարող է ակնկալել, որ իր նպատակներն ի վերջո կիրականանան: Այդպես է, քանզի նման իրավիճակում հաջողության հասնելու հավանականությունը միշտ ավելի մեծ է նրա համար: Բայց խաղերի պարագայում իրավիճակը ճիշտ հակառակն է: Այնտեղ հաջողության հավանականությունն ի օգուտ խաղացողի չէ, քանզի խաղն այնպես է կազմակերպված, որ այն միշտ խաղատան օգտին է: Դա խաղի կազմակերպչի գործն է, և նա նպատակ ունի խաղացողների խաղադրույքներից առատ շահույթ ստանալ: Շատ

քչերն են գիտակցում, թե որքան որոշակի են խաղատան շահույթները, և ի հակադրություն դրան՝ որքան անորոշ՝ հաջողելու իրենց սեփական հնարավորությունները: Օրինակ, եկեք դիտարկենք խաղադրույքները: Ամեն անգամ, երբ զառը նետվում է, մենք խաղադրույքներ ենք կատարում՝ փորձելով գուշակել, թե զառն ինչպես կկանգնի: Եթե կանգնի կարմիրի վրա, խաղավարը մեզ կվճարի մեր խաղադրույքի քառապատիկը, սակայն եթե կանգնի մնացած հինգ կողմերից ցանկացածի վրա, ապա մենք կկորցնենք մեր խաղադրույքը: Ուստի թվերի տրամաբանությունը մեզ հուշում է, որ ամեն մի նետումից մենք ունենք պարտվելու հինգ հնարավորություն, բայց փոխարենը՝ հաղթելու ընդամենը չորս հնարավորություն, քանզի կարմիր կողմը միայն քառապատկում է խաղադրույքը: Այսպիսով, գիշերվա ընթացքում խաղացած խաղերից խաղատունը որպես շահույթ կարող է հաստատապես ակնկալել բոլոր խաղադրույքների գումարի մեկ հինգերորդը: Արդյո՞ք հնարավոր է ակնկալել, որ կարելի է շահել ավելին, քան թույլ է տալիս պատահականությունը՝ չնայած խաղատան ունեցած՝ մեկ հինգերորդով ավելի մեծ հավանականությանը:

-Բայց կան մարդիկ, ովքեր երբեմն շահում են մեծ գումարներ, - ասաց ունկնդիրներից մեկը:

-Իրոք այդպես լինում է, - շարունակեց Արկադը: - Սակայն իմանալով դա՝ հարց է ծագում. արդյոք բախտի բերմամբ շահած գումարը շահողի համար կարո՞ղ է տևական և կայուն արժեք լինել: Բաբելոնի հաջողակ ու հարուստ մարդկանցից շատերին եմ ես ճանաչում, բայց ես չեմ կարող նշել գեթ մեկին, ում հաջողությունն սկսել է նման աղբյուրից: Դուք՝ այստեղ հավաքվածներդ, վստահաբար ճանաչում եք բազմաթիվ հարգարժան ու հաջողակ մարդկանց: Հետաքրքիր է իմանալ, թե մեր հարուստ քաղաքացիներից քանի՞սն են իրենց հաջողության ճանապարհն սկսել խաղատներից: Պատմեք այդպիսի օրինակների մասին, եթե գիտեք…

Երկար լռություն տիրեց, ապա իրարանցում նկատվեց:

-Իսկ խաղավարները կարո՞ղ են համարվել այդպիսի օրինակ…

-Եթե, իհարկե, ուրիշ ոչ ոքի չեք կարող մտաբերել… - պատասխանեց Արկադը: - Եթե չեք կարող մտաբերել այդպիսի գոնե մեկին, ապա ի՞նչ կասեք հենց ձեր մասին: Կա՞ մեկը, որ կարողացել է պարբերաբար, կայուն կերպով գումարներ շահել, և կարող է մեզ խորհուրդ տալ եկամտի նման աղբյուր, սակայն տատանվում է… - Նրա հարցին ի պատասխան՝ վերջին շարքերից հառաչանքներ լսվեցին՝ ծիծաղ առաջացնելով լսարանում: - Այսպիսով՝ եկեք չշարունակենք հաջողության աստվածուհուն նման վայրերում փնտրել, քանզի նա նման վայրեր չի այցելում, - շարունակեց Արկադը, - Ուստի եկեք

քննարկենք այլ տարբերակներ: Ինչպես տեսանք, պատահաբար գեր քսակ գտնելը չէ, խաղատներն էլ չեն, մրցավազքերի մասին էլ, պետք է ձեզ խոստովանեմ, որ ավելի շատ կորցրել եմ, քան շահել: Եկեք քննարկենք մեր արհեստներն ու աշխատանքը: Այս դեպքում արդյոք բնական չէ՞, որ մեր շահավետ գործարքները համարվեն ոչ թե բախտի, այլ գործադրված ջանքերի դիմաց պարգևատրում: Ինձ թվում է, որ մենք ուղղակի չենք նկատում աստվածուհու առատաձեռնությունը: Միգուցե նա արդեն իսկ օժանդակում է մեզ, սակայն մենք դա չենք գնահատում… Քննարկումը շարունակելու համար ո՞վ առաջարկ ունի…

Տեղից վեր կացավ մի տարեց վաճառական՝ ուղղելով իր հիասքանչ սպիտակ թիկնոցը.

-Ձեր թույլտվությամբ, հարգարժան Արկադ և իմ ընկերներ, ես առաջարկ ունեմ: Եթե մենք որպես հաջողության հասնելու միջոց՝ դիտարկում ենք մեր հմտություններն ու գործունեության ոլորտը, ապա ինչու՞ չքննարկենք այն դեպքերը, երբ հաջողությունը գրեթե մեր ձեռքերում էր, բայց մենք բաց ենք թողել այն: Դրանք կարող էին լինել հաջողության հազվադեպ օրինակներ, եթե իրականանային: Եվ քանի որ մենք չենք հասել դրանց իրագործմանը, ապա չենք կարող այդ օրինակները համարել պարզապես պարգևատրումներ ջանքերի դիմաց: Վստահ եմ՝ այստեղ հավաքվածներից շատերն են նման փորձառություն ունեցել:

-Իմաստուն մոտեցում է, - հավանություն տվեց Արկադը: - Ձեզանից ո՞վ է վերջին պահին ձեռքից բաց թողել հաջողությունը…

Շատերը ձեռք բարձրացրեցին, նրանց թվում՝ նաև առևտրականը: Արկադը նրան խոսելու նշան արեց.

-Քանզի այս քննարկումը դու առաջարկեցիր, մենք կուզեինք առաջինը քեզ լսել:

-Հաճույքով կպատմեմ իմ պատմությունը, - ասաց նա, - Այն ցույց է տալիս, թե որքան մոտ կարող է լինել հաջողությունը, և թե ինչպես կուրորեն կարող ես այն բաց թողնել ձեռքից, ինչի համար հետագայում շատ կզղջաս: Շատ տարիներ առաջ, երբ ես երիտասարդ էի, նոր էի ամուսնացել և ունեի իմ կայուն եկամուտը, հայրս մի օր եկավ ինձ մոտ և պնդեց, որ ներդրում կատարեմ մի գործում, որը խոստանում էր եկամտաբեր լինել: Իր լավ ընկերներից մեկի որդին քաղաքի պարիսպներից դուրս մի ամայի հողակտոր էր նկատել: Այն տեղակայված էր ջրանցքից վեր, որտեղ ջուրը չէր կարող հասնել: Իմ հոր ընկերոջ որդին ծրագրել էր գնել այդ հողակտորը և այնտեղ կառուցել երեք մեծ անիվներ, որոնք գործի կդրվեին եզների միջոցով և կենսատու ջուրը ջրանցքից կհասցնեին այդ բերրի, սակայն չոր հողերին: Դրանից հետո նա ծրագրել էր տարածքը

բաժանել փոքր հատվածների և դրանք վաճառել քաղաքացիներին՝ հողագործության համար: Հորս ընկերոջ որդին բավականաչափ ոսկի չուներ՝ այդ ամբողջ ծրագրն իրագործելու համար: Ինձ նման՝ նա էլ փոքր եկամուտ ունեցող երիտասարդ էր, և նրա հայրն էլ իմ հոր պես ուներ մեծ ընտանիք ու սահմանափակ հնարավորություններ: Ուստի նա փնտրում էր մարդկանց, ովքեր կհետաքրքրվեին նման նախագծով: Նա նախատեսել էր հավաքել տասներկու հոգուց կազմված մի խումբ, որի բոլոր անդամները կունենային կայուն եկամուտ և համաձայն կլինեին ներդնել իրենց եկամտի մեկ տասներորդն այդ նախագծի մեջ այնքան ժամանակ, մինչև հողը պատրաստ կլիներ վաճառքի համար: Վաճառքից հետո ամեն մեկն իր ներդրմանը համապատասխան շահույթ կստանար: «Դու, իմ որդի՛», - ասաց հայրս, - «հիմա մուտք ես գործում հասուն տարիք: Իմ ցանկությունն է, որ դու հնարավորինս շուտ սկսես ստեղծել քո կարողությունը և հարգված լինես հասարակության կողմից: Ես ուզում եմ տեսնել, որ դու դաս ես քաղել քո հոր սխալներից»: «Ես էլ եմ դա հաստատ ցանկանում, հա՛յր իմ», - պատասխանեցի ես: «Ուրեմն այս խորհուրդը ես կտամ: Արա այն, ինչ լավ կլիներ, որ ես արած լինեի քո տարիքում: Քո եկամտի մեկ տասներորդը միշտ մի կողմ դիր և ներդրում արա եկամտաբեր ծրագրերում: Քո եկամուտների մեկ տասներորդով և ներդրումներիդ արդյունքում գոյացած եկամուտներով դու կարող ես մինչև իմ տարիքին հասնելը կուտակել պատկառելի կարողություն»: «Քո խոսքերն իմաստության խոսքեր են, հա՛յր իմ: Իհարկե, ես ուզում եմ հարստանալ: Բայց, ցավոք, արդեն իսկ այնքան ծախսեր ունեմ, որ գումարս հազիվ է հերիքում այդ ամենին, ինչի պատճառով էլ տատանվում եմ քո առաջարկին հետևել: Ես երիտասարդ եմ ու դեռ շատ ժամանակ ունեմ դրա համար»: «Ես էլ էի այդպես մտածում քո տարիքում: Տարիներն անցան, ու մինչ օրս այդպես էլ ես ոչինչ չնախաձեռնեցի այդ ուղղությամբ»: «Մենք նոր ժամանակներում ենք ապրում, հա՛յր իմ: Ու ես կխուսափեմ քո արած սխալներից»: «Հնարավորությունը հիմա քո առջև է, որդիս, այն կարող է քեզ առաջնորդել դեպի հարստություն: Խնդրում եմ քեզ, մի՛ հապաղիր: Վաղն իսկ գնա՛ իմ ընկերոջ որդու մոտ, պայմանավորվի՛ր նրա հետ, որ եկամտիդ մեկ տասներորդը կներդնես այդ նախագծում: Հնարավորությունը տեղում չի սպասում. հիմա այն կա, շուտով էլ չի լինի: Ուստի, մի՛ հապաղիր»: Չնայած հորս խորհրդին՝ ես տատանվում էի: Այդ պահին արևելքի վաճառականներն ընտիր հագուստներ էին բերել, այնքա՛ն շքեղ ու գեղեցիկ, որ ես և իմ կինը որոշել էինք անպայման գնել մեզ համար: Եթե ես համաձանեի այդ նախագծի համար վճարել իմ եկամուտների մեկ տասներորդը, ապա մենք պետք է մեզ զրկեինք այդ և բազմաթիվ

այլ հաճույքներց, որոնք այնքան ցանկալի էին մեզ համար: Ես այնքան ձգձգեցի որոշման ընդունումը, որ պահը բաց թողեցի և հետագայում շատ զղջացի: Նախագիծն այնքան շահավետ եղավ, որ գերազանցեց բոլոր կանխատեսումները: Սա է իմ պատմությունը, որը ցույց է տալիս, թե ինչպես ես ձեռքիցս բաց թողեցի հաջողությունը:

-Այս պատմությունից մենք տեսնում ենք, որ հաջողությունը գալիս է նրա մոտ, ով պատրաստ է ընդունել այն, - ասաց մի թխամաշկ անապատի մարդ: - Կարողություն ստեղծելու համար պետք է ինչ-որ բանից սկսել: Այդ սկիզբը կարող է լինել մի քանի ոսկի կամ արծաթ, որ մարդը մի կողմ է դնում իր եկամուտներից իր առաջին ներդրման համար: Ես ինքս բազմաթիվ հոտեր ու նախիրներ ունեմ: Իմ նախիրների սկիզբը դրեցի դեռ այն ժամանակ, երբ փոքր տղա էի ու մեկ արծաթե դրամով գնեցի իմ առաջին հորթը: Դա դարձավ իմ հարստության սկիզբը, որը մեծ նշանակություն ունեցավ ինձ համար: Առաջին քայլը դեպի հարստություն այնպիսի հաջողություն է, որին կարող է հանդիպել յուրաքանչյուրը: Բոլորի համար անչափ կարևոր է այդ առաջին քայլը, որը մարդուն սեփական աշխատանքով վաստակողից վերածում է իր ներդրումներից եկամուտ ունեցողի: Որոշ մարդիկ, բարեբախտաբար, անում են այդ առաջին քայլը դեռ երիտասարդ տարիքում և դրանով առաջ են անցնում բոլոր նրանցից, ովքեր ավելի ուշ են այդ քայլն անում, կամ վաճառականի հոր նման անհաջողակներից, ովքեր այդպես էլ այդ քայլը չեն անում: Եթե մեր ընկեր վաճառականն օգտվեր այն ժամանակ իրեն ընձեռված հնարավորությունից, երբ դեռ երիտասարդ էր, ապա այսօր կվայելեր այս աշխարհի ավելի շատ բարիքներ: Նմանապես, եթե հաջողությունը ժպտա, ու մեր ընկեր մանածագործն այժմ անի իր կարողությունը ստեղծելու քայլը, ապա դա, անշուշտ, կլինի շատ ավելի մեծ հաջողության սկիզբը:

-Շնորհակալություն: Ես էլ եմ ուզում խոսել, - կանգնեց մի օտարական: - Ես սիրիացի եմ: Ես այնքան էլ լավ չեմ խոսում ձեր լեզվով: Ուզում եմ մեր ընկերոջը՝ այս վաճառականին, մի անուն տալ: Գուցե դուք համարեք, թե այդ անունը հարգալից չէ, բայց միևնույն է, ես ուզում եմ նրան այդպես կոչել: Սակայն, ցավոք, ձեր լեզվով չգիտեմ այդ բառը: Եթե ասեմ այն իմ մայրենի լեզվով, ապա դուք այն չեք հասկանա: Ուստի լավ մարդիկ, կարո՞ղ է ձեզանից մեկն ինձ հուշել, թե ինչպե՞ս եք դուք անվանում այն մարդուն, ով անընդհատ հետաձգում է անելիքը, որն անչափ օգտակար կլիներ իր համար…

-Տատանվող, - ձայն տվեց մեկը:

-Տատանվող, ահա թե ով է նա,- ասաց Սիրիացին՝ ոգևորված ձեռքերը օդում թափահարելով, - Նա չի ընդունում հաջողությունը, երբ այն իր դուռն է թակում: Նա հապաղում է: Ասում է՝ այս պահին

ես շատ գործ ունեմ, ցտեսություն, հետո կխոսենք: Բայց ընձեռված հնարավորությունը չի սպասի և ոչ մի դանդաղկոտի: Եթե մարդն ուզում է հաջողակ լինել, պետք է արագ գործի: Նա, ով ընձեռված հնարավորության դեպքում արագ չի գործում, մեծ տատանվող է, ճիշտ ինչպես մեր այս ընկեր վաճառականը:

Վաճառականը վեր կացավ ու բարյացակամորեն խոնարհվեց՝ ի պատասխան ամբոխի ծիծաղին:

-Ընդունի՛ր հիացմունքս, ո՛վ օտարական, որ չես տատանվում ճշմարտությունն ասել մեր պարիսպների մեջ:

-Այժմ եկե՛ք լսենք հաջողության հետ կապված մեկ այլ պատմություն: Ո՞վ կկիսվի իր փորձով, - առաջարկեց Արկադը:

-Ես կարող եմ, - ասաց կարմիր թիկնոցով միջին տարիքի մի մարդ: - Ես գնում եմ կենդանիներ, հիմնականում՝ ուղտեր ու ձիեր: Երբեմն գնում եմ նաև ոչխարներ ու այծեր: Պատմությունը, որ կպատմեմ, ճշմարտացիորեն ցույց կտա, թե ինչպես հնարավորությունը եկավ մի գիշեր, երբ ես ամենաքիչն էի դրան սպասում: Երևի դա էր պատճառը, որ ես այն բաց թողեցի: Ու այս հարցում դուք եղեք դատավորը: Տասն օր շարունակ ուղտերի ապարդյուն փնտրտուքից վերադառնալով՝ ես շատ բարկացա, երբ քաղաքի դարպասները գտա փակ ու ամուր կողպված: Մինչ իմ ծառաները վրաններն էին պատրաստում՝ գիշերն այդտեղ շատ քիչ ուտելիքով ու առանց ջրի անցկացնելու համար, ինձ մոտեցավ մի ունևոր ծեր գյուղացի, ով մեզ նման մնացել էր դրսում. «Հարգելիս», - ասաց նա, - «քո հագուկապից գուշակում եմ, որ ապրանք ես գնում: Եթե իրոք այդպես է, ապա կուզեմ քեզ առաջարկել գնել հրաշալի ոչխարների հոտը, որ այստեղ եմ բերել: Ցավոք, իմ կինը ծանր հիվանդ է, և ես պետք է անհապաղ վերադառնամ նրա մոտ: Գնի՛ր իմ այս հոտը, որպեսզի ես ու իմ ծառաները հեծնենք մեր ուղտերն ու առանց ժամանակ կորցնելու՝ անմիջապես ճանապարհ ընկնենք»: Այնքան մութ էր, որ հոտը չեր երևում, բայց մկկոցներից պարզ էր, որ այն բավականին մեծ էր: Տասն օր ապարդյուն ուղտ փնտրելուց հետո ուրախ էի նրա գործնական առաջարկի համար: Իր անհանգիստ ու տագնապալից վիճակից ելնելով՝ նա շատ հարմար գին առաջարկեց: Ես այն ընդունեցի՝ լավ գիտակցելով, որ վաղն առավոտյան հոտը դարպասներից ներս կտանեմ ու կվաճառեմ մեծ շահույթով: Գործարքն ավարտվեց, ու ես իմ ծառաներին կանչեցի, որպեսզի նրանք ջահեր բերեն ոչխարներին հաշվելու համար: Ըստ վաճառողի՝ պետք է լինեին ինը հարյուրը: Ես ձեզ այլևս չեմ ծանրաբեռնի մանրամասն նկարագրություններով, թե ինչ դժվարությունների հանդիպեցինք այդ ծարավ, անհանգիստ արածող ոչխարներին հաշվելիս: Պարզվեց, որ դա անհնարին բան էր: Այդ իսկ պատճառով ես նրան ասա-

ցի, որ հաշվարկը կավարտենք առավոտյան՝ լույսը բացվելուն պես, ու նոր միայն կվճարեմ գումարը: «Խնդրում եմ, հարգելի՛ս, վճարի՛ր գոնե գումարի երկու երրորդը, որպեսզի ես կարողանամ ճամփա ընկնել», - աղերսեց նա, - «ես քեզ մոտ կթողնեմ իմ ամենախելացի ու կրթված ծառային, որպեսզի առավոտյան նա քեզ օգնի հաշվել հոտը: Նա շատ վստահելի է, ու մնացած գումարը դու կարող ես վճարել նրան»: Բայց ես համառեցի ու մերժեցի վճարել գիշերը: Հաջորդ առավոտ, երբ ես դեռ քնած էի, դարպասները բացվեցին, ու չորս գնորդներ անմիջապես դուրս շտապեցին՝ ոչխարի հոտեր փնտրելու: Նրանք շատ պատրաստակամ էին բարձր գներ վճարել, քանզի լուր էր տարածվել, որ շուտով քաղաքը պաշարման է ենթարկվելու, իսկ ուտելիքի պաշարն այդքան էլ շատ չէ: Ինձ առաջարկված գնից գրեթե երեք անգամ ավելի թանկ գնով իր հոտը վաճառեց ծեր գյուղացին: Դա մի հազվադեպ հաջողություն էր, որ ես ձեռքիցս բաց թողեցի:

-Սա շատ անսովոր պատմություն էր, - նկատեց Արկադը, - Ո՞վ կարող է ասել՝ ի՞նչ իմաստություն այն մեզ սովորեցրեց:

-Իմաստությունն այն է, որ պետք է անմիջապես վճարել, եթե վստահ ես, որ գործարքը շահավետ է, - ասաց մի հարգարժան թամբերի վարպետ: - Եթե լավ գործարք է հանդիպում, ապա մենք այդ պահին մեր թուլություններից պաշտպանվելու նույնքան կարիք ունենք, որքան այլ մարդկանցից: Մենք՝ մահկանացուներս, շատ փոփոխամիտ ենք: Ավելին՝ ցավով եմ նշում, բայց ավելի հաճախ մենք մեր միտքը փոխում ենք լավ ծրագրից, քան թե վատ ծրագրից: Համառորեն կանգ ենք առնում սխալ որոշումների վրա, իսկ ճիշտ որոշումների դեպքում հաճախ տատանվում ենք: Որպես կանոն՝ իմ առաջին որոշումն ամենաճիշտն է լինում: Բայց և միշտ դժվարությամբ եմ որոշում ընդունում լավ գործարքների դեպքում: Իմ այս թուլության դեմն առնելու համար, երբ լավ գործարք է պատահում, անմիջապես անում եմ առաջին պահանջվող վճարումը: Այսպիսով, դա ինձ պաշտպանում է լավ հնարավորությունը ձեռքիցս բաց թողնելու համար հետագա ափսոսանքից:

-Շնորհակալ եմ, ես նորից կուզեմ խոսել, - ասաց սիրիացին ու կրկին ոտքի կանգնեց: - Այս պատմություններն իրար շատ նման էին: Ամեն անգամ լավ հնարավորությունը ձեռքից բաց է թողնվում նույն պատճառով: Ամեն անգամ այն գալիս է տատանվողի մոտ: Ու ամեն անգամ հանդիպում անվճռականության: Ինչպե՞ս կարելի է նման մոտեցմանը հաջողության հասնել:

-Իմաստուն են խոսքերդ, - ասաց գնորդը: - Երկու դեպքում էլ հաջողությունը բախվում է տատանվողի անվճռականությանը: Եվ սա բացառիկ դեպքեր չեն: Հետաձգումն ու տատանումը մարդու

էության մեջ են: Մենք ձգտում ենք հարստության, բայց երբ լավ հնարավորությունը հայտնվում է մեր առջև, մենք սկսում ենք տատանվել ու առիթ փնտրել մեր քայլերը հետաձգելու համար: Այս ամենը լսելիս թվում է, որ մենք ենք մեր թշնամին: Երբ երիտասարդ էի, ինձ ծանոթ չէր այդ երկարաշունչ բառը, որով մեր սիրիացի ընկերը մեզ զվարճացեց: Սկզբում կարծում էի, որ իմ սխալ դատողություններն են բազմաթիվ շահութաբեր գործարքներ բաց թողնելու պատճառը, բայց ավելի ուշ ես դրա պատճառը տեսնում էի իմ համառության մեջ: Ի վերջո, ես հասկացա՝ ինչն է դրա պատճառը՝ անիմաստ ձգձգելու սովորությունը, երբ արագ ու վճռական գործողության անհրաժեշտություն կա: Որքա՛ն էի ես ատում այդ սովորությունը, երբ դրա իրական բնույթը բացահայտեցի: Սայլին լծված չընտելացված էշի համառությամբ ես սկսեցի պայքարել իմ հաջողության թշնամու դեմ:

-Շնորհակալ եմ, ես էլի մի բան կցանկանայի հարցնել վաճառականին, - խոսեց սիրիացին: - Դու շքեղ թիկնոց ես կրում, ոչ այնպիսին, ինչպիսին աղքատ մարդիկ են կրում: Դու խոսում ես հաջողակ մարդու պես: Ասա մեզ՝ հիմա է՞լ ես դու ականջ դնում այդ հետաձգման շշուկներին, երբ լավ հնարավորությունը թակում է դուռդ:

-Ինչպես մեր ընկերը, ով անասուններ է գնում, ես նույնպես ստիպված եղա խոստովանել իմ անվճռականությունն ու հաղթահարել այն, - պատասխանեց առևտրականը: - Ինձ համար նույնպես անվճռականությունը թշնամի էր, որ միշտ կանգնում էր իմ ու իմ հաջողության միջև: Պատմությունը, որ պատմեցի ձեզ, միայն մեկն էր բազմաթիվ նման պատմություններից, որոնք պատահել են ինձ նախկինում: Պետք է խոստովանեմ, սակայն, որ հենց այդ չարիքը գիտակցվում ու ճանաչվում է, այն հաղթահարելն այլևս դժվար չէ: Ոչ ոք կամավոր թույլ չի տա գողին գողանալ իր հացահատիկը: Ոչ էլ թույլ կտա, որ իր թշնամին վանի իր հաճախորդներին ու վնասի իր գործին: Ու հենց ես հասկացա, թե ինչպիսի՞ վնասներ է ինձ հասցնում այդ թշնամին, դժվար չէր նրան հաղթելը: Նախքան որևէ մեկը կհավակնի մասնաբաժին ունենալ Բաբելոնի հարստություններից՝ նա նույնպես պետք է ճանաչի, հասկանա ու հաղթի իր իսկ տատանվող էությունը: Ի՞նչ կասես, Արկա՛դ: Քանզի դու Բաբելոնի ամենահարուստ մարդն ես, և շատերը քեզ համարում են ամենահաջողակը: Համաձա՞յն ես դու ինձ հետ, որ մինչև մարդը չկարողանա իր մեջ հաղթել տատանվողի ոգին, իր հաջողության ճանապարհը փակ կլինի:

-Շատ ճիշտ է ասածդ, - ընդունեց Արկադը: - Ես իմ երկար կյանքի ընթացքում շատ եմ տեսել մարդկանց, ովքեր անցել են առևտրի, գիտության և ուսման ճանապարհներով: Հնարավորություններն

այցելում էին բոլոր այդ մարդկանց: Ոմանք արեցին իրենց քայլերն ու հասան հարստության և կարողացան իրագործել իրենց ամենանվիրական իղձերն ու նպատակները: Բայց, ցավոք, մեծ մասն այդպես էլ չազատվեց տատանվողի իր էությունից ու այդպես էլ առաջխաղացում չունեցավ: - Արկադը շրջվեց դեպի մանածագործը: - Դու էիր, որ առաջարկեցիր քննարկել հաջողության թեման: Հիմա ասա մեզ. ինչ ես դու մտածում այս ամենի մասին…

- Այժմ ես տեսնում եմ հաջողությունն այլ լույսի ներքո: Ես այն համարում էի մի շատ ցանկալի բան, որը կարող է պատահել մարդուն՝ առանց նրա կողմից որևէ ջանքի: Հիմա գիտակցում եմ, որ իրականությունն այլ է: Մեր քննարկումներից պարզ է դառնում, որ հաջողության արժանանալու համար մարդը պետք է կարողանա օգտագործել ընձեռված հնարավորությունները: Ուստի այսուհետ ես կլինեմ ուշադիր ու կփորձեմ բաց չթողնել ապագայում ինձ ընձեռված հնարավորությունները:

-Դու շատ ճիշտ ընկալեցիր մեր քննարկումների արդյունքում ի հայտ եկած ճշմարտությունները, - պատասխանեց Արկադը: - Հաջողությունը, որը մենք գտնում ենք, հաճախ հետևում է հնարավորությանը, և չափազանց հազվադեպ է լինում այլ կերպ: Մեր ընկեր առևտրականը մեծ հաջողության կհասներ, եթե օգտվեր իրեն ընձեռված հնարավորությունից: Նմանապես մեր ընկեր գնորդը հաջողության կհասներ, եթե ավարտին հասցներ գործարքը, այնուհետև հոտը վաճառեր մեծ շահույթով: Մենք սկսեցինք այս քննարկումը՝ հասկանալու համար, թե ինչպես կարելի է հասնել հաջողության: Ես զգում եմ, որ մենք գտել ենք միջոցը: Երկու պատմությունները ցույց տվեցին, թե ինչպես է հաջողությունը հետևում հնարավորությանը: Հենց դա է ճշմարտությունը, որ բազմաթիվ հաջողության պատմություններում, անկախ դրանց հաղթած կամ պարտված լինելուց, մնում է անփոփոխ: Սա է ճշմարտությունը. հաջողությանը կարելի է արժանանալ, եթե օգտվես ընձեռված հնարավորությունից: Նրանք, ովքեր պատրաստ են ընդունել հնարավորությունները, գրավում են հաջողության Աստվածուհուն, որն ուրախ է օգնել նրանց, ովքեր գոհացնում են իրեն: Ամենից շատ նրան դուր են գալիս գործի մարդիկ: Գործողությունը ձեզ կառաջնորդի դեպի հաջողություն, որին ձգտում եք:

ԳՈՐԾԻ ՄԱՐԴԻԿ ՎԱՅԵԼՈՒՄ ԵՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԱՍՏՎԱԾՈՒՀՈՒ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆԸ:

Ոսկու 5 օրենքները

-Ոսկով լի քսակ, թե՞ կավե սալիկին փորագրած իմաստուն խոսքեր. եթե դու այս ընտրությունն ունենայիր, ո՞րը կընտրեիր…

Ունկնդիրների՝ անապատի արևից թխացած դեմքերը փայլեցին հետաքրքրությունից:

-Ոսկին… ոսկին…, - բացականչեցին բոլոր քսանյոթն էլ:

Ծեր Կալաբաբը խորհրդավոր ժպտաց:

-Ուշադրություն, - ձայն տվեց նա, բարձրացնելով ձեռքը, - Ակա՛նջ դրեք հեռվում ոռնացող գայլերին: Նրանք ոռնում ու վնգստում են, քանզի սոված են: Կերակրի՛ր նրանց. ու ի՞նչ կանեն նրանք… Կկովեն կամ փքված, գոռոզ կեցվածք կընդունեն: Հետո նորից կկովեն ու կգոռոզանան՝ առանց մի պահ անգամ վաղվա մասին մտածելու, որը, անշուշտ, գալու է: Մարդկանց հետ էլ նույն բանն է տեղի ունենում: Տո՛ր նրանց ընտրություն ոսկու ու իմաստության միջև, ու ի՞նչ կանեն նրանք… Կանտեսեն իմաստությունն ու կվատնեն ոսկին: Իսկ հաջորդ օրն առանց ոսկու մնալով՝

նորից կսկսեն ոռնալ ու վնգստալ: Ոսկին նրանց համար է, ովքեր գիտեն ոսկու օրենքներն ու հետևում են դրանց:

Կալաբաբն իր ոտքերին ձգեց ճերմակ թիկնոցը, քանզի գիշերային սառը քամի էր փչում:

-Քանի որ դուք ինձ հավատարմորեն եք ծառայել մեր երկարատև ճամփորդության ընթացքում, լավ եք նայել ուղտերիս, դիմացել եք անապատի տաք ավազներին, ավազակախմբերից խիզախորեն պաշտպանել եք իմ ապրանքը, այս գիշեր ես ձեզ կպատմեմ ոսկու հինգ օրենքների մասին մի պատմություն, ինչպիսին դուք երբևէ չեք լսել: Ուշադիր լսեք իմ խոսքերը, քանզի եթե հասկանաք դրանց նշանակությունն ու հետևեք դրանց, ապա շուտով կունենաք շատ ոսկի:

Նա տպավորիչ դադար վերցրեց: Բաբելոնի բյուրեղյա երկընքում՝ կապույտի մեջ, պայծառ փայլում էին աստղերը: Խմբի հետևում միմյանց սեղմված կանգնած էին նրանց վրանները՝ անապատային հնարավոր փոթորիկից պաշտպանվելու համար: Վրանների կողքին պարկերով կուտակված էր ապրանքը՝ ծածկված մորթիներով: Ուղտերը փռվել էին գետնին. նրանց մի մասը որոճում էր, մի մասն էլ խռմփացնում միալար ձայնով:

-Դու մեզ բազում լավ պատմություններ ես պատմել, Կալաբաբ, - ասաց բեռնակիրների գլխավորը: - Քո իմաստությունը մեզ կառաջնորդի վաղը, երբ մեր ծառայությունն ավարտվի քեզ մոտ:

-Ես միշտ պատմել եմ օտար և հեռավոր երկրներում իմ արկածների մասին, բայց այսօր կպատմեմ մի հարուստ մարդու՝ Արկադի իմաստնության մասին:

-Մենք շատ ենք լսել նրա մասին, - ասաց բեռնակիրների գլխավորը: - Նա համարվում է Բաբելոնում երբևէ ապրած ամենահարուստ մարդը:

-Նա ամենահարուստ մարդն էր, քանզի ամենաիմաստունն էր ոսկու հետ կապված գործերում: Այս գիշեր կպատմեմ ձեզ նրա մեծ իմաստնության մասին, որն ինձ պատմել է Նոմասիրը՝ նրա որդին, շատ տարիներ առաջ Նինվեում, երբ ես դեռ պատանի էի: Իմ վարպետն ու ես շատ երկար գիշեր ենք անցկացրել Նոմասիրի պալատում: Ես օգնում էի իմ վարպետին, ով Նոմասիրին գորգեր էր մատակարարում: Նոմասիրն առանձին-առանձին զննելուց հետո ընտրում էր այն գույները, որոնք նրան բավարարում էին: Վերջապես իր ընտրությունից բավարարված՝ նա մեզ հրավիրեց ըմպելու հազվագյուտ մի խմիչք, որը շատ ջերմացրեց իմ ներսը, քանզի ես սովոր չէի նման խմիչքների: Ապա նա պատմեց մեզ իր հոր՝ Արկադի մեծ իմաստնության մասին այս պատմությունը, որն էլ հենց կպատմեմ ձեզ: Ինչպես գիտեք, Բաբելոնում սովորություն

կա, որ հարուստ հայրերի որդիներն ապրում են իրենց ծնողների հետ՝ հուսալով, որ կժառանգեն կալվածքն ու կարողությունը: Արկադն այս սովորույթին դեմ էր: Ուստի, երբ Նոմասիրը դարձավ տղամարդ, Արկադը կարգադրեց, որ նրան կանչեն իր մոտ, և դիմեց նրան. «Որդի՛ս, իմ ցանկությունն է, որ դու ժառանգես իմ կարողությունը: Բայց, նախևառաջ, դու պետք է ապացուցես, որ ունես բավարար իմաստնություն այն խելամիտ տնօրինելու համար: Ուստի, ցանկանում եմ, որ դու ինքուրույն կյանք մտնես և ցուցադրես ոսկի կուտակելու և մարդկանց կողմից հարգանք վայելելու քո կարողությունը: Սկզբի համար կտամ քեզ երկու բան, որից ես՝ որպես աղքատ երիտասարդ, զրկված եմ եղել, երբ սկսել եմ կառուցել իմ ճակատագիրը: Առաջին՝ ես քեզ տալիս եմ ոսկու այս պարկը, և եթե դու դա իմաստուն կերպով օգտագործես, այն լավ հիմք կդառնա քո ապագա հաջողության համար: Երկրորդ՝ ես քեզ տալիս եմ այս կավե սալիկը, որի վրա փորագրված են ոսկու հինգ օրենքները, և եթե դու կիրառես դրանք քո գործողություններում, ապա ձեռք կբերես արհեստավարժություն և ապահովություն: Այսօրվանից սկսած՝ տասը տարի անց վերադարձի՛ր հայրական տուն և հաշվետվություն տուր քո ապրած կյանքի ու ձեռքբերումների մասին: Եթե ապացուցես, որ արժանի ես, ապա կժառանգես իմ ունեցվածքը: Հակառակ դեպքում ես այն կտամ քրմերին՝ իմ հոգու խաղաղության համար»: Այդպիսով, սեփական ճակատագիրն անձամբ կերտելու համար Նոմասիրն իր հետ վերցրեց մի պարկ ոսկին, մետաքսով նրբորեն փաթաթած կավե սալիկը, ծառային, երկու ձի և ճամփա ընկավ: Տասը տարի անց Նոմասիրը, պայմանավորվածության համաձայն, վերադարձավ իր հոր տուն: Արկադը մեծ տոնախմբություն կազմակերպեց որդու վերադարձի առթիվ՝ հրավիրելով բոլոր ընկերներին ու հարազատներին: Ճաշկերույթի ավարտից հետո հայրն ու մայրը նստեցին սրահի մի կողմում տեղակայված իրենց գահանման աթոռներին, իսկ Նոմասիրը կանգնեց նրանց առջև՝ հաշվետվություն տալու համար, ինչպես խոստացել էր հորը: Երեկո էր: Վառվող լամպերի կանթեղներից գոլորշիացող յուղից սենյակը մշուշոտ էր դարձել ու կիսախավար: Սպիտակ բրդյա հագուստով ծառաները ռիթմիկ թափահարում էին արմավենու երկար տերևները, որպեսզի ցրեին խոնավ մշուշը: Շատ տպավորիչ տեսարան էր: Նոմասիրի կինը, երկու որդիները, ընկերներն ու ընտանիքի այլ անդամներ նստած էին Նոմասիրի հետևում՝ գորգերին, որպեսզի ուշադիր լսեն նրա խոսքը: «Հայր իմ», - սկսեց նա իր խոսքը հարգանքով, - «ես խոնարհվում եմ քո իմաստնության առաջ: Տասը տարի առաջ, երբ ես տղամարդ դառնալու շեմին էի, դու ինձ ճանապարհ դրեցիր, որպեսզի ես տղամարդ դառնամ տղամարդկանց մեջ՝ քո հարստութ-

յան վասալը դառնալու փոխարեն: Դու ինձ առատորեն տվեցիր քո ոսկին, դու ինձ առատորեն տվեցիր քո իմաստությունը, բայց պիտի խոստովանեմ, որ ոսկին ես շատ արագ վատնեցի, քանզի այն փախչում էր իմ անփորձ ձեռքերից, ինչպես որ վայրի նապաստակն է փախչում երիտասարդ որսորդից առաջին իսկ հնարավորության դեպքում»: Հայրը ժպտաց բարյացակամորեն. «Շարունակի՛ր որդիս, քո պատմությունն ինձ հետաքրքրում է իր բոլոր մանրամասներով»: «Ես որոշեցի գնալ Նինվե, քանզի այն աճող քաղաք էր, ու ես ակնկալում էի այնտեղ հնարավորություններ գտնել: Ես միացա մի քարավանի ու նրա անդամների մեջ բազմաթիվ ընկերներ ձեռք բերեցի, նրանց մեջ՝ երկու ճարտարախոս երիտասարդ, ովքեր ունեին քամու նման սլացող մի կատարյալ ճերմակ ձի: Ճանապարհին նրանք ինձ թաքուն պատմեցին, որ Նինվեում մի շատ հարուստ մարդ կա, ով ունի այնպիսի մի սրընթաց ձի, որը երբևէ չի պարտվել: Ձիու տերը վստահ է, որ չկա այնպիսի մի կենդանի ձի, որն ավելի արագ լինի: Ուստի նա պատրաստ է դնել ցանկացած խաղադրույք, որ իր ձին կհաղթի ցանկացած ձիու Բաբելոնում: Իմ նոր ընկերները վստահեցրին, որ իրենց ձիու համեմատ՝ այն մեկն ընդամենը մի սովորական ավանակ է, որին հաղթելը դժվար չի լինի: Եվ այդպես ես, ոգևորված նրանց ծրագրով, մեծ խաղադրույք կատարեցի իմ ընկերների ձիու վրա, որը, սակայն, պարտվեց, և ես շատ ոսկի կորցրեցի», - հայրը քմծիծաղ տվեց, - «ավելի ուշ ես պարզեցի, որ դա խարդախ ծրագիր էր, և այդ տղաները մշտապես ճամփորդում էին քարավանների հետ՝ փնտրելով հերթական զոհին: Մեծահարուստ ձիատերը Նինվեից նրանց գործընկերն էր և նրանց հետ կիսում էր շահած գումարը: Այսպիսով, սա իմ առաջին դասն էր, որ ես սովորեցի ինքնուրույն: Շուտով ես պետք է մեկ ուրիշ դաս առնեի, որը նույնչափ դառն էր: Քարավանում կար մեկ այլ երիտասարդ, որի հետ ես ընկերացա: Նա ինձ պես հարուստ ծնողների որդի էր և ինձ նման ճամփորդում էր դեպի Նինվե՝ նոր հնարավորություններ գտնելու համար: Մեր ժամանումից շատ ժամանակ չանցած՝ նա ինձ ասաց, որ մահացել է մի հարուստ վաճառական, և որ շատ էժան գնով կարելի է գնել նրա խանութն՝ իր ապրանքներով հանդերձ: Մենք պայմանավորվեցինք, որ պիտի լինենք հավասար գործընկերներ, բայց նա, նախևառաջ, պիտի վերադառնար Բաբելոն՝ իր ոսկու հետևից: Նա ինձ առաջարկեց, որպեսզի խանութը գնենք իմ ոսկով, իսկ ինքն իր ոսկին կներդնի ավելի ուշ: Նա երկար ժամանակ ձգձգեց իր ճամփորդությունը դեպի Բաբելոն, սակայն այդ ընթացքում լիովին ապացուցեց, որ ինքն անխոհեմ գնորդ է և հիմար վատնող: Վերջապես ես նրան գործից դուրս վռնդեցի, բայց գործն արդեն այնքան էր տուժել, որ մնացել էր միայն չվաճառվող ապրանքը, իսկ նորը գնե-

լու համար այլևս ոսկի չկար: Այն, ինչ մնացել էր, ես չնչին գումարով զոհաբերեցի մի իսրայելցու: Շուտով, սիրելի՛ հայր իմ, եկան ավելի դժվար օրեր: Ես աշխատանք էի փնտրում, սակայն չէի գտնում, քանզի չունեի ո՛չ փորձ, ո՛չ որևէ հմտություն, որոնք թույլ կտային ինձ գումար վաստակել: Ես վաճառեցի իմ ձիերը: Վաճառեցի ծառայիս: Վաճառեցի ավելորդ հագուստս, որպեսզի սնունդ և քնելու տեղ ունենամ, բայց ամեն օր վիճակս էլ ավելի էր վատանում: Չնայած այդ ծանր վիճակին՝ հիշում էի քո վստահությունն ու հավատն իմ հանդեպ: Դու ինձ ուղարկել էիր, որ ես տղամարդ դառնամ, ու ես վճռական էի, որ պետք է հասնեմ դրան»: - Մայրը ծածկեց դեմքն ու անձայն լաց եղավ: - «Այդ պահին միտքս եկավ քո տված կավե սալիկը, որի վրա փորագրված էին ոսկու հինգ օրենքները: Ապա սկսեցի ուշադիր կարդալ այդ իմաստուն խոսքերը, ու կարդալու ընթացքում հասկացա, որ եթե ավելի շուտ կարդացած լինեի, ոսկիս չէի կորցնի: Ես անգիր սովորեցի այդ բոլոր օրենքները՝ վստահ ու պատրաստ, որ եթե հաջողության աստվածուհին նորից ինձ ժպտա, ապա ես նրան կմոտենամ տարիների իմաստնությամբ և ոչ թե երիտասարդի անփորձությամբ: Ձեր բոլորի բարօրության համար հիմա բարձրաձայն կկարդամ հորս ձեռքով գրած իմաստությունը, որ նա փորագրել էր այս կավե սալիկին և տվել ինձ տասը տարի առաջ.

ՈՍԿՈՒ ՀԻՆԳ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Ոսկին հեշտությամբ գալիս և կուտակվում է նրա մոտ, ով իր եկամտի առնվազն մեկ տասներորդն ուղղում է դեպի իր ու իր ընտանիքի ապագայի համար հարստություն ստեղծելուն:
Ոսկին իր ողջ ուժով ծառայում է իմաստուն տիրոջը, ով նրա համար գտնում է շահութաբեր աշխատանք:
Ոսկին կարիք ունի պաշտպանության, ուստի գերադասում է այն զգուշավոր տիրոջը, ով ներդրումներ է կատարում իմաստուն մարդկանց խորհուրդներով ու օգնությամբ:
Մարդը կորցնում է իր ոսկին, երբ ներդրում է կատարում այն բնագավառում, որից անտեղյակ է կամ երբ այն չեն խրախուսում փորձառու ու հմուտ մարդիկ:
Ոսկին փախչում է նրանցից, ովքեր գայթակղվում են գերշահույթ խոստացող նախագծերով կամ առաջնորդվում են սեփական անփորձությամբ ու ռոմանտիկ ձգտումներով:

Սրանք են ոսկու հինգ օենքները, որ գրվել են հորս կողմից: Ես հայտարարում եմ, որ սա ավելի մեծ արժեք ունի, քան ոսկին, և դա կցուցադրեմ իմ պատմության շարունակությամբ»: - Նա կրկին դիմեց հորը: - «Ես արդեն պատմեցի, թե ինչպիսի աղքատության ու հուսահատության էր հասցրել ինձ իմ անփորձությունը: Սակայն չկա անհաջողությունների շղթա, որ մի օր չավարտվի: Իմ անհաջողություններն ավարտվեցին, երբ վերջապես կարողացա աշխատանքի անցնել՝ որպես ստրուկների վերակացու, որոնք աշխատում էին քաղաքի արտաքին պարսպի վրա: Օգտվելով ոսկու առաջին օրենքից՝ առաջին եկամուտիս մեկ տասներորդը մի կողմ դրեցի ու շարունակեցի ամեն հնարավորության դեպքում այն ավելացնել: Այդ գործընթացը շատ դանդաղ էր ու տանջալի, քանզի մարդը պետք է նաև դրամ ունենա ապրելու համար: Ընդունում եմ, որ չափազանց խնայող եմ եղել ծախսերիս մեջ, քանզի շատ էի ցանկանում մինչև տասը տարին լրանալը վաստակել այնքան ոսկի, որքան դու էիր ինձ տվել, հայր իմ: Մի օր, ստրուկների տերը, ում հետ ես ընկերացել էի, նկատեց. «Դու չափից ավելի խնայողաբար ես ապրում: Արդյոք վաստակածդ կուտակում ես՝ առանց որևէ ներդրում անելու՞...»: «Այո, ես կուտակում եմ ոսկին», -պատասխանեցի ես, - «որպեսզի կարողանամ վերադարձնել հորս տված այն ոսկին, որն անզգուշորեն վատնեցի»: «Շատ գովելի է, իսկ դու գիտե՞ս, որ քո խնայած ոսկին կարող է աշխատել քեզ համար և վաստակել ավելի շատ ոսկի»: «Ավաղ, ես դառը փորձ եմ ունեցել, քանզի հորս տված ոսկին վատնել եմ, և ես հիմա վախենում եմ, որ նույնը կարող է պատահել նաև իմ կուտակածի հետ»: «Եթե դու ինձ վստահում ես, ապա ես քեզ կասեմ, թե ինչպես պետք է շահավետ ներդրումներ անել»: - պատասխանեց նա: - «Մի տարուց քաղաքի արտաքին պարիսպը պատրաստ կլինի, ուստի շատ բրոնզ է հարկավոր լինելու, որպեսզի բոլոր մուտքերի համար մեծ դարպասներ ձուլվեն, որոնք կպաշտպանեն արքային թշնամիներից: Ամբողջ Նինվեում այդքան մետաղ չկա, ու թագավորն էլ դրա մասին հոգ չի տարել: Ահա իմ ծրագիրը. մենք հավաքում ենք մեր ոսկիներն ու հանձնարարում քարավաններին, որ դրանով մեզ համար բերեն պղինձ ու անագ հեռու երկրներից: Երբ թագավորն ասի. ‹‹Սարքե՛ք հսկա դարպասները››, ապա մենք կլինենք միակ մարդիկ, ումից նրանք կարող են մետաղ գնել: Ուստի թագավորը մեծ գումար կվճարի դրա համար: Իսկ եթե հանկարծ թագավորը մեզանից այն չգնի, ապա միևնույն է, մենք կկարողանանք այն վաճառել հարմար գնով»: «Նրա առաջարկի մեջ տեսա ոսկու երրորդ օրենքից օգտվելու և իմ խնայողություններն իմաստուն մարդու խորհրդով ներդնելու հնարավորություն: Եվ ես չհիասթափվեցի: Մեր նախաձեռնությունը հաջողեց, և ոսկով

իմ փոքր խնայողությունները մեծապես աճեցին այս գործարքից: Այսպես ես ներգրավվեցի ներդրողների մի խմբի մեջ, ովքեր բավականաչափ իմաստուն ու բանիմաց էին ոսկին աշխատեցնելու հարցում: Նրանք մեծ զգուշավորությամբ մի լավ քննարկում էին ամեն մի նոր նախագիծ՝ նախքան կորոշեին ներդրում կատարել: Նրանք ուշադիր էին և ոչ մի դեպքում վտանգի չէին ենթարկում մայր գումարը՝ ներդրում կատարելով այնպիսի նախագծերում, որտեղ իրենց ոսկին չէր վերարտադրվի: Այնպիսի հիմար ծրագրեր, ինչպիսիք են ձիարշավը կամ իմ այն մյուս գործակցությունը, որի մեջ ես մտել էի իմ անփորձության պատճառով, այս մարդկանց դեպքում բացառվում էր: Նրանք անմիջապես կնկատեին բոլոր թույլ կողմերը: Այդ մարդկանց հետ համագործակցության արդյունքում ես սովորեցի ապահով կերպով ներդնել ոսկին՝ ակնկալելով շահութաբեր վերադարձ: Տարիների հետ իմ հարստությունն ավելի ու ավելի արագ էր աճում: Եվ ես վերադարձրեցի ոչ միայն այն, ինչ կորցրել էի, այլև շատ ավելին: Իմ ձախողումները, կորուստներն ու հաջողությունները, որոնք միաժամանակ նաև ոսկու հինգ օրենքների փորձարկումներ էին, ցույց տվեցին ու ապացուցեցին դրանց արդյունավետությունը: Ովքեր չեն տիրապետում ոսկու հինգ օրենքներին, նրանց մոտ ոսկին հազվադեպ է գալիս, իսկ գալու դեպքում էլ՝ արագ անհետանում: Փոխարենը՝ ովքեր կարողանում են օգտվել այս հինգ օրենքներից, նրանց մոտ ոսկին գալիս է պատրաստակամորեն և աշխատում է՝ որպես խոնարհ ծառա»: Նոմասիրն ավարտեց իր պատմությունն ու նշան արեց իր ծառային: Ծառան մեջտեղ բերեց երեք կաշվե ծանր պարկ: Դրանցից մեկը Նոմասիրը վերցրեց ու դրեց հոր ոտքերի առջև՝ ասելով. «Դու ինձ տվեցիր մի պարկ բաբելոնյան ոսկի: Ահա հիմա ես քեզ եմ վերադարձնում մի պարկ Նինվեի ոսկի՝ նույն քաշի: Արդար վերադարձ, ինչպես բոլորը կնկատեն: Դու տվել ես ինձ կավե սալիկ, որի վրա իմաստություն էր փորագրված: Ների՛ր, բայց այս դեպքում, ես այն ինձ եմ պահում և փոխարենը վերադարձնում եմ երկու պարկ ոսկի: Այդպիսով, ես ապացուցում եմ, հա՛յր իմ, որ նրա վրա փորագրված քո իմաստությունը ես ավելի եմ գնահատում, քան ոսկին: Ո՞վ կարող է ոսկով փոխհատուցել իմաստությունը: Իմաստությունն անգին է: Առանց իմաստության՝ եղած ոսկին կկորչի, իսկ իմաստությամբ չունևորի մոտ կգա ոսկին ու կբազմապատկվի: Ես անչափ հպարտ եմ, հա՛յր իմ, որ հիմա կանգնած եմ քո առջև ու ասում եմ, որ շնորհիվ քո տված իմաստության՝ ես կարողացա հարստանալ և հարգված լինել մարդկանց կողմից»: Հայրը հպարտորեն ձեռքը դրեց որդու գլխին. «Դու քո դասերը լավ ես յուրացրել, ու ես երջանիկ եմ, որ ունեմ այսպիսի որդի, ում կարող եմ վստահել իմ կարողությունը»:

Կալաբաբն ավարտեց իր պատմությունն ու քննող հայացքն ուղղեց հավաքված ունկնդիրներին:

-Ի՞նչ սովորեցրեց ձեզ Նոմասիրի մասին այս պատմությունը, - հարցրեց նա: - Ձեր մեջից ո՞վ կարող է գնալ իր հոր կամ իր կնոջ հոր մոտ ու նման հաշվետվություն տալ իր հաջողությունների մասին կամ՝ թե ինչպես է վարվել իր եկամուտների հետ: Ի՞նչ կմտածեն նրանք, եթե դուք ասեք. «Ես շատ եմ ճանապարհորդել, սովորել, աշխատել, վաստակել, բայց, ավաղ, շատ քիչ ոսկի ունեմ: Մի մասը ծախսել եմ խոհեմորեն, մի մասը՝ հիմարաբար, և մեծ մասը կորցրել եմ ոչ իմաստուն ճանապարհներով»: Դեռ կարծում եք անարդար օրինաչափությու՞ն է, որ ոմանք շատ ոսկի ունեն, իսկ մյուսները չունեն: Եթե այո, ապա շատ սխալվում եք: Մարդը շատ ոսկի ունի, երբ գիտի ոսկու հինգ օրենքներն ու առաջնորդվում է դրանցով: Քանզի ես սովորեցի ու հետևեցի ոսկու հինգ օրենքներին երիտասարդ տարիքում, ես դարձա հարուստ վաճառական: Ես իմ հարստությունը չեմ կուտակել ինչ-որ արտասովոր կախարդանքով: ***Արագ եկած հարստությունն արագ էլ հեռանում է:*** Հարստությունը, որն իր տիրոջ մոտ է մնում՝ պարգևելու հաճույք ու բավականություն, գալիս է աստիճանաբար, քանզի այն գիտելիքի ու հետևողական աշխատանքի արդյունք է: Ստեղծել հարստություն այդքան էլ բարդ բան չէ մտածող մարդու համար: Տարիներ շարունակ ստեղծածը հաստատուն պահպանելն է իմաստնությունը: Ոսկու հինգ օրենքները շռայլորեն վարձահատույց են լինում նրանց, ովքեր հետևում են այդ օրենքներին: Այս հինգ օրենքներից ամեն մեկն իր կարևոր նշանակությունն ունի, և եթե ուշադիր չեք եղել ու չեք հասցրել մտապահել դրանք, քանի որ արագ եմ խոսել, ապա հիմա կկրկնեմ դրանք ձեզ համար: Ես հինգ օրենքներն անգիր գիտեմ, քանզի իմ երիտասարդ տարիներին գիտակցեցի դրանց կարևորությունն ու իմաստությունը:

▸ Ոսկու առաջին օրենքը

Ոսկին հեշտությամբ գալիս և կուտակվում է նրա մոտ, ով իր եկամտի առնվազն մեկ տասներորդն ուղղում է դեպի իր ու իր ընտանիքի ապագայի համար հարստություն ստեղծելուն:

Ցանկացած մարդ, ով իր եկամուտների առնվազն մեկ տասներորդը հաստատուն կերպով կդնի մի կողմ և իմաստուն ներդրում կկատարի, անշուշտ, կստեղծի արժեքավոր կարողություն, որն ապագայում կայուն եկամուտ կբերի և կապահովի սեփական ընտանիքը, երբ աստվածները որոշեն նրան կանչել խավարի աշխարհ: Այս օրենքն ասում է, որ ոսկին պատրաստակամորեն գալիս է նման մարդու մոտ, և ես իմ կյանքով դրա ապացույցն եմ: Որքան շատ ոսկի էի հավաքում, այնքան ավելի շատ ու մեծ քանակությամբ էր ոսկին գալիս: Ոսկին, որ ես խնայել եմ, վաստակում է ավելին, և նրա վաստակածը նույնպես վաստակում է ավելին և այդպես շարունակ: Սա է հենց ոսկու առաջին օրենքը:

▸ Ոսկու երկրորդ օրենքը

Ոսկին իր ողջ ուժով ծառայում է իմաստուն տիրոջը, ով նրա համար գտնում է շահութաբեր աշխատանք:

Ոսկին միշտ պատրաստ է աշխատել: Այն անմիջապես սկսում է բազմապատկվել, հենց հարմար հնարավորություն է ստեղծվում: Ամեն մարդ, ով ներդրման համար կուտակած ոսկի ունի, այդ հնարավորությունը կգտնի և տարիների ընթացքում կբազմապատկի իր ոսկին:

Ոսկու երրորդ օրենքը

Ոսկին կարիք ունի պաշտպանության, ուստի գերադասում է այն զգուշավոր տիրոջը, ով ներդրումներ է կատարում իմաստուն մարդկանց խորհուրդներով ու օգնությամբ:

Իսկապես, ոսկին կառչում է զգուշավոր ներդրողից ու մնում է նրա մոտ և նույնքան արագորեն փախչում է անզգույշ ներդրողից: Մարդը, ով փնտրում և գտնում է ոսկու հարցում բանիմաց խորհրդատու, արագորեն սովորում է պահպանել իր կուտակածը և բավարարվածության հասնել իր խնայողությունների հարաճուն մեծացմամբ:

Ոսկու չորրորդ օրենքը

Մարդը կորցնում է իր ոսկին, երբ ներդրում է կատարում այն բնագավառում, որից անտեղյակ է կամ երբ այն չեն իրականացնում փորձառու ու հմուտ մարդիկ:

Մարդը, ով ունի ոսկի, սակայն չունի այն կառավարելու հմտություններ, միշտ իր ոսկին վատնում է անհաջող ծրագրերի ու անպետք իրերի վրա, քանզի դրանք նրան շահավետ են թվում: Հաճախ թվացյալ շատ շահավետ նախագծերը ձախողվում են, սակայն եթե սկսնակ ներդրողը քննարկեր բանիմաց մարդու հետ, ապա, ամենայն հավանականությամբ, փորձառու ներդրողը միանգամից ցույց կտար, որ այդ նախագծում շահույթ ստանալու հավանականությունը չափազանց քիչ է կամ ռիսկային: Ուստի երբ անփորձ ներդրողն առաջնորդվում է միայն իր տրամաբանությամբ, նա կարող է ներդրում կատարել մի բնագավառում, որից ոչինչ չի հասկանում, իսկ հետևանքը կարող է լինել այն, որ նա կկորցնի իր ներդրումը: Իմաստուն է նա, ով իր ներդրումները կատարում է՝ ոսկու հարցում փորձառու մարդկանց խորհուրդներին հետևելով:

Ոսկու հինգերորդ օրենքը

Ոսկին փախչում է նրանցից, ովքեր գայթակղվում են գերշահույթ խոստացող նախագծերով կամ առաջնորդվում են սեփական անփորձությամբ ու ռոմանտիկ ձգտումներով:

Առաջին անգամ դրամագլուխ կուտակած մարդկանց միշտ հետևում են զարմանահրաշ առաջարկներ: Հաճախ սկսնակ ներդրողները կարծում են, թե այդպիսի աննախադեպ առաջարկներին հետևելով՝ կարող են արագ հսկայական շահույթ ունենալ: Բայց փորձառու ներդրողն անմիջապես ցույց կտար առկա ռիսկերը, որոնք միշտ կան նման կայծակնային հաջողություն խոստացող նախագծերում: Զմոռանանք նաև Նինվեի խարդախներին, ովքեր հաճույքով խաբում են միամիտ ներդրողներին՝ նրանց ներքաշելով կասկածելի գործարքների մեջ:

Սրանով ավարտվում է իմ պատմությունը ոսկու հինգ օրենքների մասին: Այս պատմությամբ ես ներկայացրեցի ձեզ իմ սեփական հաջողության գաղտնիքները: Սակայն դրանք ամենևին էլ գաղտնիքներ չեն, այլ պարզ ճշմարտություններ, որոնք յուրաքանչյուր մարդ նախ պետք է սովորի, ապա հետևի դրանց, եթե ցանկանում է դուրս գալ այն բազմաթիվ մարդկանց շարքերից, ովքեր վայրի շների պես ամեն օր ստիպված են օրվա սնունդ հայթայթել: Վաղը մենք կմտնենք Բաբելոն: Տեսե՛ք, այն կրակը, որ հավերժ վառվում է Բելի տաճարում: Ոսկե քաղաքն արդեն մեր տեսադաշտում է: Վաղը դուք բոլորդ էլ կստանաք ձեր արդար քրտինքով վաստակած ոսկին: Այսօրվանից տասը տարի անց ի՞նչ կկարողանաք պատմել այդ ոսկու մասին: Եթե ձեր մեջ լինեն այնպիսիք, ովքեր Նոմասիրի նման իրենց ոսկու առնվազն մեկ տասներորդը կտրամադրեն հարստություն ստեղծելուն և կհետևեն Արակդի իմաստությանը, ապա տասը տարի անց Արկադի որդու նման կդառնան հարուստ ու հարգված մարդիկ: Մեր իմաստուն արարքները միշտ ուղեկցում են մեզ կյանքի ընթացքում՝ օգնելով և բավարարվածություն բերելով մեզ: Ճիշտ այդպես՝ անխոհեմ քայլերը մեզ անհաջողություններ ու տառապանքներ են բերում: Դրանք մոռանալ չի կարելի: Այդ տառապանքների առաջին շարքում են հիշողությունները բաց թողնված հնարավորությունների և անելիքների մասին: Բաբելոնի հարստությունն անսահման է, այնքան շատ, որ չկա մի մարդ, ով կարողանա այն հաշվել՝ ոսկու վերածելով: Ամեն տարի այդ հարստությունն ավելի է աճում և բազմապատկվում: Ինչպես ցանկացած երկրի գանձեր՝ դրանք պարգև են, այն առատ պարգևը, որը սպասում է նպատակասլաց ու արժանի մարդկանց, ովքեր ցանկանում են քայլեր կատարել՝ իրենց բաժինն ստանալու համար: Ձեր սեփական ցանկություններն իրենց մեջ մոգական ուժ են պարունակում: Համադրեք այդ ուժը ոսկու հինգ օրենքների իմացության հետ, և դուք կստանաք Բաբելոնի գանձերի ձեր բաժինը:

ՎԱՇԽԱՌՈՒՆ

Բաբելոնից

Հիսուն ոսկի: Նախկինում երբեք նիզակագործ Ռոդանն այդքան ոսկի չէր ունեցել իր կաշվե քսակում: Երջանիկ քայլում էր նա թագավորական մայրուղով՝ հենց նոր դուրս գալով թագավորի պալատից: Ամեն քայլի հետ ոսկու ուրախ զնգզնգոցն իր գոտուց կախված քսակի մեջ ամենաքաղցր երաժշտությունն էր, որ նա երբևէ լսել էր:

Հիսու՜ն ոսկի: Ամբողջն իրենն էր: Նա հազիվ էր կարողանում հավատալ իր բախտին: Ի՞նչ ուժ է գալիս այդ մետաղե զնգզնգան կտորներից: Նա կարող էր գնել՝ ինչ ուզում էր՝ մեծ տուն, հող, եղջերավոր անասուններ, ուղտեր, ձիեր, ձիակառքեր ու ամեն բան, ինչ ցանկանար:

Ի՞նչպես էր նա կիրառելու իր ոսկին: Այդ երեկո, երբ թեքվեց դեպի իր քրոջ տան կողմը, նա չէր կարողանում կենտրոնանալ որևէ այլ բանի վրա, բացի հենց ծանր ոսկե դրամներից, որոնք պետք է պահեր:

Մի քանի օր անց՝ երեկոյան, Ռոդանը մտավ ոսկու վարկատու և թանկարժեք զարդերի ու հազվագյուտ կտորների առևտրական Մաթոնի խանութ: Չնայելով ոչ աջ, ոչ ձախ՝ փայլփլուն, գույնզգույն ապրանքներին՝ նա գնաց ուղիղ դեպի վերջնամաս, որտեղ ապրում էր Մաթոնը: Այստեղ նա տեսավ հարգարժան Մաթոնին, ով թիկն էր տվել գորգին ու վայելում էր իր ընթրիքը, որն իրեն մատուցում էր սևամորթ ծառան:

-Ուզում եմ քեզանից խորհուրդ հարցնել, քանզի չգիտեմ՝ ինչպես վարվել…

Ռոդանը կանգնած էր հանդարտորեն, ոտքերն իրարից հեռու, երևում էր նրա մազոտ կուրծքը կաշվե բաճկոնի բացվածքից: Մաթոնի նեղ, գունատ դեմքը բարյացակամորեն ժպտաց նրան:

-Ի՞նչ վատ բան ես դու արել, որ հիմա այցելել ես ոսկու վարկատուին: Բախտդ չի՞ բերել խաղասեղանին… Գուցե մի գայթակղիչ կի՞ն է կյանքդ խառնել: Քեզ ճանաչում եմ երկար տարիներ, բայց դու երբեք չես եկել ինձ մոտ խորհրդի համար:

-Ոչ, ոչ: Ոսկի չեմ խնդրում: Չունեմ նման խնդիրներ: Եկել եմ՝ քեզանից իմաստուն խորհուրդ լսեմ:

-Լսե՛ք, լսե՛ք… Ի՞նչ է այս մարդն ասում… Ոչ ոք չի գալիս ոսկի վարկ տվողի մոտ խորհրդի: Կարո՞ղ է՝ ականջներս լավ չեն լսում…

-Ճիշտ են լսում…

-Իրո՞ք… Նիզակագործ Ռոդանը բոլորից խորամանկ է, քանզի եկել է Մաթոնի մոտ ոչ թե ոսկու, այլ խորհրդի համար… Շատերն են ինձ մոտ գալիս, որպեսզի իրենց կատարած սխալների համար պարտք վերցնեն, բայց մինչ օրս ոչ ոք չի ցանկացել ինձանից խորհուրդ լսել: Ո՞վ կարող է ավելի լավ խորհուրդ տալ, քան ոսկի պարտք տվողը, ում մոտ շատերը գալիս են փորձանքի պահին: Դու պետք է ինձ հետ կիսես իմ հացը, Ռոդան, - շարունակեց նա: - Դու այս երեկո կլինես իմ հյուրը: Անդո՛լ… - հրամայեց նա սևամորթ ծառային, - Մի լավ գորգ բե՛ր իմ ընկեր Ռոդանի համար… նիզակագործի, ով եկել է ինձանից խորհուրդ հարցնելու: Նա կլինի իմ պատվավոր հյուրը: Բե՛ր նրա համար լավ ուտեստներ ու ամենամեծ գավաթը: Նաև ամենաընտիր գինին, որ նա ախորժակով վայելի… Այժմ, ասա ինձ՝ ի՞նչն է քեզ տանջում…

-Թագավորից ստացած իմ նվերը…

-Թագավորի նվե՞րը… Թագավորը քեզ նվեր է տվել, ու դու դրանից տանջվու՞մ ես… Այդ ի՞նչ նվեր է…

-Թագավորը շատ հիացած էր իր պահակախմբի համար կատարած իմ գործով և դրա համար նա ինձ պարգևեց հիսուն ոսկի: Ու հիմա ես շատ մտահոգված եմ: Ամեն ժամ ինձ մարդիկ են դիմում, որպեսզի ես նրանց հետ կիսեմ իմ ոսկին կամ ինչ որ ծրագիր են

առաջարկում:

-Դա բնական է: Բոլորն էլ ուզում են ոսկի, իսկ ոսկի ցանկացողները միշտ ավելի շատ են, քան այն ունեցողները: Բայց չէ՞ որ ուղղակի կարող ես ասել՝ ոչ: Միթե՞ դու չես կարող կամք դրսևորել…

-Շատերին եմ ասում՝ ոչ, բայց երբեմն ավելի հեշտ է ասել՝ այո: Միթե՞ մարդը կարող է մերժել սեփական քրոջը, ում հետ այդքան կապված է…

-Իհարկե՝ ոչ… Քրոջ հետ պետք է կիսել հարստության ուրախությունը:

-Բայց նա խնդրում է ինձ իր ամուսնու՝ Արամանի համար… Քույրս ցանկանում է նրան դարձնել հարուստ վաճառական: Նա ասում է, որ իր Արամանը երբեք հնարավորություն չի ունեցել ու հիմա խնդրում է ինձ հնարավորություն տալ նրան իմ ոսկով, որպեսզի նա գործ սկսի, իսկ հետո ինձ կփոխհատուցի իր շահույթից:

-Իմ ընկեր, - ասաց Մաթոնը, - դու շոշափեցիր մի շատ կարևոր հարց: Ոսկին պատասխանատվություն է մարդու համար ու փոխում է նրա վերաբերմունքն իր շրջապատի հանդեպ: Մի կողմից ոսկին մտահոգություն է բերում, որպեսզի հանկարծ անիմաստ չվատնես այն կամ խաբեության զոհ չդառնաս, բայց մյուս կողմից էլ ոսկին ուժի և իշխանության զգացողություն է բերում և հնարավորություն է ընձեռում բարիք գործելու: Դու երբևէ լսել ես Նինվեից մի գյուղացու մասին, ով հասկանում էր կենդանիների լեզուն: Ես կպատմեմ քեզ այդ պատմությունը, որպեսզի դու տեսնես, որ ոսկով վարկ վերցնելն ու տալը շատ ավելին է, քան ընդամենը ոսկին մեկից մյուսին փոխանցելը: Եվ այսպես, գյուղացին, որ հասկանում էր կենդանիների լեզուն, հաճախ էր երեկոներն անցկացնում ագարակում՝ ուղղակի կենդանիներին լսելու համար: Մի երեկո նա լսեց, թե ինչպես է ցուլը բողոքում ավանակին իր դժվար կյանքից. «Առավոտից երեկո քաշում եմ գութանը, և նշանակություն չունի՝ որքան շոգ է, կամ թե որքան են հոգնած ոտքերս, կամ էլ թե լուծը վիզս քերում է, միևնույն է, ես պետք է աշխատեմ, իսկ դու կարծես անգործության մատնված լինես: Վրադ գունավոր ծածկոցներ են գցված, և քո գործը միայն այն է, որ տեղից տեղ քարշ տաս մեր տիրոջը: Երբ նա գնալու տեղ չունի, ապա դու ոչինչ չես անում, հանգստանում ես ու ամբողջ օրը կանաչ խոտ ես ուտում»: Ավանակը, չնայած իր բնածին հիմարությանը, լավ կենդանի էր, ու կարեկցեց ցուլին. «Իմ լավ ընկեր, իրոք դու շատ ես աշխատում, ու ես քեզ կօգնեմ հեշտացնել քո գործը: Կասեմ, թե ինչպես կարող ես մեկ օր հանգիստ ստանալ: Առավոտյան, երբ ծառան գա քեզ տանելու, պառկիր հատակին ու այնքան ոռնա, որ նա կարծի, թե դու հիվանդ ես ու չես կարող գործն անել»: Այսպիսով, եզն ընդունեց ավանակի խորհուրդն ու այդպես էլ արեց:

Առավոտյան ծառան վերադարձավ գյուղացու մոտ՝ ասելով, որ եզը հիվանդ է ու չի կարող աշխատել: «Այդ դեպքում», - ասաց գյուղացին, - «ավանակին լծիր, քանզի վարը պետք է տեղի ունենա»: Ավանակը, որն ընդամենը ուզում էր իր ընկերոջն օգնել, ստիպված էր ամբողջ օրն աշխատել եզի փոխարեն: Երբ գիշերը նրան արձակեցին ծանր գործից, նրա սիրտը դառնացած էր, ոտքերը շատ հոգնած էին, իսկ վիզն էլ հարվել էր լծից: Գյուղացին կրկին ոտքը կախ գցեց գոմի մոտ, որպեսզի լսի նրանց զրույցը: Եզն սկսեց առաջինը. «Դու իմ լավ ընկերն ես: Քո իմաստուն խորհրդի շնորհիվ ես մի ամբողջ օր հանգստացա»: «Իսկ ես», - հակադարձեց ավանակը, - «ինչպես բոլոր բարեսիրտ միամիտները, ովքեր ուզում են իրենց ընկերոջն օգնել, արդյունքում ստիպված եղա գործը նրա փոխարեն անել: Այսուհետ դու ինքդ քաշիր քո գութանը, քանզի ես լսեցի, որ տերն ասաց ծառային՝ եթե էլի հիվանդանաս, քեզ տանեն մսագործի մոտ: Հուսով եմ՝ նա այդպես էլ կանի, քանզի դու ծույլի մեկն ես»: Դրանից հետո նրանք այլևս բառ չփոխանակեցին և այդքանով ավարտվեց նրանց ընկերությունը: Հիմա ասա, Ռոդան, ո՞րն է այս պատմության խորհուրդը…

-Լավ պատմություն է, - ասաց Ռոդանը, - բայց ես չեմ տեսնում խորհուրդը:

-Չէի էլ կարծում, թե կտեսնես: Բայց այն գոյություն ունի և շատ պարզ է: Այն հետևյալն է. «Եթե ուզում ես օգնել ընկերոջդ, դա արա այնպես, որ քո վրա չվերցնես նրա բեռը»:

-Ես չէի մտածել այդ մասին: Շատ իմաստուն խորհուրդ է: Ես չեմ ուզում ինձ վրա վերցնել իմ քրոջ ամուսնու բեռը: Բայց ասա՛ ինձ… Դու շատերին ես վարկով փող տալիս: Նրանք միշտ վերադարձնում են, այնպես չէ՞…

Մաթոնը ժպտաց մի ժպիտով, որ հատուկ է փորձառու մարդկանց:

-Կարելի՞ է վարկ տալ մեկին, երբ գիտես, որ նա չունի միջոցներ այն վերադարձնելու համար: Չպե՞տք է արդյոք, որ վարկ տվողը լինի զգույշ և ուշադիր, որպեսզի հասկանա՝ վարկ վերցնողի նպատակը խելամի՞տ է, թե՞ ոչ, և արդյո՞ք այդ գումարը հետ կվերադառնա: Թե՞, միգուցե, դու տալիս ես մեկին, ով անընդունակ է իմաստուն կերպով օգտագործել այն և կզրկի քեզ քո վաստակած գումարից ու կմնա մի պարտքի տակ, որը նա երբեք չի կարող վճարել: Ես քեզ ցույց կտամ որոշ իրեր, որոնք պահվում են իմ սնդուկում՝ որպես գրավ, և թող նրանք պատմեն քեզ իրենց պատմությունները:

Մաթոնը սենյակ բերեց մի սնդուկ, որը ծածկված էր խոզի կարմիր կաշվով ու բրոնզե զարդանախշերով: Նա դրեց այն գետնին ու ծնկի եկավ դիմացը՝ ձեռքերը դնելով խուփին:

-Յուրաքանչյուր մարդուց, ում ես վարկ եմ տալիս, գրավ եմ վերցնում և իմ այս սնդուկում պահում եմ այնքան ժամանակ, մինչև նա իր պարտքը վերադարձնի: Երբ վարկը փակում են, ես նրանց վերադարձնում եմ իրենց գրավները: Բայց այն չմարելու դեպքում գրավները հավերժ մնում են ինձ մոտ ու ինձ հիշեցնում են այն մարդկանց մասին, ովքեր չարդարացրեցին վստահությունը: Ամենապահով վարկերը, ինչպես ապացուցում է իմ գրավների սնդուկը, նրանք են, որոնց գրավն անհամեմատ ավելի թանկ է, քան պարտքի գումարը: Դրանք կարող են լինել հողեր, թանկարժեք զարդեր, ուղտեր կամ այլ իրեր, որոնք վաճառելով՝ կարող եմ վերադարձնել պարտքը: Գրավի որոշ առարկաներ այնքան թանկարժեք զարդեր են, որ պարտքից էլ շատ արժեն: Որոշներն էլ պայմանագրի տեսքով են, որ եթե չկարողանան ժամանակին պարտքը փակել, ապա ես իրավունք ունեմ վերցնել ու վաճառել նրանց անշարժ գույքի մի մասը: Նման վարկերի դեպքում ես վստահ եմ, որ իմ ոսկին հետ կվերադարձվի տոկոսների հետ միասին, քանզի նրանք գույք են գրավադրել: Մյուս խումբը, որ նույնպես վստահելի վարկառուներ են, դրանք այն մարդիկ են, ովքեր ընդունակ են վաստակել: Նրանք քեզ նման մարդիկ են, ովքեր կայուն աշխատանք կամ ծառայություն և հաստատուն եկամուտներ ունեն: Նրանք ունեն եկամուտ և եթե ազնիվ են ու եթե դժբախտություն չպատահի, ապա ես գիտեմ, որ նրանք նույնպես կվերադարձնեն ոսկին, որ ես պարտքով եմ տվել և այն տոկոսները, որ ես նշանակել եմ: Նման վարկերը հիմնված են մարդկային ջանքի վրա: Մարդիկ էլ կան, որ ո՛չ նյութական կարողություն ունեն, ո՛չ էլ եկամուտ: Կյանքը դժվար է, ու միշտ էլ լինում են մարդիկ, ովքեր չեն կարողանում իրենց կյանքը դասավորել: Եթե ես նրանց գումար տամ հենց այնպես, նույնիսկ փոքր գումար, ավաղ, ես այն կկորցնեմ և արդյունքում կաղքատանամ: Նման մարդկանց, եթե ես վարկ տամ, ապա միայն այն դեպքում, եթե նրանց համար մեկ այլ վստահելի ու հարգարժան մարդ երաշխավորի:

Մաթոնը բացեց խուփը: Ռոդանը առաջ եկավ: Ամենավերևում նա մի բրոնզե վզնոց տեսավ՝ վառ կարմիր կտորի մեջ: Մաթոնը վերցրեց վզնոցն ու զգացմունքային շոշափեց այն:

-Սա հավերժ կմնա ինձ մոտ, քանզի վարկ վերցնողն անցել է այն աշխարհ: Սա ինձ համար շատ թանկ է, քանզի իմ լավ ընկերոջ մասին հիշողությունն է վառ պահում: Մենք գործընկերներ էինք, և ամեն ինչ շատ հաջող էր ընթանում, մինչև այն պահը, երբ նա իրեն կին բերեց արևելքից. շատ գեղեցիկ էր, բայց մեր կանանց նման չէր: Հրաշագեղ արարած: Իմ ընկերն առատորեն ծախսում էր իր ոսկին՝ տիկնոջ ցանկությունները բավարարելու համար: Նա շփոթահար եկավ ինձ մոտ, երբ ոսկին վերջացավ: Մենք քննարկեցինք իրավի-

ճակը: Ասացի, որ կօգնեմ իրեն, որպեսզի նա նորից վերականգնի իր երբեմնի կարգավիճակը: Նա էլ երդվեց բոլոր աստվածներով, որ ջանք չի խնայի՝ նպատակին հասնելու համար: Բայց նա այդպես էլ չհասավ իր նպատակին: Վեճի ժամանակ կինը դանակով հարվածեց իմ ընկերոջ ուղիղ սրտին, որը մի ժամանակ հենց իրեն էր նվիրել:

-Իսկ տիկի՞նը, - հարցրեց Ռոդանը:

-Սա նրանն է… - Մաթոնը վերցրեց վառ կարմիր կտորը: - Խոր կսկիծից տիկինն իրեն նետեց Եփրատը… Այս երկու վարկերը երբեք չեն մարվի: Մնդուկը պատմում է քեզ, Ռոդա՛ն, որ մարդիկ հույզերի ալեկոծության մեջ վստահելի վարկառու չեն: Ահա, սա արդեն ուրիշ պատմություն է, - ասաց Մաթոնը՝ վերցնելով ցուլի ոսկորից պատրաստված մի մատանի: - Սա պատկանում է մի ագարակատիրոջ: Ես նրանից գորգեր եմ գնում: Մորեխի դժվար տարի պատահեց, և նրանք առանց բերքի մնացին: Ես օգնեցի նրան, ու երբ նոր բերք եղավ, նա ինձ վերադարձրեց վարկը: Հետո նա մի անգամ եկավ ու պատմեց, որ լսել է յուրահատուկ այծերի մասին, որոնք ապրում են հեռավոր երկրներում: Նրանք երկար ու նուրբ բուրդ ունեն, ու դրանով նա կարող է արտակարգ գորգեր գործել, ինչի նմանը Բաբելոնում երբեք չեն տեսել: Նա ցանկանում էր մի ամբողջ հոտ գնել, բայց այդքան ոսկի չուներ: Ես նրան վարկ տվեցի, որի միջոցով նա կարողացավ երկար ճանապարհ կտրել ու գնել այդ այծերին: Հիմա նա այդ հոտով է զբաղվում, և ես վստահ եմ՝ եկող տարի Բաբելոնը կտեսնի այնպիսի գորգեր, որպիսիք երբեք չեն եղել: Շուտով ես նրան կվերադարձնեմ իր մատանին: Իսկ նա հավատացնում է, որ պարտաճանաչ կերպով կփակի վարկը:

-Կա՞ն նման վստահելի վարկառուներ… - հարցրեց Ռոդանը:

-Եթե վարկ են վերցնում այնպիսի ծրագրերի համար, որոնք հետագայում շահույթ կբերեն, ապա, որպես կանոն, նման վարկերը հաջող են լինում: Բայց երբ վարկ են վերցնում անբարո ծրագրերի համար կամ դրանց պատճառով, ապա զգուշացնում եմ քեզ, որ տվածդ փողը այլևս չես տեսնի:

-Պատմի՛ր ինձ սրա պատմությունը, - ասաց Ռոդանը՝ ձեռքը գցելով ծանր ոսկյա ապարանջանին՝ զարդարված եզակի թանկարժեք զարդերով:

Կանայք, կարծես, գրավում են իմ լավ ընկերոջ ուշադրությունը, - ժպիտով նկատեց Մաթոնը:

-Բայց չէ՞ որ ես քեզանից շատ ավելի երիտասարդ եմ, - Ի պատասխան՝ ասաց Ռոդանը:

-Ճիշտ ես, բայց ասեմ քեզ, որ այս պատմության մեջ զգացմունքային ոչինչ չկա: Սրա տերը գեր ու կնճռոտված կին է, խոսում է

շատ ու այդքանով հանդերձ՝ ասում այնքան քիչ, որ ինձ ուղղակի խենթացնում է: Մի ժամանակ նրանք շատ փող ունեին ու իմ լավ հաճախորդներից էին, բայց վատ ժամանակներ եկան նրանց համար: Նա որդի ուներ, ում ցանկանում էր վաճառական դարձնել: Նա եկավ ինձ մոտ ու ոսկով վարկ վերցրեց, որպեսզի որդին մի քարավանատիրոջ հետ գործընկեր դառնա, որը քաղաքից քաղաք անցնելով փոխանակում և առևտուր էր անում: Շուտով պարզվեց՝ քարավանատերը մի ավազակ էր, որը, պատանուն միայնակ, առանց փողի ու որևէ միջոցի օտար քաղաքում թողնելով, չքվել էր: Նա իր քարավանով ճամփա էր ընկել պայմանավորված ժամից շուտ, երբ տղան դեռ անտեղյակ քնած էր: Հուսանք՝ երբ պատանին տղամարդ դառնա, ես կսկսեմ վարկս տոկոսներով հետ ստանալ, իսկ առայժմ, բացի անվերջ շատախոսությունից, ուրիշ բան չկա: Բայց պետք է ասեմ, որ այս գրավադրված զարդերի գինը վարկի մայր գումարի գնին կլինի:

-Այդ կինը վերցնելուց առաջ խորհուրդ չհարցրե՞ց, թե արդյոք նման իրավիճակում վարկ վերցնելը խելամի՞տ քայլ է:

-Ճիշտ հակառակը: Նա արդեն իսկ պատկերացնում էր, թե որդին դարձել է Բաբելոնի հաջողակ ու հարգանք վայելող քաղաքացի: Ուստի եթե այդ ծրագրի դեմ մի բան ասեի, կզայրացնեի նրան: Սկզբում ես ահագին ընդդիմացա վարկ տալուն, քանի որ գիտակցում էի նման անփորձ պատանու հետ կապված ռիսկերը, բայց երբ տիկինն այդքան թանկ գրավ դրեց, ես այլևս խոսելու ոչինչ չունեի: Իսկ սա, - շարունակեց Մաթոնը՝ թափահարելով պարանի մի կծիկ, - պատկանում է Ներբուտարին՝ ուղտերի առևտրականին: Երբ նա նախիր է գնում, որն իր ունեցած գումարից ավելին արժի, նա բերում է այս կապն ու վարկ է վերցնում ինձանից, այնքան, որքան պակասում է գործարքի համար: Նա խելացի առևտրական է: Ես նրա ունակությունների վրա վստահ եմ և գիտեմ, որ նա լավ գործարք կանի, ուստի հանգիստ վարկը տալիս եմ: Բաբելոնում շատ ուրիշ առևտրականներ էլ են վայելում իմ վստահությունը, քանզի նրանք շատ հուսալի վարքի տեր են: Նրանց գրավները հաճախ են մտնում իմ սնդուկ ու դուրս գալիս այնտեղից: Լավ առևտրականները մեր քաղաքի համար գանձ են, և ինձ համար շահավետ է նրանց օգնելը, որպեսզի նրանք, էլ ավելի մեծացնեն իրենց առևտուրն ու այդպիսով նպաստեն Բաբելոնի բարգավաճմանը:

Մաթոնը վերցրեց մի փիրուզից փորագրված բզեզ և արհամարհանքով նետեց հատակին:

-Եգիպտական բզեզ: Տղան, ում սա պատկանում է, ընդհանրապես չի մտահոգվում, թե ես հետ կստանամ, թե՞ ոչ իմ ոսկին: Երբ ես նրան հարցնում եմ, նա պատասխանում է. «Ինչպե՞ս կարող եմ

ես վերադարձնել իմ պարտքը, երբ ինձ հետապնդում է չար բախտը: Դու, միևնույն է, շատ փող ունես»: Ինչ կարող եմ անել: Գրավը պատկանում է նրա հորը՝ մի ազնիվ մարդու, որը սակայն աղքատացել է, որովհետև զրկվել է սեփական հողից ու նախիրից իր որդու գործերին աջակցելու հետևանքով: Սկզբում երիտասարդի գործերը հաջող էին ընթանում, բայց հենց այդ պատճառով նա իր գլուխը կորցրեց՝ ձգտելով էլ ավելի մեծ շահույթների: Իսկ նա դեռ բավարար գիտելիք չուներ: Եվ նրա ձեռնարկած մեծ գործերը ձախողվեցին: Երիտասարդությունը հավակնոտ է: Այն միշտ նախընտրում է հարստության կարճ ու հեշտ ճանապարհները և ձգտում է հաջողության բերած բարիքներին: Արագ հարստանալու համար երիտասարդները հաճախ ոչ խելամիտ վարկեր են վերցնում: Երիտասարդները, չունենալով լուրջ փորձառություն, չեն հասկանում, որ անհույս պարտքերը նման են խոր փոսի, որի մեջ մարդը կարող է արագ հայտնվել, սակայն փոսից դուրս գալու համար ստիպված է լինելու շատ երկար տանջվել: Դա մի տառապանքի փոս է, որտեղ արևոտ օրն ամպամած է թվում, իսկ գիշերը դառնում է երկար ու անտանելի անհանգիստ քնի պատճառով: Այնուհանդերձ, ես դեմ չեմ վարկ վերցնելուն: Ճիշտ հակառակը: Ես դա խրախուսում եմ, եթե այն վերցվում է խելամիտ նպատակի համար: Ես ինքս իմ առաջին շահույթը գրանցել եմ՝ որպես պարտքով ոսկի վերցրած առևտրական: Ինչ պետք է անի նման դեպքերում վարկ տվողը: Երիտասարդն աղերսագին վարկ է խնդրել, բայց նրա նախաձեռնությունները ձախողվել են: Արդյունքում նա հուսահատվել է: Եվ այլևս ոչ մի ջանք չի գործադրում իր պարտքը մարելու համար: Իմ խիղճն էլ չի տանում, որ նրա հորը զրկեմ հողից ու նախիրից:

-Դու ինձ շատ հետաքրքիր պատմություններ պատմեցիր, - ընդհատեց Ռոդանը, - Բայց ես չլսեցի իմ հարցի պատասխանը: Արդյոք ես պե՞տք է իմ հիսուն ոսկին պարտքով տամ քրոջս ամուսնուն… Դրանք ինձ համար շատ թանկ են:

-Քո քույրը հիանալի կին է, ում ես շատ եմ հարգում: Եթե նրա ամուսինը գա ինձ մոտ և հիսուն ոսկի ուզի, նախևառաջ ես կհարցնեմ, թե ինչի՞ համար է նա այն ուզում: Եթե նա ասի, որ ուզում է ինձ նման առևտրական դառնալ և թանկարժեք զարդերի ու շքեղ կահույքի առուծախով զբաղվել, ապա ես կհարցնեմ՝ իսկ դու ի՞նչ գիտես առևտրի մասին: Դու գիտե՞ս, թե որտեղից կարող ես ամենաէժան գնով զարդեր գնել… Եվ դու գիտե՞ս, թե որտեղ կարող ես ամենահարմար գնով վաճառել դրանք… Կարո՞ղ է նա այդ երկու հարցերին այո պատասխանել…

-Ոչ, չի կարող, - ընդունեց Ռոդանը: - Նա ինձ շատ է օգնել նիզակներ պատրաստելիս և խանութում:

-Այդ դեպքում, ես նրան կասեմ, որ իր նպատակը խելամիտ չէ: Վաճառականը նախ պետք է այդ գործի մասին գիտելիք ձեռք բերի: Նրա հավակնությունն ինքնին, որքան էլ արժեքավոր լինի, իրատեսական չէ, և ես նրան ոսկի չէի տա: Իսկ եթե նա ասի՝ ես վաճառականներին շատ եմ օգնել, ես գիտեմ, թե ինչպես ճամփորդել դեպի Սմիրնա ու էժան գնով գորգեր գնել, որոնք գործում են տնային տնտեսուհիները, ես նաև ճանաչում եմ Բաբելոնի հարուստ մարդկանց, որոնց կվաճառեմ այդ գորգերը թանկ գնով, այդ դեպքում ես կասեմ՝ քո նախաձեռնությունը խելամիտ է, ու ծրագիրդ՝ արժանավոր: Ես պատրաստ եմ քեզ վարկ տալ հիսուն ոսկի, եթե դու կարող ես գրավ թողնել ինձ մոտ՝ որպես երաշխիք, որ պարտքդ կվերադարձնես: Բայց եթե նա ասի՝ ես որևէ երաշխիք չունեմ, բացի նրանից, որ ես հարգարժան մարդ եմ, և որ ես լավ կվճարեմ քեզ պարտքիս դիմաց, այդ դեպքում ես կպատասխանեմ՝ ինձ համար թանկ է ոսկու յուրաքանչյուր կտոր: Սմիրնայի ճանապարհին քեզ վրա կարող են հարձակվել գողերը և տանել ոսկին կամ վերադառնալիս գողանալ գորգերը, այդ դեպքում դու չես կարողանա ինձ վճարել, և ես կկորցնեմ իմ ոսկիները: Ինչպես տեսնում ես, Ռոդան, ոսկին վարկ տվողի ապրանքն է: Այն հեշտ է տալը: Ու եթե այն խելամտորեն չի տրված, ապա այն դժվար է հետ ստանալը: Իմաստուն վարկ տվողը չի ցանկանում ռիսկի գնալ՝ առանց ոսկին հետ ստանալու երաշխիքի: Լավ է՝ օգնել կարիքի մեջ հայտնված մարդկանց, լավ է՝ օգնել նրանց, ում հետ ճակատագիրը դաժան է վարվել, լավ է՝ օգնել նրան, ով նոր է սկսում ծրագրեր իրականացնել, քանզի ես անկեղծ ուզում եմ, որ երիտասարդները հաջողության հասնեն ու դառնան հարգարժան քաղաքացիներ, սակայն օգությունը պիտի լինի խելամիտ, որպեսզի չստացվի ավանակի պատմության նման, երբ ուրիշի բեռը ստիպված լինես դու տանել՝ նրան օգնելու բարի մղումից դրդված: Նորից ես ծավալվեցի ու հեռացա քո տված հարցից, Ռոդա՛ն, բայց ահա և իմ պատասխանը՝ պահի՛ր քեզ քո հիսուն ոսկին: Այն քո թափած քրտինքի արդյունքն է, ու ոչ ոք իրավունք չունի քեզ վրա այդ հարցում ճնշում գործադրել: Միայն դու, ըստ քո ազատ կամքի, կարող ես որոշել, թե ինչպես այն տնօրինես: Եթե ցանկանում ես այն որպես վարկ տալ, որպեսզի քո ոսկին ավելի շատ վաստակի, ապա այն տուր զգուշորեն և տարբեր ծրագրերի համար: Ես չեմ սիրում, երբ ոսկին անգործ է մնում, բայց առավել ևս չեմ սիրում ռիսկային ծրագրեր: Քանի՞ տարի ես դու աշխատել, որպես նիզակագործ:

-Ամբողջ երեք տարի…

-Իսկ բացի թագավորի նվերից, էլ ի՞նչ ես խնայել:

-Երեք ոսկի:

-Ուրեմն, քո ամեն մի աշխատանքային տարում դու նեղություն կրելով կարողացել ես խնայել մեկ ոսկի՞…

-Ճիշտ, ինչպես դու նկատեցիր…

-Ուրեմն հիսուն ոսկու համար քեզանից կպահանջվի հիսուն տարվա զոհողություն…

-Այո, դա մի ամբողջ կյանք է…

-Կարծում ես քույրդ կցանկանա՞, որ քո հիսուն տարվա աշխատանքը վտանգվի իր ամուսնու առևտրային փորձարկումներով…

-Ոչ, եթե ես խոսեմ քո բառերով…

-Ուրեմն գնա նրա մոտ ու ասա՝ երեք տարի ես ամեն օր՝ առավոտից գիշեր, աշխատել եմ, բացի տոն օրերից, ու ինձ զրկել եմ բարիքներից, որ իմ սիրտն է ցանկացել: Ամեն մի նման տարվա դիմաց կարողացել եմ խնայել մեկ ոսկի: Դու իմ թանկագին քույրն ես, և ես շատ կուզեմ, որ ամուսինդ հաջողակ լինի իր բռնած գործում: Եթե նա կարող է տրամադրել իր գործի ծրագիրը, որն իմ ընկեր Մաթոնը կհամարի խելամիտ ու իրատեսական, ապա ես մեծ սիրով կտրամադրեմ նրան իմ մի ամբողջ տարվա խնայողությունը, որպեսզի նա հնարավորություն ստանա ապացուցելու, որ կարող է հաջողել: Այդպես վարվիր, ու եթե նա իր մեջ ունի հաջողության հասնելու հոգի, նա դա կապացուցի: Իսկ եթե նա ձախողվի, ապա նրա վերցրած պարտքը չի լինի այնքան մեծ, որ նա չկարողանա մի օր այն մարել: Ես պարտքով ոսկի եմ տալիս, քանզի ունեմ ավելին, քան ինձ պետք է իմ սեփական գործերի համար: Ես ուզում եմ, որ իմ հավելյալ ոսկին աշխատի ուրիշների նախագծերում և էլ ավելի շատ ոսկի վաստակի: Ես ցանկություն չունեմ իմ ոսկին ռիսկի ենթարկել, քանզի դրա համար ես շատ եմ աշխատել ու ինձ շատ նեղություն տվել: Ուստի ես այն երբեք չեմ տա մեկին, ում չեմ վստահում, և ով կարող է այն վտանգի ենթարկել: Վարկ չեմ տա նաև նրան, ում դեպքում վստահ չեմ, որ կստանամ իմ տոկոսները կանոնավոր կերպով: Ռոդա՛ն, ես պատմեցի քեզ իմ գրավ՛սերի սնդուկի որոշ գաղտնիքներ: Դրանցից դու կարող ես հասկանալ մարդկային թուլությունների և պարտք վերցնելու գայթակղության մասին, երբ հետ ստանալու որևէ հնարավորություն չկա: Դու տեսար, թե որքա՛ն հաճախ է լինում, երբ որևէ մեկը կարծում է, թե ոսկի ունենալու դեպքում արագ կհարստանա, ինչն իրականում միայն դատարկ ցանկություն է, քանզի այն ամրապնդված չէ համապատասխան հմտություններով և գիտելիքներով: Ռոդա՛ն, այժմ դու ունես ոսկի, որ պետք է գործի դնես, որպեսզի քեզ համար այն ավելի շատ ոսկի աշխատի: Դու կարող ես դառնալ ճիշտ ինձ պես ոսկով վարկ տվող: Եթե կարողանաս քո ոսկին զգուշությամբ ու խնամքով պահել, ապա այն քեզ առատ եկամուտ կբերի և կդառնա հաճույքի ու շահույթի հարուստ աղբյուր

քո ողջ կյանքի համար: Բայց եթե թույլ տաս, որ այն ձեռքիցդ փախչի, ապա կդառնա ցավի ու ափսոսանքի մշտական աղբյուր այնքան ժամանակ, քանի դեռ հիշողությունդ քեզ չի դավաճանել: Ի՞նչ ես ամենաշատը ցանկանում քո քսակի ոսկուց…

-Այն ապահով պահել:

-Իմաստուն է ասված, - նկատեց Մաթոնը: - Քո առաջին ցանկությունն ապահովությունն է: Կարծում ես, որ այն իսկապես ապահով կլինի՞ քո քրոջ ամուսնու ձեռքերում…

-Վախենամ, որ՝ ոչ, քանզի նա ոսկու հետ վարվելիս իմաստուն չէ:

-Այդ դեպքում, չարժի, տուրք տալով զգացմունքայնությանը, քո ոսկին վստահել որևէ մեկին: Եթե ուզում ես օգնել ընտանիքիդ, բարեկամներիդ ու ընկերներիդ, ապա մտածիր ու գտիր այլ տարբերակ դա անելու, այլ ոչ թե ռիսկի ենթարկիր քո ստեղծած հարստությունը: Հիշիր, որ ոսկին միշտ անսպասելի ուղիներով փախչում է նրանցից, ովքեր նրան պահելու հմտություններ չունեն: Այդպես, ավելի լավ է այն վատնես՝ քեզ տարաբնույթ ճոխություններ թույլ տալով, քան կորցնես այն՝ տալով ուրիշին, սակայն փոխարենը ոչինչ չստանալով: Ապահովությունից բացի, էլ ի՞նչ ես ակնկալում քո ոսկուց…

-Որ այն ավելի շատ ոսկի վաստակի:

-Դու կրկին իմաստուն ես խոսում: Իրոք որ այն պետք է վաստակի և բազմապատկվի: Խելամտորեն ներդրված ոսկին կարող է կրկնապատկվել և մինչև խոր ծերություն եկամտով ապահովել: Եթե ոսկին ներդնես ռիսկային նախագծերում, ապա վտանգի կենթարկես նաև քո ապագա եկամուտները: Ուստի չխաբվես անիրատես մարդկանց ֆանտաստիկ ծրագրերով, ովքեր կարծում են, թե գիտեն՝ ինչպես ոսկուն ստիպել վաստակել միանգամից մեծ գումարներ: Նման ծրագրերը երազկոտների մտքի արգասիք են, ովքեր չեն հասկանում առևտրի օրենքները: Եղիր զգուշավոր ու պահպանողական քո ակնկալիքներում, որպեսզի վաստակես՝ ինչ կարող ես և պահպանես ու վայելես քո հարստությունը: Ոսկին դնել մի գործի մեջ, որը խոստանում է անհավանական մեծ շահույթ, նշանակում է՝ բացել դուռը նրա կորստի առաջ: Ճանապարհներ փնտրի՛ր՝ համագործակցելու այն մարդկանց հետ, ովքեր ապացուցել են, որ իրենք հաջողակ են ու հմուտ իրենց նախագծերում ու կարողանում են առատ եկամուտ ունենալ, և թող որ նրանց փորձն ու իմաստնությունն առաջնորդեն նաև քեզ: Այդպիսով, դու կկարողանաս խուսափել այն անհաջողություններից, որոնք հետապնդում են հարուստների զավակներից շատերին, ում աստվածները ոսկի են պարգևել:

Երբ Ռոդանն ուզում էր շնորհակալություն հայտնել նրան իմաստուն խորհրդի համար, Մաթոնը նրան ընդհատեց.

-Թագավորի նվերը քեզ մեծ իմաստություն կսովորեցնի: Եթե դու ուզում ես պահպանել քո հիսուն ոսկին, ապա պետք է աչալուրջ ու շրջահայաց լինես: Շատ գայթակղություններ կարող են լինել, շատերը քեզ խորհուրդներ կտան, մեծ եկամուտներ ստանալու բազմաթիվ հնարավորություններ կառաջարկվեն: Սակայն իմ սնդուկի գրավների պատմությունները թող քեզ միշտ զգոն պահեն. նախքան ոսկու որևէ կտորի թույլ կտաս լքել քո քսակը, վստահ եղիր, որ այն ապահով ձեռքերում է և կրկին վերադառնալու է: Եթե ապագայում էլ իմ խորհուրդի կարիքն ունենաս, վերադարձիր, ես ուրախությամբ քեզ խորհուրդ կտամ: Ու մինչ գնալդ կարդա այս խոսքը, որ ես փորագրել եմ սնդուկի խուփի վրա: Այն վերաբերում է թե՛ վարկ վերցնողին, թե՛ տվողին.

ԱՎԵԼԻ ԼԱՎ Է ՄԻ ՓՈՔՐ ԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ, ՔԱՆ ՄԵԾ ԱՓՍՈՍԱՆՔ

ԲԱԲԵԼՈՆԻ

պարիսպները

Տարեց ռազմիկ Բանզարը կանգնած էր դեպի պարիսպների գլուխը տանող ճանապարհին: Այնտեղ՝ պարիսպների վրա, անձնուրաց կռվում էին անխոնջ զինվորները: Նրանցից էր կախված չքնաղ քաղաքի ճակատագիրը: Լսվում էին հարձակվողների գոչյունն ու աղաղակները, ձիերի դոփյունն ու վրնջյունը, բրոնզե դարպասներին հարվածող նիզակների դղրդյունը: Փողոցներում՝ բրոնզե դարպասներից ներս, կանգնած էին նիզակակիր զինվորները՝ պատրաստ պաշտպանելու մուտքերը, եթե դարպասները տեղի տային: Սակայն պաշտպանները սակավաթիվ էին, քանզի թագավորն իր հիմնական զորքով արշավում էր էլամացիների դեմ: Թագավորի բացակայության ժամանակ որևէ հարձակում չէր սպասվում, բայց անսպասելիորեն ասորական զորքը հայտնվեց հյուսիսից: Այժմ Բաբելոնի ճակատագիրը կախված էր պարիսպներից:

Բազմաթիվ գունատ ու սարսափած քաղաքացիներ հավաքվել էին Բանզարի մոտ և անհամբերությամբ լուրերի էին սպասում ճակատամարտից: Նրանք ցավով հետևում էին զոհվածների ու վիրավորների հոսքին, որը չէր դադարում:

Մոտենում էր հարձակման վճռորոշ պահը: Թշնամին երեք օր քաղաքը շրջապատելուց հետո հանկարծակի ուժերը կենտրոնացրել էր հենց այդ դարպասի մոտ ու գրոհում էր այն: Պաշտպանները պարսպի վրայից խոցում էին հարձակվողներին, նետահարում էին նրանց, եռացող յուղեր էին լցնում նրանց վրա, իսկ վերև հասածներին նիզակահարում էին: Թշնամու նետաձիգները հազարավոր նետերի տարափ էին ուղարկում պարիսպների վրա և մահացու խոցում քաղաքի պաշտպաններին:

Տարեց Բանզարը գտնվում էր լավ դիտակետում, որն ամենամոտն էր ճակատամարտին, և առաջինն էր իմանում ամեն կարևոր լուր, ամեն արձագանք թշնամու հարձակման կամ հետ մղման մասին:

Մի ծեր վաճառական դողացող ձեռքերով մոտեցավ նրան.

-Ասա ինձ, ասա ինձ, - աղաչում էր նա, - ասա, որ նրանք չեն կարող ներխուժել: Իմ որդիները մեր բարի արքայի հետ են: Ոչ ոք չկա, որ պաշտպանի իմ ծեր կնոջը: Նրանք կթալանեն իմ ունեցվածքը… Իմ ուտելիքը… Ոչինչ չեն թողնի… Մենք ծեր ենք, շատ ծեր ենք ինքներս մեզ պաշտպանելու համար… Եվ շատ ծեր ենք ստրուկ դառնալու համար… Մենք սովամահ կլինենք: Ասա, որ նրանք չեն կարող ներխուժել…

-Հանգստացիր՛, բարի՛ վաճառական, - պատասխանեց Բանզարը: - Բաբելոնի պարիսպներն ամուր են: Վերադարձիր շուկա և ասա կնոջդ, որ Բաբելոնի պարիսպները կպաշտպանեն ձեզ և ձեր ամբողջ ունեցվածքը, ինչպես պաշտպանում են արքայի գանձերը: Հնարավորինս մոտ եղեք պարիսպներին, որպեսզի դրանց վրայով անցնող նետերը պատահական ձեզ չխոցեն:

Մի կին, երեխան ձեռքին, գրավեց նոր հեռացած ծերունու տեղը:

-Զինվո՛ր, ի՞նչ լուր կա պարսպի վերևից: Ասա՛ ինձ ազնվորեն, որ ես էլ հանգստացնեմ իմ ամուսնուն: Նա ջերմության մեջ պառկած է իր ստացած ահավոր վերքերից, բայց պահանջում է իր համազգեստն ու վահանը, որպեսզի շառնակի ինձ ու երեխային պաշտպանել: Նա ասում է, որ ահավոր կլինի, եթե հանկարծ վրեժխնդրությամբ լի թշնամին ներս թափանցի…

-Բարի սրտով լավ մայրիկ, վստահ եղիր Բաբելոնի պարիսպները կպաշտպանեն քեզ ու քո երեխային: Նրանք բարձր են ու ամուր: Չէ՞ որ լսում ես ձայները մեր վճռական մարտիկների, որ եռացող յուղը լցնում են աստիճանով վեր բարձրացող թշնամու վրա…

-Այո, բայց ես լսում եմ նաև մեր դարպասներին հասցվող հարվածների ձայնը:

-Վերադարձի՛ր ամուսնուդ մոտ: Ասա նրան, որ մեր դարպասներն ամուր են ու կդիմանան այդ հարվածներին: Եթե որևէ մեկն էլ հաջողացնում է բարձրանալ պարսպին, խոցվում է պատրաստ կանգնած մեր զինվորների կողմից: Շենքերի տակով զգույշ քայլի՛ր, մինչ հասնես քո տուն:

Բանզարը մի կողմ կանգնեց, որպեսզի ճանապարհ տա դեպի վեր շտապող զինվորներին: Հենց զինվորներն իրենց վահանները շխշխկացնելով ու ծանր քայլքով անցան նրա կողքով, մի փոքրիկ աղջնակ քաշեց Բանզարի գոտուց.

-Ասա ինձ, զինվո՛ր, մենք ապահո՞վ ենք..., - աղերսեց նա: - Ես սարսափելի ձայներ եմ լսում, ես տեսնում եմ արնածոր մարդկանց, ես այնքան վախեցած եմ... Ի՞նչ կլինի մեր ընտանիքի հետ... մայրիկիս, փոքրիկ եղբորս ու մեր նորածնի հետ...

Մռայլ, ծեր զինվորականն աչքերը թարթեց, ու ձեռքը մեկնեց երեխային:

-Մի վախեցիր, փոքրի՛կս, - ասաց Բանզարը: - Բաբելոնի պարիսպները կպաշտպանեն քեզ, մայրիկիդ, փոքիկ եղբորդ ու նորածնին: Հենց այս դեպքերի համար է բարի թագուհի Շամիրամը կառուցել այս պարիսպները հարյուր տարի առաջ: Երբևէ ոչ ոք չի կարողացել հաղթահարել այս պարիսպները: Վերադարձի՛ր ու ասա մայրիկիդ, եղբորդ ու փոքրիկին, որ հանգիստ լինեն. Բաբելոնի պարիսպները նրանց կպաշտպանեն:

Օրը օրի հետևից էր անցնում, իսկ ծեր Բանզարը կանգնած էր իր դիրքում ու հետևում էր ժամանող նորանոր ջոկատներին, որոնք համալրում էին պաշտպանների շարքերը և կռվում մինչև վիրավորվելը կամ զոհվելը: Դրան գումարած՝ Բանզարը միշտ շրջապատված էր անհանգիստ քաղաքացիների բազմությամբ, որոնք անդադար հետաքրքրվում էին, թե արդյոք պարիսպները կդիմանա՞ն հարձակմանը: Եվ բոլորին նա նույն պատասխանն էր տալիս հին զինվորականի վեհությամբ. ‹‹Բաբելոնի պարիսպները ձեզ կպաշտպանեն››:

Երեք շաբաթ ու հինգ օր հարձակումը չէր թուլանում և ավելի դաժան էր դառնում: Բանզարն ավելի ու ավելի մռայլ էր դառնում, ատամներն ավելի պինդ սեղմած, կանգնած անցուղու մոտ, հետևում էր, թե ինչպես է վիրավորների չդադարող հոսքից թափվող արյունը ոտքերի տակ վերածվում ցեխի: Օր օրի ավելանում էին սպանված հարձակվողների դիակների կույտերը պարիսպների տակ, և ամեն գիշեր նրանք քարշ էին տալիս հետ իրենց դիակներն ու թաղում անապատում: Չորրորդ շաբաթվա հինգերորդ գիշերը

աղմուկ-աղաղակն անհետացավ: Արևի առաջին շողերի հետ հեռվում փոշու ամպ երևաց, որն իր հետևից թողնում էր թշնամու հեռացող զորքը: Քաղաքի պաշտպանները հուժկու բացականչություններ արձակեցին, և դրանց իմաստը բոլորը հասկացան: Այն կրկնեցին պարիսպների ներսում սպասող մարդիկ, ապա և արձագանքը տարածվեց քաղաքի փողոցներում փոթորկի ուժգնությամբ: Մարդիկ դուրս թափվեցին տներից: Փողոցները լի էին խանդավառ բազմությամբ: Շաբաթներով կուտակված վախի զգացումը պոռթկաց ուրախության պայթյունով: Բելի աշտարակի վրա երևացին հաղթանակի կրակները: Կրակի կապույտ ծուխը վեր խոյացավ երկինք՝ ամենուր ազդարարելու համար հաղթանակի լուրը:

Բաբելոնի պարիսպները ևս մեկ անգամ ցույց տվեցին իրենց հզորությունը՝ պաշտպանելով քաղաքի գանձերն ու քաղաքացիներին: Բաբելոնն այսպես դիմակայեց ու հարատևեց հարյուրամյակներ շարունակ՝ շնորհիվ իր կատարյալ պաշտպանության: Նա չէր կարող իրեն թույլ տալ թերանալ պաշտպանության մեջ: Բաբելոնի պարիսպները մարդու պաշտպանված լինելու կենսական պահանջմունքի և ցանկության մի արտակարգ օրինակ են: Այս ձգտումը բնորոշ է մարդկային տեսակին: Այն այսօր էլ նույնքան ուժեղ է, որքան նախկինում, միայն թե հիմա մենք ունենք ավելի լայն ու ավելի կատարյալ մեթոդներ դրան հասնելու համար: Այսօր ապահովագրության, խնայողական ավանդների ու հուսալի ներդրումների անառիկ պարիսպների ներքո՝ մենք պաշտպանվում ենք հնարավոր դժբախտություններից, որոնք կարող են թակել յուրաքանչյուրի դուռն ու տեղավորվել նրա տան օջախի մոտ:

ՄԵՆՔ ՉԵՆՔ ԿԱՐՈՂ ԱՊՐԵԼ ԱՌԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

ՈՒՂՏԱՎԱՃԱՌԸ

Բաբելոնից

Որքան մարդը սոված է, այնքան նրա միտքն ավելի պայծառ է աշխատում, և նա ավելի զգայուն է դառնում ուտելիքի հոտերի նկատմամբ:

Տարկադը՝ Ազուրի որդին, հաստատ այդպես էր կարծում: Ամբողջ երկու օր նա բան չէր կերել, բացի այն երկու հատիկ խուրմայից, որ հաջողացրել էր ձեռք գցել այգու պատի վրայից: Ավելին չկարողացավ պոկել, քանզի զայրացած տանտիրուհին նրան քշեց այնտեղից: Տիկնոջ ականջ ծակող ձայնը դեռ զրնգում էր նրա գլխում, երբ անցնում էր վաճառասեղանների արանքով: Դա նրան հիշեցնում ու հետ էր պահում վաճառվող մրգերից մեկը թոցնելու մտքից:

Միայն հիմա էր նա նկատում, թե որքա՜ն շատ սնունդ կա Բաբելոնում, և թե ի՜նչ բուրավետ է այն: Հեռանալով շու-

կայից՝ նա անցավ ճաշարանի մոտով ու սկսեց հետ ու առաջ անել: Միգուցե այստեղ նա հանդիպի մի ծանոթ մարդու, մեկին, ումից նա կարող է պղնձադրամ խնդրել ու դրանով արժանանալ ճաշարանի տիրոջ հանդուրժող հայացքին և ապա հագեցնել իր քաղցը: Նա լավ գիտեր, թե ինչպիսի՛ կոշտ ընդունելություն կստանա, եթե մտնի՝ առանց պղնձի:

Իր շփոթության մեջ չնկատեց, որ երես առ երես բախվեց մեկին, ումից ամենաշատը կուզեր խուսափել. դա ուղտերի վաճառական Դեբասիրն էր՝ բարձրահասակ ու ոսկրոտ: Բոլոր ծանոթներից ու անծանոթներից, ում նա պարտք էր, Դեբասիրն ամենաանտանելին էր, քանզի Տարկադը միշտ խախտում էր իր խոստումները, իսկ Դեբասիրն օր ու արև չէր տալիս նրան:

Դեբասիրի դեմքը պայծառացավ.

-Պահ, սա կարծես Տարկադն է… Հենց այն մարդը, ում շատ կուզեի հանդիպել, որպեսզի նա վերադարձնի իր երկու պղինձ պարտքը, որ ինձանից վերցրել էր մեկ ամիս առաջ և մեկ արծաթը, որ դրանից առաջ էի իրեն տվել: Ինչ լավ է, որ մենք հանդիպեցինք, քանզի հենց այսօր ես այդ փողի կարիքն ունեմ: Ինչ կասես տղա…

Տարկադն սկսեց կակազել ու կարմրեց: Նրա ստամոքսը շատ դատարկ էր, որպեսզի կարողանար ճարտարախոս Դեբասիրին բացատրություն տալ:

-Ներողություն, ես շատ եմ ցավում, - ասաց նա ցածր, - բայց այսօր չունեմ ո՛չ պղինձ և ո՛չ էլ արծաթ, որ կարողանամ քեզ վճարել…

-Ուրեմն գնա և հայթայթիր, - պնդեց Դեբասիրը: - Ինչու՞ դու չես փորձում քեզ նեղություն տալ ու հայթայթել այդ գումարը, որը, ես՝ որպես քո հոր հին ընկեր, պարտքով տվեցի, երբ դու կարիքի մեջ էիր…

-Դժբախտությունները հետապնդում են ինձ, և այդ պատճառով չեմ կարողանում պարտքս փակել…

-Ասում ես՝ դժբախտությու՞ն… Քո սեփական թուլությունների համար մի մեղադրիր աստվածներին: Դժբախտությունները միշտ հետապնդում են նրանց, ովքեր ավելի շատ պարտք վերցնելու մասին են մտածում, քան այն վերադարձնելու մասին: Տղա՛, արի ինձ հետ, ես սոված եմ ու գնում եմ՝ հաց ուտելու: Մի բան կուտեմ և քեզ կպատմեմ իմ պատմությունը:

Տարկադը սարսռաց Դեբասիրի կոշտ, ուղիղ խոսքից, բայց և լավ զգաց, որ իրավունք ունի մտնել այդքան ցանկալի դռներից ներս: Դեբասիրը նրան հրեց դեպի սենյակի անկյունը, և նրանք նստեցին գորգերի վրա: Կոսկորը, ով ճաշարանի տերն էր, մոտեցավ նրանց:

Դեբասիրը դիմեց նրան իրեն հատուկ անկաշկանդ ոճով.

-Կոսկո՛ր, անապատի գեր մողես, բե՛ր ինձ այծի բուդ՝ լավ խորոված, հյութը մեջը, հաց ու ամեն տեսակ բանջարեղեն, քանզի լավ սոված եմ: Այս ընկերոջս չմոռանաս: Բե՛ր նրան մի սափոր ջուր: Լավ սառը թող լինի, քանզի շատ շոգ օր է:

Տարկադի սիրտը ճմլվեց: Նա պիտի այսպես նստի ու ջուր խմի՞, մինչ Դեբասիրն ախորժակով վայելում է ամբողջ բուդը: Նա բան չասաց: Ասելու բան էլ չուներ, խոսելու տեղ էլ չկար:

-Մի ճանապարհորդ էր եկել Ուրֆայից և պատմում էր, որ կար մի հարուստ մարդ, ով պատվիրել էր քարն այնպես բարակ տաշել, որ հնարավոր լինի դրա միջով տեսնել: Այնուհետև քարը տեղադրել էր իր տան պատուհաններից մեկի վրա՝ անձրևից պաշտպանվելու համար: Ինչպես ճանապարհորդն է ասում՝ քարը դեղին գույն ուներ, և իրեն թույլ էին տվել այդ քարի միջով դուրս նայել, և երբ նա նայել էր, ամեն բան տարօրինակ էր երևացել, գունափոխված, ոչ այնպես, ինչպես իրականում է: Ի՞նչ կասես, Տարկադ… Կարծում ես, իրո՞ք կարող է ամբողջ աշխարհը մարդուն այլ գույնով ներկայանալ…

-Կարծում եմ՝ այո,- պատասխանեց Տարկադն՝ ավելի շատ ուշքն ու միտքը այծի բդին:

-Այո, ես էլ եմ այդպես կարծում, քանզի ինքս այդպիսի վիճակում եմ եղել, երբ աշխարհն ուրիշ գույնով էի տեսնում: Բայց, բարեբախտաբար, իմ դասը քաղեցի ու սկսեցի այն նորից իր իրական գույների մեջ տեսնել:

-Դեբասիրը հիմա պատմություն է պատմելու, - ասաց քիչ հեռու ճաշողն իր սեղանակցին, և մոտեցրեց իր նստագորգը Դեբասիրին:

Մյուս ճաշողները նույնպես մոտեցան ու մի փոքրիկ կիսաշրջան կազմեցին: Տարկադի համար անտանելի էր լսել նրանց ծամելու ձայներն ու նաև զգալ նրանց մսոտ մարմինների հպումն իրեն: Միայն նա էր առանց ուտելիք: Դեբասիրը նրան ուտելիք չէր առաջարկել, անգամ նշան չէր տվել, որ կարող է վերցնել իր ափսեից գետնին ընկած հացի կտորը:

-Պատմությունը, որ ես հիմա կպատմեմ, - սկսեց Դեբասիրը՝ մի պահ դադար վերցնելով ու մի լավ պատառ բդից կծելով, - վերաբերում է իմ երիտասարդ տարիներին, ու թե ինչպես ես դարձա ուղտերի առևտրական: Ձեզանից որևէ մեկը գիտի՞, որ ես մի ժամանակ ստրուկ էի Սիրիայում…

Ձարմանքի շշուկը տարածվեց սրահով մեկ, ինչին Դեբասիրը բավարարվածությամբ ավելացրեց.

-Երբ ես պատանի էի, - շարունակեց Դեբասիրը՝ անելով ևս մեկ

գրոհ բդի վրա, - ես սովորել էի իմ հոր՝ թամբ սարքելու արհեստը և նրա հետ աշխատում էի իր արհեստանոցում ու այդպես ապրուստ վաստակում իմ ու կնոջս համար: Լինելով երիտասարդ ու անփորձ՝ ես չէի կարողանում շատ գումար աշխատել: Հազիվ էր բավականացնում ինձ ու իմ հիասքանչ կնոջը: Ձգտում էի լավ բաների, որոնց համար հնարավորություններս չէին ներում: Շուտով բացահայտեցի, որ եթե այդ պահին գումար չէի ունենում, խանութպանները վստահում էին ինձ՝ թույլ տալով ավելի ուշ վճարել: Լինելով երիտասարդ ու անփորձ՝ ես չէի գիտակցում, որ երբ ծախսերդ աշխատածիցդ շատ են, ապա դու դրանով քամի ես ցանում, որը ժամանակի ընթացքում վերածվելու է դժբախտության փոթորկի և տառապանք ու ստորացում է բերելու քեզ: Ու այդպես ես տրվեցի կնոջս ու մեր տան համար նրբագեղ թանկարժեք իրեր ձեռք բերելու մոլուցքին, որոնք մեր հնարավորություններից վեր էին: Սկզբում հասցնում էի վճարել, ինչպես կարողանում էի, և ամեն բան լավ էր ընթանում: Բայց ժամանակի հետ ես բացահայտեցի, որ եկամուտներս չեն բավարարում և՛ ապրելու, և՛ պարտքերս վճարելու համար: Պարտատուներս սկսեցին պահանջել, որ ես վճարեմ իմ ճոխ գնումների համար, և իմ կյանքը դարձավ անտանելի: Ես պարտք էի վերցնում ընկերներիցս, բայց չէի կարողանում վճարել նաև նրանց: Վիճակս վատից ավելի էր վատթարանում: Կինս վերադարձավ հայրական տուն, և ես որոշեցի հեռանալ Բաբելոնից՝ փնտրելու այլ քաղաքներ, որտեղ երիտասարդը կարող էր ավելի լավ հնարավորություններ ունենալ: Երկու տարի շարունակ ես ունեցա անհանգիստ ու անհաջող կյանք: Աշխատում էի քարավաններով առևտուր անող վաճառականների մոտ: Ապա միացա մի ավազակախմբի, որը հարձակումներ էր գործում անապատով անցնող անզեն քարավանների վրա: Դա վայել չէր իմ հոր որդուն, բայց ես աշխարհը գունավոր քարի միջով էի տեսնում ու չէի հասկանում, թե ինչ աստիճանի եմ ընկել: Մեր առաջին կողոպուտը հաջողվեց, և մենք ձեռք գցեցինք շատ ոսկի, մետաքս ու այլ թանկարժեք ապրանքներ: Այդ ավարով մենք գնացինք Գինիր ու այն ցոփ ու շվայտ կյանքի մեջ վատնեցինք: Երկրորդ անգամ արդեն մեր բախտը չբերեց: Նոր էինք գրավել ավարը, երբ մեզ վրա հարձակվեցին մոտակա ամրոցի նիզակակիրները, որոնց քարավանները վճարում էին պաշտպանության համար: Մեր երկու պարագլուխները սպանվեցին, իսկ մնացածիս տարան Դամասկոս, որտեղ մեզ մերկացրեցին ու վաճառեցին ստրկության: Ինձ երկու արծաթով գնեց սիրիական անապատից մի հարուստ առաջնորդ: Մազերս կտրած, մերկությունս մի կտորով

հազիվ փակած՝ ես ոչինչով չէի տարբերվում մնացած ստրուկներից: Լինելով անհեռատես երիտասարդ՝ այդ ամենին ես վերաբերվում էի որպես մի զվարճալի արկածի, մինչև տերն ինձ ներկայացրեց իր չորս կանանց ու կարգադրեց, որ ինձ օգտագործեն՝ որպես ներքինի: Նոր միայն հասկացա, թե ինչ թշվառ ու անհույս վիճակում եմ ես: Անապատի մարդիկ չոր են ու մարտական: Ես կախված էի նրա քմահաճույքից, որովհետև ես անզեն էի ու զրկված էի փախչելու հնարավորությունից: Դողացող սրտով ես կանգնած էի այդ չորս կանանց դիմաց, որոնք ուսումնասիրում էին ինձ: Հուսով էի, որ միգուցե նրանք ինձ խղճան: Սիրան՝ առաջին կինը, մյուսներից տարիքով էր: Նա անտարբեր հայացքով նայում էր ինձ: Հույսս կտրած՝ ես հայացքս փախցրեցի նրանից: Հաջորդը մի ինքնահավան խստաբարո գեղեցկուհի էր, որ նայեց ինձ վրա այնպես, կարծես թե ես որդ լինեի: Մյուս երկու երիտասարդ կանայք էլ քմծիծաղ տվեցին՝ կարծես այս ամենը կատակ էր նրանց համար: Ինձ թվաց՝ տարիներ անցան, մինչ ես կանգնած էի այդպես նրանց դիմաց: Կանանցից ամեն մեկն ուզում էր, որ մյուսը որոշում կայացնի: Վերջապես Սիրան խոսեց սառը ձայնով. «Ներքինիներ մենք շատ ունենք, բայց այ ուղտապան՝ ոչ: Եղածները բոլորն էլ անպիտան են: Անգամ այսօր ես պետք է գնամ իմ հիվանդ մորն այցելության, բայց չկա մի ստրուկ, ում կարող եմ իմ ուղտի սանձը վստահել: Հարցրու այս ստրուկին, թե նա կարո՞ղ է ուղտ վարել»: Եվ իմ տերն ինձ հարցրեց. «Ուղտերից ի՞նչ գիտես...»: Հազիվ ոգևորությունս զսպելով՝ ասացի. «Կարող եմ ծնկի բերել, բարձել, երկար ճանապարհ տանել՝ առանց հոգնելու: Եթե պետք լինի կարող եմ նաև նրա պարագաները վերանորոգել»: «Ստրուկը կարծես շիտակ է խոսում: Սիրա՛, եթե ուզում ես, վերցրու նրան՝ որպես քեզ ուղտապան»: Այսպիսով, ինձ հանձնեցին Սիրային, ու ես այդ օրը նրան ուղտի վրա եկար ճանապարհ տարա իր մոր մոտ: Հարմար պահ գտա և հայտնեցի նրան իմ շնորհակալությունը, նաև ասացի, որ ես ծնունդով ստրուկ չեմ, որ ազատ քաղաքացու որդի եմ և Բաբելոնում հայտնի եմ թամբեր սարքելով: Նաև պատմեցի գրեթե իմ ամբողջ պատմությունը: Նրա մեկնաբանությունները շատ ազդեցիկ էին, ու մնացած ճանապարհին ես խորհում էի դրանց իմաստի մասին: «Ինչպե՞ս կարող ես դու քեզ ազատ մարդ համարել, երբ քո թուլությունները քեզ բերեցին, հասցրեցին այս վիճակին: Եթե մարդն ունի ստրուկի հոգի, ապա պարզ չէ՞ արդյոք, որ վաղ թե ուշ նա կլինի ստրուկ՝ անկախ նրանից՝ նա ազատ է ծնվել, թե ոչ, ճիշտ ինչպես ջուրը միշտ ձգտում է իջնել ցածր մակարդակի: Իսկ եթե մարդն ունի ազատ հոգի, մի՞թե նա վաղ, թե ուշ չի՞ հասնի

հարգանքի ու պատվի իր իսկ քաղաքում՝ չնայած հանդիպած դժբախտություններին»: Մեկ տարուց ավել ես ստրուկ էի ու ապրում էի ստրուկների հետ, բայց չէի կարողանում դառնալ նրանցից մեկը: Մի օր Սիրան հարցրեց ինձ. «Երեկոյան, երբ բոլոր ստրուկներն իրար հետ շփվում և զվարճանում են, ինչու՞ ես դու մնում մենակ քո վրանում…»: Ինչին ես պատասխանեցի. «Ես մտածում եմ քո ասածի մասին: Խորհում եմ, թե արդյոք ես ունե՞մ ստրուկի հոգի: Ես չեմ կարող նրանց նման լինել, ուստի նստում եմ հեռու և մենակ»: «Ես էլ եմ ինձ առանձին պահում: Ես ունեի մեծ օժիտ, ինչի համար էլ իմ տերն ամուսնացավ ինձ հետ: Ու արդյունքում նա ինձ չի ցանկանում: Յուրաքանչյուր կին փափագում է ցանկալի լինել: Այդ պատճառով, նաև այն պատճառով, որ ես անպտուղ եմ, չունեմ ո՛չ որդի, ո՛չ դուստր, ես պետք է առանձին նստեմ: Տղամարդ լինեի, ավելի լավ էր՝ ես ինձ սպանեի, քան թե նման ստրկային կյանք տանեի, բայց, ցավոք, մեր ցեղի բարքերը կնոջը ստրկուհի են դարձնում»: «Հիմա ի՞նչ կարծիք ունես իմ մասին», - անսպասելի հարցրեցի նրան: - «Ես ունեմ ստրուկի՞, թե՞ ազատ մարդու հոգի»: «Դու ցանկություն ունե՞ս վերադառնալ Բաբելոն ու տեր լինել քո բոլոր պարտքերին ու վճարել դրանք»: -Ի պատասխան՝ հարցրեց նա: «Այո, ունեմ այդ ձգտումը, բայց չեմ պատկերացնում, թե ինչպես»: «Եթե դու լրացուցիչ ջանք չես թափում ու թողնում ես, որ տարիներն անցնեն՝ առանց պարտքերիդ դիմաց վճարումների, ապա դու ունես ստրուկի հարմարվող հոգի: Չկա մի մարդ, որ հարգի նրան, ու չկա մեկը, որ հարգի ինքն իրեն, եթե նա չի փակում իր արդար պարտքերը»: «Բայց ի՞նչ կարող եմ անել ես՝ լինելով ստրուկ Սիրիայում»: «Մնա՛ այդպես էլ ստրուկ Սիրիայում, դու թույլ ես»: «Ես թույլ չեմ… », - տաքացած հակադարձեցի ես: «Դե ապացուցիր այդ»: «Ինչպե՞ս… »: «Արդյո՞ք ձեր հզոր արքան չի պայքարում իր թշնամիների դեմ իր ողջ ուժով ու բոլոր հնարավոր ու անհնարին միջոցներով: Քո պարտքերը քո թշնամիներն են: Նրանք քեզ Բաբելոնից վտարել են: Դու անտեսել ես նրանց, և նրանք մեծացել ու հզորացել են: Եթե դու կռիվ տայիր դրանց դեմ տղամարդու պես, ապա կհաղթեիր ու կլինեիր հարգված մարդ քո քաղաքում: Բայց դու չունեցար պայքարող հոգի և պատիվդ գետնով տվեցիր ու հիմա դրաձել ես ստրուկ Սիրիայում»: Ես շատ մտածեցի նրա դաժան խոսքերի մասին ու տարբեր մտքերի հանգեցի, թե ինչպես ապացուցեմ, որ ես հոգով ստրուկ չեմ, բայց, այնուհանդերձ, հնարավորություն չունեցա դրանք օգտագործելու: Երեք օր անց Սիրայի ծառան ինձ տարավ նրա մոտ: «Մայրս նորից ծանր վիճակում է», - ասաց նա: - «Ամուսնուս ախոռից թամբիր ամենալավ երկու

ուղտերին: Կապիր ջրի ու ուտելիքի պաշար երկար ճանապարհի համար: Ծառան քեզ խոհանոցի վրանից ուտելիք կտրամադրի»: Կապեցի ու բարձեցի այդ ամենը՝ զարմացած ուտելիքի նման մեծ քանակի վրա, քանզի մայրը բնակվում էր ավելի քիչ, քան մեկ օրվա ճանապարհի հեռավորությամբ: Ծառան հետևից բերում էր երկրորդ ուղտը, իսկ ես առջևից տանում էի տիրուհուն՝ ուղտին նստած: Երբ հասանք նրա մոր մոտ, արդեն մութն ընկել էր: Սիրան ազատ արձակեց ծառային ու ինձ ասաց. «Դեբասի՛ր, դու ունես ստրուկի՛, թե՞ ազատ մարդու հոգի...»: «Ազատ մարդու հոգի», - պնդեցի ես: «Հիմա դու ունես դա ապացուցելու հնարավորություն: Տերը հարբած է, հրամանատարները՝ նույնպես: Վերցրու այս ուղտերը ու փախուստի դիմիր: Այս պարկում տիրոջ շորերն են, որոնցով դու կարող ես անճանաչելի լինել: Ես նրան կասեմ, որ դու գողացել ես ուղտերն ու փախել, քանի ես մորս մոտ էի»: «Դու թագուհու հոգի ունես», - ասացի ես նրան: - «Շատ կուզեի քեզ երջանկացնել»: «Երջանկությունը», - պատասխանեց նա, - «չի կարող լինել փախստական կնոջ համար, ով այն փնտրում է հեռու երկրներում, օտար մարդկանց մեջ: Գնա քո ճանապարհով, ու թող որ անապատի աստվածները քեզ պահապան լինեն, քանզի անապատի ճանապարհը շատ երկար է, առանց ջրի ու պարենի»: Այլևս համոզելու կարիք չկար: Ես միայն խորին շնորհակալությունս հայտնեցի ու հեռացա խավարի մեջ: Ես տեղանքին ծանոթ չէի ու միայն մոտավոր պատկերացում ունեի, թե որ ուղղությամբ է Բաբելոնը, բայց, այնուհանդերձ, վստահորեն քայլեցի դեպի բլուրները: Մի ուղտին նստած էի, մյուսին ել հետևիցս էի տանում: Այդ ամբողջ գիշեր ես ճանապարհ անցա, և հաջորդ օրը նույնպես, քանզի առաջ էի մղվում գիտակցությամբ, թե ինչ է սպասվում ստրուկին, ով գողացել է տիրոջ ունեցվածքը և դրանով փախուստի դիմել: Երեկոյան հասա անապատի պես մի ամայի երկիր: Սուր քարերը ցավեցնում էին ուղտերիս, և նրանք ավելի դանդաղ ու զգուշությամբ էին առաջ շարժվում: Ո՛չ մարդ կար, ո՛չ գազան, ու պարզ էր, որ այդպես էլ պետք է լիներ նման անհյուրընկալ վայրում: Դա այնպիսի մի ճանապարհ էր, որ քչերին էր միայն հաջողվել անցնել, որպեսզի կարողանան հետագայում պատմել դրա մասին: Օր օրի մենք մաքառելով առաջ էինք շարժվում: Ջուրն ու ուտելիքը վերջացան: Արևն անտանելի էր: Իններորդ օրվա վերջում, երբ իջա ուղտից, զգում էի, որ այնքան տկար եմ, որ էլ չեմ կարող նորից ուղտ նստել ու այդպես էլ կմահանամ այս ամայի երկրում: Ձգվեցի գետնով մեկ ու մեռյալի պես քնեցի մինչ արևի առաջին շողերը: Նստեցի ու նայեցի շուրջս: Ջովություն կար առա-

վոտյան օդում: Ուղտերս հուսալքված պառկած էին ոչ հեռու: Շուրջս անծայրածիր երկիր էր՝ պատված քարերով, ավազով ու փշերով, ջրի ո՛չ մի նշան, ո՛չ մի ուտելու բան, ո՛չ մարդու, ո՛չ էլ ուղտերի համար: Կարո՞ղ է՝ հենց այս խաղաղ վայրում ես պետք է կնքեմ իմ մահկանացուն: Միտքս պայծառ էր, ինչպես երբևէ: Մարմինս քիչ կարևորություն ուներ: Իմ ճաքած ու չորացած շրթունքները, դատարկ ստամոքսս, ուռած լեզուս կորցրել էին նախորդ օրերի հրատապությունը: Նայեցի դեպի անհյուրընկալ տարածությունը, ու նորից միտքս եկավ. ‹‹Ես ունեմ ստրուկի՞, թե՞ ազատ մարդու հոգի››: Ու ինձ պարզ դարձավ, որ ստրուկը կնախընտրեր ձեռք քաշել ծրագրից, պառկել ու հանգիստ մահանալ, ինչպես փախուստի դիմած ստրուկի ճակատագիրն է: Բայց, եթե ես ազատ մարդու հոգի ունեմ, ապա ի՞նչ: Պետք է անհապաղ հասնեմ Բաբելոն ու մարեմ պարտքերս, որ վստահելով մարդիկ տվել են ինձ, բերեմ երջանկություն ինձ սիրող հավատարիմ կնոջս, փարատեմ ու հանգստություն բերեմ ծնողներիս: «Քո պարտքերը քո թշնամիներն են, որ քեզ քո քաղաքից վտարել են», -ասում էր Սիրան: Այո, դա այդպես էր: Ինչու՞ ես տղամարդու պես չպահեցի ինձ, նահանջեցի ու չպայքարեցի: Ինչու՞ թույլ տվեցի, որ կինս վերդառնա իր հոր տուն: Այնուհետև մի տարօրինակ բան պատահեց: Ամբողջ աշխարհը մի տեսակ ուրիշ երանգ ստացավ, կարծես թե առաջ նայում էի գունավոր քարի միջով, և այդ քարն այլևս չկար: Վերջապես ես տեսա աշխարհի իրական արժեքները: Մահանալ անապատու՞մ: Ոչ ես: Նոր հայացքով ես պարզ տեսա իմ անելիքը: Նախ՝ կգնամ Բաբելոն, կառերեսվեմ իմ պարտքատերերի հետ: Ու կասեմ նրանց, որ շատ թափառումներից ու փորձանքներից հետո վերադարձել եմ Բաբելոն ու պատրաստ եմ՝ մարելու պարտքերս այնքան շուտ, որքան աստվածներն ինձ թույլ կտան: Հետո կգտնեմ տուն կնոջս համար, ու կդառնամ վերջապես այնպիսի հարգարժան քաղաքացի, որի համար ծնողներս կհպարտանան: Պարտքերս իմ թշնամիներն են, բայց պարտատերերը՝ իմ բարեկամները, քանզի նրանք ինձ վստահել էին ու հավատացել: Հազիվ ոտքի կանգնեցի: Էլ սովին ո՞վ էր բանի տեղ դնում: Էլ ծարավին ո՞վ էր ուշադրություն դարձնում: Դրանք ուղղակի միջադեպ էին դեպի Բաբելոն ճանապարհին: Իմ մեջ շունչ էր առել ազատ մարդը, որ վճռականորեն գնում էր Բաբելոն՝ թշնամիներին հաղթելու ու ընկերներին վարձատրելու: Ոգևորված էի իմ վճռականությունից: Ուղտերիս խամրած աչքերը պայծառացան իմ ձայնի նոր զրնգուն տոնից: Ի վերջո, մեծ ջանքերի գնով, բազմաթիվ փորձերից հետո նրանք կարողացան ոտքի կանգնել: Կարեկցող վճռականությամբ

սկսեցինք շարժվել դեպի հյուսիս, քանզի ինձ մի բան հուշում էր, որ Բաբելոնն այդ կողմում էր: Մենք հանդիպեցինք ջրի: Ապա տեղանքը դարձավ բերրի, որտեղ առատ բուսականություն կար ու մրգեր: Մենք գտանք Բաբելոնի ճանապարհը, քանզի ազատ մարդն ընդունում է, որ խնդիրներ կարող են լինել, ու ինքը լուծում է այդ խնդիրները: Մինչդեռ ստրուկը բողոքում ու հուսահատ ասում է. «Մեկ է՝ ինձնից ոչինչ կախված չէ. չէ՞ որ ես ուղակի մի ստրուկ եմ»: Դու ի՞նչ կասես, Տարկա՛դ: Դատարկ ստամոքսդ պայծառացրե՞լ է միտքդ: Պատրա՞ստ ես սկսել ճանապարհը, որ քեզ կվերադարձնի քո պատիվը: Կարո՞ղ ես աշխարհը տեսնել իր իրական գույնով: Ցանկություն ունե՞ս՝ մարելու արդար պարտքերդ՝ անկախ դրանց չափերից, որպեսզի, ի վերջո, նորից հարգանք վայելես Բաբելոնում:

Երիտասարդի աչքերը խոնավացան: Նա ծնկի իջավ.

-Դու իմ աչքերը բացեցիր, - ասաց Տարկադը, - Ես արդեն զգում եմ, որ իմ մեջ սկսում է բարձրանալ ազատ մարդու հոգին:

-Բայց ի՞նչ եղավ քեզ հետ, երբ վերադարձար Բաբելոն,- հարցրեց մի հետաքրքրասեր ունկնդիր:

-Որտեղ կա վճռականություն, լուծումը միշտ էլ գտնվում է, - ասաց Դեբասիրը: - Ես վճռականությամբ լի էի, ուստի վստահ էի, որ լուծում կգտնեմ: Նախ՝ այցելեցի իմ բոլոր պարտատերերին ու հայցեցի նրանց ներողամտությունը և խնդրեցի, որ մի փոքր համբերատար լինեն իմ նկատմամբ, քանզի ես սկսելու եմ աստիճանաբար վերադարձնել նրանց գումարները: Մի մասն ինձ նորմալ ընդունեց: Ոմանք շատ կոպտեցին ինձ, բայց մնացածն էլ պատրաստ էին օգնել ինձ: Ու մեկն իսկապես տվեց ինձ այն օգնությունը, որի կարիքը ես այդ պահին ամենաշատն ունեի: Դա Մաթոնն էր՝ գրավով ոսկի տվողը: Իմանալով, որ ես մի ժամանակ ուղտերի առուծախով եմ զբաղվել՝ ուղարկեց ինձ Նեբուտարի՝ ուղտերի առևտրականի մոտ, ում թագավորը կարգադրել էր շատ ուղտեր գնել նոր արշավի համար: Նրա հետ ես իմ գիտելիքները շատ հաջողությամբ կիրառեցի: Աստիճանաբար կարողացա վճարել ամեն մի պղինձ ու ամեն մի արծաթ, որ ես պարտք էի: Ու դրանից հետո միայն, ի վերջո, նորից կարողացա գլուխս վեր պահել ու լինել քաղաքի մեջ հարգված մարդ:

Նորից Դեբասիրը դարձավ իր ուտելիքին.

-Կոսկո՛ր, ա՛յ դու խխունջ, - բղավեց նա այնպես, որ լսելի լինի խոհանոցում, - ուտելիքը սառն է: Նորից միս բեր, հենց կրակի վրայից: Բե՛ր նաև մի լավ բաժին Տարկադի՝ իմ հին ընկերոջ որդու համար… Նա սոված է ու ինձ հետ պետք է ուտի:

Այդպես ավարտվեց Դեբասիրի պատմությունը, ով ուղտերի առևտրով էր զբաղված Բաբելոնում: Նա վերգտավ իր հոգին, երբ գիտակցեց մեծ ճշմարտությունը, որ իմացել և կիրառել են իմաստուն մարդիկ դեռ իրենից շատ տարիներ առաջ: Այն առաջնորդել է մարդկանց բոլոր դարերում դժվարությունից դեպի հաջողություն և կշարունակի առաջնորդել նրանց, ովքեր իմաստնություն ունեն՝ հասկանալու դրա մոգական ուժը: Սա բոլոր նրանց համար է, ովքեր կարդում են այս տողերը:

ԵՐԲ ԿԱ ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԵԼՔ ԿԳՏՆՎԻ

ԲԱԲԵԼՈՆԻ

կավե սալիկները

Սուրբ Սուիթինի քոլեջ
Նոթինգհեմի Համալսարան
Նյուարկ Տրենտի վրա
Նոթինգհեմ

—

Պրոֆեսոր Ֆրանկլին Քոլդուել
Հասցեագրված Բրիտանական գիտական
արշավախմբին, Հիլլահ, Մեսոպոտամիա
Հոկտեմբերի 21, 1934

Իմ թանկագին Պրոֆեսոր,

հինգ կավե սալիկները, որոնք հայտնաբերվել են Բաբելոնի ավերակների վերջին պեղումների ժամանակ, ժամանեցին Ձեր նամակի հետ միևնույն նավով: Ես շատ երջանիկ էի, որ կարողացա բազմաթիվ հաճելի ժամեր անցկացնել դրանք թարգմանելիս: Ես պետք է անմիջապես պատասխան նամակը գրեի, բայց ուշացրեցի, որպեսզի կարողանայի ավարտին հասցնել թարգմանությունները, որոնք էլ կցում եմ այս նամակին:

Սալիկները ժամանել էին՝ առանց որևէ վնասվածքի՝ շնորհիվ ձեր ջանքերի, խնամքով պահպանման և կայարյալ փաթեթավորման:

Դուք էլ շատ կզմայլվեք ու կապշեք այնտեղի պատմությունից, ինչպես մենք էինք ապշել լաբորատորիայում: Կարելի է կարծել, թե հեռու անցյալից եկած պատմությունը պիտի լինի մի հեքիաթային սիրավեպ: Ասենք՝ ինչպես «Արաբական գիշերները»: Բայց, փոխարենը, այն բացահայտում է մի մարդու դժվարություններն իր պարտքերը փակելիս: Նրա անունն է Դեբասիր: Ու դա կարդալով հասկանում ես, որ այս հին մարդկային աշխարհի հինգ հազար տարվա ընթացքում իրականությունը գրեթե նույնն է մնացել:

Շատ տարօրինակ է, գիտեք, որ այս հին փորագրություններն անգամ ինձ են բորբոքում, ինչպես ուսանողները կասեին: Լինելով քոլեջի պրոֆեսոր՝ ես պետք է որ գիտելիքի մի լայն շրջանակ ունենայի, որ կարելի է հաջողությամբ կիրառել այս կյանքում: Բայց, արի ու տես, պատմության փոշիներից հառնում է այս մարդը ու ցույց տալիս ինձ, թե ինչպես ես կարող եմ իմ պարտքերը մարել ու անգամ ոսկի կուտակել քսակումս:

Հաճելի միտք է նա տալիս, ու շատ հետաքրքիր է փորձել ու տեսնել՝ արդյոք այն այսօր էլ աշխատում է նույն հաջողությամբ, ինչպես հին Բաբելոնում: Տիկին Շրյուզբերին ու ես պատրաստվում ենք կիրառել այդ սկզբունքներն ու տեսնել՝ կօգնի այն մեր ֆինանսական վիճակին, ինչի կարիքը մենք շատ ունենք:

Ցանկանում եմ շատ հաջողություն Ձեր կարևոր գործում և ուրախ կլինեմ, եթե իմ ծառայությունները էլի պետք լինեն Ձեզ:

Անկեղծորեն Ձեր,
Ալֆրեդ Հ. Շրյուզբերի
Հնագիտության ֆակուլտետ

▶ Սալիկ առաջին

Լիալուսին է, և ահա ես՝ Սիրիայի ստրկությունից վերջերս վերադաձաձս, իմ բազմաթիվ պարտքերը վճարելու և իմ հայրենի քաղաք Բաբելոնում հարստություն ու հարգանք ձեռք բերելու վճռականությամբ, այս կավե սալիկի վրա փորագրում եմ ուղեցույցները, որ պետք է ինձ առաջնորդեն և օգնեն դուրս գալ այս վիճակից դեպի ցանկալի իրականություն: Իմ լավ ընկեր, գրավով ոսկի տվող Մաթոնն, ինձ խորհուրդներ տվեց, գծագրեց ճանապարհը, որով ամեն մի հարգարժան անձ կարող է աղքատությունից դուրս գալ, ստեղծել հարստություն ու արժանավայել ապրել: Այս ծրագիրն ընդգրկում է երեք առաքելություն, որոնք իմ և՛ հույսն են, և՛ ցանկությունը:

Առաջին ծրագիրն ապահովելու է իմ ապագա բարգավաճումը: Իմ վաստակածի մեկ տասներորդը պետք է ծառայի ինձ: Սրա վերաբերյալ Մաթոնը լավ խոսք ասաց. «Նա, ով իր քսակում ոսկի ու արծաթ ունի, հոգատար է իր ու իր ընտանիքի նկատմամբ, և հարգանքով է դեպի թագավորը: Նա, ով իր քսակում ունի միայն պղինձ, հոգատար չէ իր ու իր ընտանիքի նկատմամբ, և հարգանքով չէ դեպի թագավորը: Նա, ով իր քսակում ոչինչ չունի, անարգում է իրեն ու իր ընտանիքը, և թագավորին էլ է անարգում, քանզի նրա սիրտը դառնացած է»: Ուստի, եթե մարդ ցանկանում է մի որևէ բանի հասնել, ապա նա պետք է քսակում փող ունենա, տրամադրությունը կբարձրանա քսակի գումարի զնգոցները լսելիս, և նրա սրտում կլինի սեր դեպի իր ընտանիքն ու հարգանք դեպի թագավորը:

Երկրորդ ծրագիրն ասում է, որ բավարար գումար տրամադրեմ իմ հավատարիմ կնոջ հագուստի ու խնամքի համար, ով հետ եկավ ինձ մոտ իր հայրական տնից: Ինչպես Մաթոնն է ասում՝ ամեն արժանավոր մարդ պետք է հոգ տանի իր հավատարիմ կնոջ համար: Ու նման մոտեցումը քեզ կբերի հարգանք ու ինքնավստահություն, որը շատ կօգնի քո ծրագրերի հաջող իրականացմանը: Ուստի եկամուտիդ յոթ տասներորդը պետք է ծառայի քո ընտանիքի կարիքներին, որ չունենաք սննդի, հագուստի ու կենսուրախության պակաս: Սա շատ կարևոր է, քանզի մարդ պետք է բավարարված զգա իր ամեն օրով: Եվ դա է պատճառը, որ այս առաքինի նպատակին պետք է տրամադրել եկամտի յոթ տասներորդը: Բայց և պետք է դա այնպես պլանավորել, որ երբեք չանցնի յոթ տասներորդի սահմաններից: Իմ ծախսերը չպետք է երբեք անցնեն այս բաժնեմասից, չպետք է երբեք գնեմ մի բան, որ այս բաժնից ավել արժենա:

▶ Սալիկ երկրորդ

Երրորդ ծրագիրը նաև պարտավորեցնում է եկամտիցս մաս հատկացնել իմ պարտքերը մարելու համար: Ուստի ամեն անգամ, երբ լուսինը բոլորի, ես պետք է իմ եկամտի երկու տասներորդը տամ իմ պարտատերերին, ովքեր, ինձ հարգելով ու վստահելով, պարտք էին տվել: Այս նպատակի համար այժմ փորագրում եմ այս սալիկի վրա անուններն իմ պարտատուների և համապատասխանաբար՝ արդար պարտքի քանակները:

Քարու՝ մանածագործ. Երկու արծաթ ու վեց պղինձ:
Սինջար՝ բազմոց սարքող. Մեկ արծաթ:
Աիմար՝ ընկերս. Երեք արծաթ ու մեկ պղինձ:
Զանկար՝ ընկերս. Չորս արծաթ ու յոթ պղինձ:
Ասկամիր՝ ընկերս. Մեկ արծաթ ու երեք պղինձ:
Հարինսիր՝ ոսկերիչ. Վեց արծաթ ու երկու պղինձ:
Դիարբեքեր՝ հորս ընկերը. Չորս արծաթ ու մեկ պղինձ:
Ալկահադ՝ տան տերը. Տասնչորս արծաթ:
Մաթոն՝ ոսկի վարկ տվող. Ինը արծաթ:
Բիրեջիկ՝ ագարակատեր. Մեկ արծաթ ու յոթ պղինձ:
(այստեղից ներքև այն անընթեռնելի է)

▶ Սալիկ երրորդ

Այս պարտատերերին իմ ամբողջ պարտքը կազմում է հարյուր տասնինը արծաթ ու հարյուր քառասունմեկ պղինձ: Այս գումարի պատճառով, նաև այն պատճառով, որ չէի տեսնում միջոց գումարը վճարելու, ես թույլ էի տվել, որ կինս հետ գնա իր հոր տուն, իսկ ես փախել էի օտար քաղաքներ՝ այնտեղ հեշտ հարստություն ձեռք գցելու հույսով: Բայց փոխարենը հանդիպեցի դառը ձախողումների ու, ի վերջո, դարձա ստրուկ:

Այժմ, երբ Մաթոնն ինձ ցույց տվեց, թե ինչպես ես կարող եմ աստիճանաբար իմ եկամտից ամեն անգամ փոքր գումարներով պարտքերս ժամանակի ընթացքում մարել, ապա ես հասկացա իմ հիմարությունը՝ դրանից փախչելու: Այսպիսով՝ գնացի իմ բոլոր պարտատերերի մոտ ու ասացի, որ լինելով ոչ մի բանի տեր՝ իմ միակ միջոցը պարտքը փակելու համար իմ աշխատելու հնարավորությունն է: Ու այդ աշխատանքից եկած եկամտից ամեն անգամ երկու տասներորդը ես արդարորեն կբաժանեմ իմ պարտատերերին: Այսքան կարող եմ ես վճարել և ոչ ավելին: Ուստի, եթե համբերատար լինեք, աստիճանաբար ես պարտքս կմարեմ:

Ահմարը, ում ես համարում էի իմ ամենալավ ընկերը, շատ կշտամբեց ինձ, ստորացրեց, ու ես հեռացա ահավոր ընկճված: Բիրեջիկը՝ ագարակատեր, պահանջեց որ իրեն առաջինը վճարեմ, քանզի նա կարիքի մեջ էր: Ալկահադը՝ տան տերը, շատ հակառակվեց ու պահանջում էր, որ անհապաղ ամբողջ պարտքը փակեմ, հակառակ դեպքում ինձ համար մեծ խնդիրներ կստեղծի:

Մյուսները հոժարությամբ համաձայնեցին իմ ծրագրին: Ուստի հիմա ես շատ շահագրգռված եմ աշխատել ու պարտքերս մարել, քանզի գիտակցում եմ, որ դա ավելի հեշտ է, քան դրանցից փախչելը: Չնայած որոշ պարտատերեր իմ մոտեցումը չողջունեցին, բայց, միևնույն է, ես բոլորին հավասար կմոտենամ:

▶ Սալիկ չորրորդ

Նորից լիալուսին է: Ես ժրաջան աշխատել եմ ազատ մտքով: Իմ բարի կինն աջակցեց պարտատերերիս վճարելու իմ մտադրություններում: Մեր իմաստուն վճռականության շնորհիվ՝ ես, անցած ամսվա ընթացքում Նեբուտարի համար առողջ ուղտեր գնելով, վաստակեցի տասնինն արծաթ:

Սա ես ըստ ծրագրի՝ բաժանեցի: Մեկ տասներորդը մի կողմ դրեցի ինձ համար, յոթ տասներորդը կնոջս հետ պլանավորեցինք մեր ծախսերն ու ապրուստը: Երկու տասներորդն էլ հավասարաչափ բաժանեցի պարտատերերիս:

Ահմարին չտեսա, բայց գումարը տվեցի կնոջը: Բիրեջիկն այնքան ուրախացավ, որ քիչ էր մնում՝ ձեռքս համբուրեր: Ծեր Ալկահադը դեռ դժգոհ էր ու պահանջեց, որ ավելի արագ պարտքը մարեմ, ինչին պատասխանեցի, որ եթե ինձ թողնեն, որ հանգիստ սնվեմ ու քնեմ, դրանով ինձ կօգնեն, որ ես ավելի լավ աշխատեմ, ու եկամուտս կավելանա՝ պարտքերս ավելի արագ փակելու համար: Մնացածը գոհ եղան ինձանից ու քաջալերեցին, որ այսպես շարունակեմ:

Այսպիսով՝ մի ամիս անցավ, և իմ պարտքը նվազեց համարյա չորս արծաթով, ու բացի այդ, տեր դարձա համարյա երկու արծաթի, որին ուրիշ ոչ ոք չի կարող հավակնել: Սիրտս թեթև է, ինչպես վաղուց չի եղել:

Նորից լիալուսին է: Ժրաջան աշխատեցի, բայց եկամուտս քիչ էր: Մի քանի ուղտ միայն կարողացա գնել: Միայն տասնմեկ արծաթ կարողացա աշխատել: Բայց, միևնույն է, ես ու իմ լավ կինը չշեղվեցինք մեր ծրագրից: Չկարողացանք նոր հագուստ գնել և սնվեցինք քիչ ու միայն բուսական սննդով:

Նորից ես վճարեցի մեզ տասնմեկ արծաթի մեկ տասներորդը՝ ապրելով յոթ տասներորդով: Զարմացա, որ Ահմարն ինձ ողջունեց՝ չնայած փոքր գումարին: Բիրեջիկը՝ նույնպես: Ալկահադը զայրույթից պայթեց: Բայց, երբ ասացի՝ դե, եթե դժգոհ ես, հետ տուր ինձ քո բաժինը, նա խաղաղվեց: Մյուսները, ինչպես և առաջ, բավարարված էին:

Նորից լիալուսին է, ու ես դրանից շատ ուրախ եմ: Ինձ մի լավ նախիր հանդիպեց, և ես գնեցի շատ ընտիր ուղտեր: Եկամուտը եղավ քառասուներկու արծաթ: Այդ ամիս ես ու կինս կարողացանք գնել մեզ այդքան անհրաժեշտ սանդալներ ու որոշ հագուստ: Մենք նաև ճաշեցինք մսով ու թռչնամսով: Այս անգամ կարողացանք ութ

արծաթ ու մի փոքր էլ ավել վճարել պարտատերերին: Անգամ Ալկահադն այս անգամ չբողոքեց: Արտակարգ ծրագիր է, որն ուղորդում է մեզ՝ մարել պարտքերն ու նաև ստեղծել մեր իսկ հարստությունը:

Երեք լիալուսին անցավ, ինչ ես վերջին անգամ փորագրություն էի արել այս սալիկին: Ամեն անգամ ես ինձ վճարեցի եկամտիս մեկ տասներորդը: Ամեն անգամ ես ու իմ լավ կինն ապրեցինք եկամտի յոթ տասներորդ մասով՝ չնայած երբեմն դժվարություններ ունեցանք: Ամեն անգամ ես վճարեցի պարտատերերիս եկամտիս երկու տասներորդը: Քսակումս հիմա ունեմ քսանմեկ արծաթ, ու սա պատկանում է միայն ինձ: Սա ինձ թույլ է տալիս գլուխս ուղիղ պահել ու հարգանքով լի՝ քայլել ընկերներիս հետ: Կինս տունը շեն էր պահում ու ավելի կահավորում: Մենք երջանիկ ենք միասին: Ծրագրի արժեքն անսահման է. չէ՞ որ այն նախկին ստրուկին դարձրեց հարգարժան քաղաքացի:

▶ Սալիկ հինգերորդ

Նորից շողում է լիալուսինը, ու ես հիշեցի, որ վաղուց է՝ ինչ չեմ փորագրել: Տասներկու լիալուսին եկան ու գնացին: Այս օրը ես երբեք չեմ մոռանա, քանզի այսօր ես մարեցի իմ վերջին պարտքը: Այսօր այն օրն է, որ ես ու իմ լավ կինը մի լավ կնշենք ու կտոնենք, քանզի այն ապացուցեց, որ մեր ծրագիրն աշխատեց:

Շատ հետաքրքիր բաներ պատահեցին պարտատերերի հետ հանդիպման վերջին օրը: Ահմարը ներողություն խնդրեց իր դառը խոսքերի համար, որ ասել էր սկզբում ու ասաց, որ ամենից շատ ինքը կուզենար լինել իմ ընկերը:

Ծերունի Ալկահադն այդքան էլ վատ մարդ դուրս չեկավ: Նա ասաց. «Դու մի ժամանակ մի փափուկ կավի կտոր էիր, ում ով ասես կարող էր իր ձեռքում սեղմել ու ձև տալ, բայց այժմ բրոնզի կտոր ես, որ կարող է իր եզրը սուր պահել: Թե էլի երբևէ արծաթի կամ ոսկու կարիք ունենաս, արի՛ ինձ մոտ»:

Եվ նա միակը չէր, որ այդքան բարձր գնահատեց ինձ: Շատերն սկսեցին ակնածանքով ինձ հետ խոսել: Իմ բարի կինն աչքերի մի այնպիսի փայլով է նայում ինձ, որից մարդ սկսում է ինքն իրեն հարգել:

Եվ այդ ամբողջ հաջողության գաղտնիքը ծրագրի մեջ էր: Այն հնարավոր դարձրեց փակել բոլոր պարտքերս, քսակումս էլ սկսեցին զրնգալ ոսկին ու արծաթը: Ես խորհուրդ եմ տալիս այս ծրագիրը բոլոր նրանց, ովքեր ցանկանում են կյանքում առաջ ընկնել: Քանզի, իրոք, եթե այն օգնեց ու բարգավաճում բերեց նախկին ստրուկին, ապա արդյո՞ք այն չի օգնի ցանկացած մարդու ձեռք բերել անկախություն: Ես այլևս այսքանով կանգ չեմ առնի: Վստահ եմ, որ եթե շարունակեմ շարժվել այս ծրագրով, ապա կդառնամ հարուստ մարդ:

Սուրբ Սուիթինի քոլեջ
Նոթինգհեմի Համալսարան
Նյուարկ Տրենտի վրա
Նոթինգհեմ

Պրոֆեսոր Ֆրանկլին Քոլդուել
Հասցեագրված Բրիտանական գիտական
արշավախմբին, Հիլլահ, Մեսոպոտամիա
Նոյեմբերի 7, 1936

Իմ թանկագին Պրոֆեսոր.

Եթե, ձեր բաբելոնյան պեղումներում հանկարծ հադիպեք ոմն ուղտերի առևտրականի ուրվականին՝ Դեբասիր անունով, խնդրում եմ ինձ մի լավություն արեք. ասեք նրան, որ հեռու անցյալից նրա այդ փոխագրած սալիկներն այժմ հեռավոր Անգլիայի երկու դասախոսի հավերժ երախտիքին են արժանացել:

Հավանաբար կհիշեք մեկ տարի առաջ իմ գրառումը, որ ես ու տիկին Շրյուզբերին որոշել էինք հետևել այդ փոխագրության մեթոդին՝ պարտքից դուրս գալու ու նաև քսակներումս ոսկին զրնգացնելու համար: Ինչքան էլ մենք փորձում էինք թաքցնել մեր ընկերներից մեր վատ ֆինանսական վիճակը, միևնույն է, երևի թե դուք այն նկատած կլինեիք:

Մենք սարսափելի նվաստացած էինք երկար տարիներ կուտակված բազմաթիվ պարտքերի համար, ու մտավախություն ունեինք, որ մի օր էլ կարող են պարտատերերն աղմուկ բարձրացնել ու դրանով մեզ համալսարանից հեռացնել: Մենք վճարում էինք ու վճարում ամեն մի շիլլինգը, որը կարողանում էինք կտրել եկամտից, բայց մեր պարտքերի վիճակը դրանից չէր լավանում ու մենք հազիվ ծայրը ծայրին էինք հասցնում: Բացի այդ, մենք ստիպված գնումներն անում էինք այնպիսի տեղերից, որ կարող էինք այն վարկով առնել՝ չնայած էլ ավելի թանկ գներին:

Հայտնվել էինք մի անելանելի շրջանակի մեջ, երբ վիճակը բարելավվելու փոխարեն՝ գնալով վատթարանում էր: Մեր պայքարը դառնում էր անհույս: Չէինք կարողանում անգամ տեղափոխվել ավելի էժան բնակարան, քանզի տանտիրոջը պարտք էինք: Ու էլ չէինք տեսնում՝ ինչ կարելի է անել՝ այդ վիճակից դուրս գալու համար:

Սակայն, արի ու տես՝ հայտնվում է այդ ուղղերի առևտրականը Բաբելոնից՝ իր ծրագրով, որ հենց այն է, ինչ մեզ պետք էր մեր վիճակի փրկության համար: Նա մեզ ոգևորեց ու ոգեշնչեց հետևել ծրագրին: Կազմեցինք մեր բոլոր պարտքերի ցուցակը, ու ես այն տարա ու ցույց տվեցի նրանց բոլորին:

Ես բացատրեցի մեր պարտատերերին, թե ինչպես իմ իրավիճակում իմ պարտքերի մարումն անհնար գործ է: Նրանք դա շատ պարզ տեսան՝ նայելով թվերին: Ապա իրենց բացատրեցի, որ միակ հնարավոր տարբերակը պարտքը մարելու համար այն է, որ ես իմ եկամտի քսան տոկոսն ուղղեմ դրան ու հավասար բաշխեմ բոլոր պարտատերերիս միջև, ու այդպես երկու տարուց քիչ ավել կտևի, որ ես իմ բոլոր պարտքերը փակեմ: Իսկ մինչ այդ, մենք կանցնենք միայն կանխիկ գումարի, ու առավելությունը, որ կգա կանխիկով առևտրից, լրացուցիչ կգնա պարտքերը փակելու համար:

Նրանք շատ պարկեշտ եղան մեր հանդեպ: Մեր բանջարեղենի խանութի տերը շատ լավ ասաց. «Եթե ամեն անգամ առևտուր անելիս դուք հավելավճար կատարեք ձեր պարտքի դիմաց, դա շատ լավ կլինի, քանզի դա կլինի ավելին, քան դուք մինչ այժմ արել եք այս երեք տարիների ընթացքում, այսինքն՝ ոչինչ»:

Ի վերջո, կարողացա իրենց հետ պաշտոնական պայմանագիր կնքել, որ իրենք ինձ չեն անհանգստացնի, քանի դեռ ես պարտաճանաչ կերպով ամեն ամիս վճարում եմ իմ եկամտի քսան տոկոսը: Ապա մենք սկսեցինք գլուխ գլխի տալ, թե ինչպես կարող ենք ապրել՝ հենվելով մեր եկամուտների յոթանասուն տոկոսի վրա: Մենք վճռական էինք՝ մնացած տասը տոկոսը մեզ պահելու: Արծաթի ու ոսկու մասին մտքերը շատ գրավիչ էին:

Թվում է, թե մենք ոգևորված ենք փոփոխություն անելու արկածով: Հաճույք էինք զգում լուծում գտնելու մեջ, թե ինչպես այս հարցը կամ այն հարցը լուծենք մեր ապրուստի յոթանասուն տոկոսի սահմաններում: Սկսեցինք տան վարձից ու կարողացանք լավ զեղչ ստանալ: Ապա քննության տակ վերցրինք մեր սիրելի թեյի բրենդները ու այլ նման բաներ: Լավ ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ, թե ինչքան կարող ենք ավելորդ գումար խնայել՝ առանց որակի հարցում տուժելու:

Սա երկար պատմություն է նամակի համար, բայց կարճ ասած՝ այդ ամենն այդքան էլ դժվար չէր: Մենք լավ ապրում էինք, ու շատ էլ երջանիկ: Ինչպիսի՜ թեթևություն. մեր ֆինանսական կյանքն այնպես դասավորվեց, որ պարտատերերն այլևս մեզ չէին անհանգստացնում:

Չեմ ուզում չնշել նաև այն տասը տոկոսի մասին, որ պետք է մեր քսակում մնար, և զրնգոցը լսվեր: Իրոք մենք լսեցինք զրնգոցը: Այժմ, չծիծաղեք չափազանց շատ: Չէ՞ որ սա մեր ուրույն ձեռնարկումների համար էր: Գումար կուտակելն իրական հաճույք է, երբ դու չես պատրաստվում այն ծախսել: Ավելի շատ հաճույք ենք զգում գումարն ավելացնելու մեջ, քան թե այն ծախսելու:

Մեր սրտի ուզածի չափ զրնգացնելուց հետո, գտանք ավելի օգտակար միջոց՝ այն գործի դնելու: Մի ներդրման մեջ մտրանք, ուր մեր ամեն ամսվա եկամուտի տասը տոկոսն ուղղեցինք: Սա մեր վերածնունդի ամենաոգևորիչ բաղադրիչն է: Սա առաջին վճարումն է, որ մենք անում ենք իմ աշխատավարձից:

Շատ բավարարող զգացում է գիտակցել, որ ունես գումար, որ գնալով աճում է: Նման ընթացքով, երբ մեր դասավանդելու օրերը վերջանան, մենք ի վիճակի կլինենք ապրել մեր ստեղծած գումարից եկող եկամուտներով:

Եվ այս ամենը ստացվեց իմ այն նույն աշխատավարձից, որ ես ստանում էի տարիներ շարունակ: Դժվար է պատկերացնել, բայց սա է ճշմարտությունը: Մեր բոլոր պարտքերն ապտիճանաբար փակվում են, միաժամանակ մեր ներդրումները՝ մե-

ծանում: Ու արդյունքում մեր ամենօրյա ֆինանսական վիճակն էլ ավելի լավ է, քան առաջ: Ով գիտեր, որ այսքան մեծ փոփոխություն կլինի՝ ֆինանսական կոնկրետ ծրագրին հետևելով, քան թե ուղղակի այդ ամենն ինքնահոսի թողնելով:

Ու եկող տարվա վերջին, երբ մենք վճարենք մեր բոլոր հին պարտքերը, մենք կունենանք ավելի շատ գումար ներդրումների համար, մի փոքր մասն էլ մեր ճանապարհորդելու համար:

Մենք վճռական ենք, որ այսուհետ երբեք մեր ապրելու ծախսերը չեն գերազանցի յոթանասուն տոկոսը: Այժմ դուք հասկանում եք, թե ինչու ենք խնդրում իրեն փոխանցել մեր շնորհակալությունները, անցյալի այդ լավ մարդուն, որի ծրագիրը փրկեց մեզ երկրային դժոխքից:

Նա գիտեր: Նա անցել էր դրա միջով: Նա ուզում էր, որ ուրիշներն էլ դա գիտակցեն ու կիրառեն: Այդ էր պատճառը, որ նա երկար ժամանակ էր անցկացրել ու շատ ջանք էր թափել այն փորագրելու համար: Նա ուներ կարևոր ասելիք իր նման տառապած մարդկանց համար, ու հինգ հազար տարի անց այն նորից դուրս եկավ լույս աշխարհ՝ ճիշտ նույն արդիականությամբ, ինչպիսին ունեցել էր թաղվելու ժամանակ:

Հարգանքով Ձեր,
Ալֆրեդ Հ. Շրյուզբերի,
Հնագիտության ֆակուլտետ

ԲԱԲԵԼՈՆԻ
ամենահաջողակ մարդը

Իր քարավանի առջևից հպարտորեն գնում էր Շարու Նադան՝ Բաբելոնի առևտրի արքայազնը: Նա սիրում էր ընտիր հագուստ և հագնում էր միայն ամենաընտիրը: Նա սիրում էր ընտիր կենդանիներ և ամենայն թեթևությամբ ձիավարում էր՝ մի վեհաշուք արաբական նժույգ հեծնած: Նրան նայելով դժվար էր կռահել, որ նա պատկառելի տարիք ունի: Հաստատ հնարավոր չէր նկատել, որ ներքուստ նա շատ մտահոգված է:

Ճանապարհը Դամասկոսից շատ երկար է, իսկ անապատի դժվարությունները՝ բազում: Բայց դա չէր անհանգստացնում նրան: Արաբ ցեղախմբերը շատ համարձակ են ու վճռական՝ թալանելու հարուստ քարավանները: Սակայն դա նույնպես նրան չէր անհանգստացնում, քանզի բազմաքանակ հեծյալ պահակախումբը վստահելի պաշտպանություն էր:

Նրա կողքից ընթացող պատանին էր մտահոգության պատճառը, ում նա բերում էր Դամասկոսից: Պատանու անունն էր Հադան Գուլա, ով իր վաղեմի գործընկերոջ՝ Արադ Գուլայի թոռն էր, և ում նա պարտական էր շնորհակալության մի այնպիսի զգացումով, որ երբեք չէր կարող վարձահատույց լինել: Այժմ Շարու Նադան ցանկանում էր որևէ կերպ օգնել գործընկերոջ թոռանը, բայց որքան շատ էր մտածում այդ մասին, այնքան դժվար էր դա թվում նրա երիտասարդության պատճառով:

Աչք գցելով երիտասարդի մատանուն ու ականջօղերին՝ նա մտածում էր. «Սա գիտի, թե զարդերը տղամարդու համար են, բայց և տեսնում եմ խրոխտ դիմագծերը, որ ժառանգել է իր պապից: Նրա պապը, սակայն, նման ճչացող հագուստ չէր կրում: Եվ ե՞ս ցանկացա նրան ինձ հետ վերցնել՝ հուսալով, որ կկարողանամ նրա համար նոր սկիզբ դնել և դուրս բերել այն վիճակից, որի մեջ հայտնվել են հոր մեղքով, ով վատնեց այդ ամբողջ ժառանգությունը»:

Հադան Գուլան ընդհատեց նրա մտքերը.

-Ինչու՞ ես դու այդքան շատ աշխատում, քարավաններ ես տանում հեռավոր ճանապարհորդությունների… Դու երբեք ժամանակ չես վերցնու՞մ՝ կյանքը վայելելու համար…

Շարու Նադան ժպտաց.

-Վայելել կյանքը…, - կրկնեց նա: - Իսկ ինչպե՞ս դու կվայելեիր կյանքը, եթե դու լինեիր Շարու Նադան…

-Եթե ես ունենայի քո չափ հարստություն, ես կապրեի՝ ինչպես արքայազն… Երբեք չէի կտրի շոգ անապատը: Շեքելները կծախսեի այնքան արագ, որքան արագ դրանք կմտնեին իմ քսակը… Կկրեի ամենաթանկ հագուստն ու հազվագյուտ զարդերը: Այ դա կլիներ կյանք, կյա՛նք, որն արժե ապրել…

Երկուսն էլ ծիծաղեցին:

-Քո պապը զարդեր չէր կրում, - նախքան մտածելը խոսեց Շարու Նադան, ապա կատակով հարցրեց, - Եվ դու ժամանակ չէի՞ր հատկացնի աշխատանքին…

-Աշխատանքն ստեղծված է ստրուկների համար, - պատասխանեց Հադան Գուլան:

Շարու Նադան շրթունքը կծեց ու ոչինչ չասաց՝ լուռ շարունակելով ձիավարելը, մինչև որ ճանապարհն սկսեց բարձրանալ սարն ի վեր: Այստեղ նա սանձը քաշեց ու ձեռքն ուղղեց դեպի հեռվում երևացող կանաչ հովիտը.

-Այնտեղ հովիտ է: Նայի՛ր այնտեղ՝ հեռվում… ներքևում, դու կարող ես նշմարել Բաբելոնի պարիսպները: Աշտարակը Բելի տաճարն է: Թե աչքերդ սուր են, կարող ես անգամ նշմարել հավերժական ծուխը, որ խոյանում է աշտարակի եզրից…

-Այսպիսով, սա՞ է Բաբելոնը… Միշտ տենչացել եմ տեսնել աշխարհի ամենահարուստ քաղաքը, - մեկնաբանեց Հադան Գուլան: - Բաբելո՜ն, որտեղ իմ պապը ստեղծեց իր կարողությունը: Ա՜խ, եթե նա կենդանի լիներ: Հիմա մենք այսքան ճզմված վիճակում չէինք լինի:

-Ինչու՞ ցանկանալ, որ մարդու հոգին իրեն տրված ժամանակից երկար մնա այս երկրում: Փոխարենը դու և քո հայրը կարող էիք նրա լավ գործը շարունակել:

-Ավաղ, մեզանից բան դուրս չի գա: Ո՛չ ես, ո՛չ էլ հայրս չգիտենք ոսկի շեքելներ գրավելու նրա գաղտնիքը:

Շարու Նադան չպատասխանեց, խթանեց ձիուն և մտածկոտ ուղղվեց դեպի ներքևում գտնվող հովիտը: Նրանց հետևում էր քարավանը՝ պարուրված կարմիր փոշով: Քիչ անց հասան թագավորական մայրուղուն, հետո թեքվեցին հարավ՝ անցնելով ոռոգվող այգիներով: Շարու Նադայի ուշադրությունը գրավեցին երեք ծերունիներ, ովքեր վար էին անում դաշտում: Նրանք զարմանալիորեն շատ ծանոթ էին թվում:

-Ինչ տարօրինակ է… Նույն մարդիկ չեն կարող քառասուն տարի նույն հողը վարել…

Բայց, չգիտես ինչու, նա համոզված էր, որ սրանք հենց նույն մարդիկ են: Մեկն անվստահորեն բռնել էր գութանը, մյուս երկուսն էլ, ամեն մեկը մի կողմից գութանը քաշող եզներին խթանելով, վար էին անում: Քառասուն տարի առաջ նա նախանձում էր այդ մարդկանց: Ինչպիսի՜ խանդավառությամբ նա այն ժամանակ կփոխվեր նրանց հետ տեղերով: Իսկ այժմ ինչպիսի՜ փոփոխություն: Հպարտորեն նա հետ նայեց իր քարավանին. ընտիր ուղտեր ու ավանակներ՝ բեռնված Դամասկոսի արժեքավոր բարիքներով: Եվ այդ ամենն իր ունեցվածքի մի մասն էր միայն: Նա մատնացույց արեց վար անողներին.

-Քառասուն տարի է անցել, բայց նրանք նույն դաշտն են վարում…

-Այդպես էլ երևում է, բայց ինչու՞ ես համոզված, որ նույն մարդիկ են…

-Ես տեսել եմ նրանց այստեղ, - պատասխանեց Շարու Նադան:

Հիշողությունները սավառնում էին նրա մտքում: Ինչու՞ չի կարող թաղել անցյալն ու ապրել ներկայով: Ապա նա տեսավ պարզ, ինչպես նկարում, Արադ Գուլայի ժպտացող դեմքը: Անջրպետը նրա ու ցինիկ երիտասարդի միջև անէացավ:

Բայց ինչպե՞ս կարող էր նա օգնել նման մի մեծամիտ երիտասարդի, որի միակ ունակությունն է շռայլ ծախսելը, և ում ձեռքերը պարուրված են զարդերով: Նա կարող էր շատ աշխատանք առա-

ջարկել, բայց ոչ՝ մի մարդու, ով իրեն չափազանց լավն է համարում աշխատելու համար: Բայց նա իրեն պարտավորված էր զգում Արադ Գուլայի համար անել որևէ բան, բայց ոչ ընդամենը մի կիսատ փորձ: Նա և Արադ Գուլան երբեք կիսատ բաներ չեն արել, նրանք այդպիսի մարդիկ չէին:

Շարու Նադայի գլխում այդ պահին մի ծրագիր ծնվեց: Սակայն նա անմիջապես էլ հակադրվեց դրան: Նա պետք է հաշվի առներ հետևանքներն իր ընտանիքի ու իր դիրքի տեսանկյունից: Դաժան կլինի: Ցավալի կլինի: Լինելով արագ որոշումների տեր մարդ՝ նա մի կողմ թողեց հակասություններն ու որոշեց գործել:

-Կցանկանայիր լսել, թե ինչպես ես ու քո պապը գործընկեր դարձանք, ինչը շատ շահութաբեր եղավ մեզ համար: - հարցրեց նա:

-Իհարկե՛, դե պատմիր, տեսնեմ էդ ինչպես եք ոսկե մետաղադրրամներ ստեղծում: Դրանից ավել ինձ ոչինչ պետք չէ լսել, - պատասխանեց տղան:

Շարու Նադան անտեսեց այդ պատասխանն ու շարունակեց.

-Սկսենք այս մարդկանցից, որ վար են անում: Ես քո տարիքին էի, երբ մարդկանց շարքը մոտեցավ նրանց, և բարի ծերուկ Մեգիդոն, ով ագարակատեր էր, հեգնանքով քննադատեց նրանց ոչ ջանասիրաբար վարելու համար: Մեգիդոն շղթայված էր իմ կողքին: «Նայի՛ր այս ծույլերին», - բողոքեց նա, - «գութան բռնողն ուժ չի տալիս այն խորը փորելու համար, ոչ էլ եզը տանողն է այն տանում ուղիղ գծով: Ինչպե՞ս կարող են նրանք լավ բերք ակնկալել՝ առանց կարգին վարի»:

-Ասացիր, որ Մեգիդոն շղթայվա՞ծ էր քեզ, - ապշած հարցրեց Հադան Գուլան:

-Այո, բրոնզե ծանր շղթաներով մենք կապված էինք միմյանց… Մեգիդոյից հետո Զաբադոն էր՝ ոչխարների գողը: Ես նրան Հարունից էի ճանաչում: Շարքի վերջում Ծովահենն էր: Նա իր անունը գաղտնի էր պահում, բայց քանի որ նրա մարմնի վրա նավաստու դաջվածքներ կային, մենք ենթադրում էինք, որ նա ծովագնաց է…

-Դուք միմյանց ստրուկների պես էիք շղթայված, - զարմացավ Հադան Գուլան:

-Քո պապը չի՞ ասել, որ մի ժամանակ ես ստրուկ եմ եղել…

-Քո մասին հաճախ է զրուցել, բայց երբեք նման ակնարկ չի արել:

-Նա մի մարդ էր, ում կարող էիր վստահել ամենանուրբ գաղտնիքներն անգամ: Դու նույնպես այնպիսի տղամարդ ես, ում ես կարող եմ վստահել, այդպես չէ՞…

Շարու Նադան նայեց ուղիղ նրա աչքերին:

-Դու կարող ես վստահ լինել իմ լռությանը, բայց, այնուամե-

նայնիվ, ես ապշած եմ: Պատմիր ինձ, ինչպե՞ս է եղել, որ ստրուկ ես դարձել:

Շարու Նադան ուսերը թոթովեց.

-Ցանկացած մարդու հետ կարող է պատահել, որ նա ստրուկ դառնա: Խաղատներն ու գարեջուրն էին, որ ինձ դժբախտացրին: Ես զոհ դարձա իմ եղբոր անբարոյականություններին: Կռվի մեջ նա սպանեց իր ընկերոջը: Ինձ գրավադրեցին մի այրու մոտ՝ այլ տարբերակ չգտնելով եղբորս բանտից ազատելու համար: Այրին էլ, ի վերջո, այնքան զայրացավ, որ հայրս չէր կարողանում արծաթով ինձ ազատել, որ ինձ վաճառեց ստրկության:

-Ինչպիսի՜ ամոթ ու անարդարություն, - Հադան Գուլան ըմբոստացավ: - Բայց պատմի՛ր ինձ, խնդրում եմ, ինչպե՞ս դու նորից ձեռք բերեցիր քո ազատությունը…

-Մենք դեռ կհասնենք դրան, բայց ոչ հիմա: Թու՛յլ տուր ինձ՝ շարունակեմ իմ պատմությունը: Երբ անցնում էինք նրանց կողքով, հող վարողները մեզ պիտակավորում էին ու ծաղրում: Նրանցից մեկը հանեց իր մաշված գլխարկն ու խոնարհվելով ասաց. «Բարի գալուստ Բաբելոն, ո՛վ Արքայի հյուրեր: Նա սպասում է ձեզ պարիսպների վրա՝ սեղանը գցած, ցեխոտ ամաններում սոխի ապուրով»: Եվ բոլորը բարձրաձայն քրքջացին: Ծովահենը կատաղությամբ բռնկվեց ու դրանց մի լավ հայհոյեց: «Այդ ի՞նչ նկատի ունեին՝ ասելով, որ Թագավորը մեզ է սպասում պարիսպի վրա», - հարցրեցի նրան: «Գնում եք քաղաքի պարիսպների համար քար կրելու, մինչ մեջքներդ կոտրվի: Կարող է նաև մինչև մեջքներդ կոտրվելը ծեծից մեռնեք: Նրանք ինձ չեն ծեծի: Ես կսպանեմ նրանց»: Ապա խոսեց Մեգիդոն. «Իմաստ չեմ տեսնում, որ տերը հակված լինի ծառային ծեծելու: Լավ աշխատող ծառային ո՞վ կուզի ցավեցնել»: «Իսկ ո՞վ է ուզում լավ աշխատել… », - ասաց Զաբադոն: -«Այս վար անողները խելոք մարդիկ են. մեջք չեն կոտրում: Կամաց, իրենց հունով գործն առաջ են տանում»: «Դու չես կարող հաջողություն ունենալ՝ գլուխ պահելով», - առարկեց Մեգիդոն: - «Եթե օրը մեկ հեկտար վարես, ապա դա լավ աշխատանք է: Եվ ամեն մի տեր գիտի դա: Իսկ եթե մի ամբողջ օրում միայն կես հեկտար վարես, դա արդեն գլուխ պահել է: Ես գլուխ պահող չեմ: Ես սիրում եմ աշխատել ու գործս լավ եմ անում, քանի որ աշխատանքն իմ իմացած ամենալավ ընկերն է… Նրա միջոցով եմ ես հասել իմ բոլոր բարիքներին, ինչ ունեցել եմ… Իմ ագարակը, կովերն ու հացահատիկը, ամեն ինչ…»: «Հա՜, իսկ ու՞ր է այդ ամենը հիմա…», - փոթկաց Զաբադոն: - «Իմ կարծիքով ավելի լավ է՝ խելացի լինել և ամեն ինչ ստանալ՝ առանց աշխատելու: Այ տես Զաբադոյին. նա քարշ կտա միայն ջուր կամ այլ թեթև աշխատանք կանի, մինչ դու մեջքդ կկոտրես՝ քար կրելով:» - Նա

ծիծաղեց իր հիմար ծիծաղով: Սարսափը պատեց ինձ այդ գիշեր: Չէի կարողանում քնել: Ես սեղմվեցի պարսպին ու սպասեցի, մինչ պահակները կսկսեին իրենց հերթապահությունը: Գրավեցի Գոդոսոյի ուշադրությունը, ով իր առաջին հերթափոխն էր ընդունել: Նա հուժկու արաբ ավազակի տպավորություն էր թողնում, ով եթե քեզ կողոպտի, ապա նաև կսպանի վերջում: «Գոդոսո՛, ասա ինձ», - շշնջացի ես նրան, - «երբ հասնենք Բաբելոն, մեզ վաճառելու են պարիսպների՞ն...»: «Ինչու՞ ես հարցնում...», - քնախույզ հարցրեց նա: «Մի՞թե պարզ չէ», - աղերսեցի ես: - «Ես երիտասարդ եմ: Ես ուզում եմ ապրել: Ես չեմ ուզում ծեծվել, մինչև մահը վրա հասնի, ու չարչարվել՝ քար կրելով: Հույս կա՞, որ ինձ կարող է մի լավ տեր որպես ծառա վերցնել... »: Նա էլ ինձ շշնջաց. «Ես քեզ մի բան կասեմ: Դու լավ տղա ես ու Գոդոսոյի համար խնդիրներ չես ստեղծում: Որպես կանոն՝ մենք սկզբում գնում ենք ստրուկների շուկա: Ուշադիր լսիր: Երբ գնորդները գան, ասա՛, որ դու լավ աշխատող ես և ուզում ես քո տիրոջ համար լավ աշխատել: Զգտիր, որ նրանք ցանկանան քեզ գնել: Եթե քեզ չգնեն, մյուս օրն արդեն քար ես կրելու պարիսպների վրա: Ահավոր ծանր աշխատանք է»: Նրա հեռանալուց հետո պառկեցի տաք ավազին ու նայեցի երկինքին՝ մտածելով աշխատանքի մասին: Ինչպես Մեգիդոն ասաց աշխատանքի մասին՝ կուզեի, որ աշխատանքն իմ լավ ընկերն էլ լինի: Հաստատ նա կլինի իմ լավ ընկերը, եթե ինձ փրկի պարսպի վրա քար կրելուց: Երբ Մեգիդոն արթնացավ, ես շշնջացի նրան լավ լուրը: Դա մեր միակ լույսի շողն էր, երբ մենք քայլեցինք դեպի Բաբելոն: Երեկոյան մենք մոտեցանք քաղաքին ու կարող էինք տեսնել մարդկանց շարքերը, ինչպես մրջյունների շղթան է իջնում ու ելնում պարսպի պատերով: Մենք տպավորված էինք բազմահազար այդ բանվորներով. ոմանք ջրախորշ էին փորում, ոմանք էլ ցեխից աղյուս էին սարքում: Իսկ ճնշող մեծամասնությունն աղյուս էր կրում դեպի այդ հռչակավոր բաբելոնյան շինությունները[1]: Պահակախումբը հայհոյում էր ու մտրակում նրանց, ովքեր գծից շեղվում էին: Խեղճ, հյուծված բանվորները տապալվում էին ծանրության տակ՝ չկարողանալով նորից ոտքի կանգնել: Եթե մտրակելը չէր կարողանում նրանց ոտքի հանել, ապա նրանք ուղղակի մի կողմ էին հրվում ու մնում՝ այդ վիճակում տառապելով: Ապա որոշ ժամանակ անց քարշ էին տալիս դեպի այլ հյուծվածների մոտ, որ ճանապարհի եզրին սպասում էին՝

1 Պարիսպը, կախովի այգիները, տաճարները, ոռոգման ջրանցքները

արժանանալու անանուն մեծ գերեզմանափոսին: Այս տեսարանից մարմնովս սարսուռ անցավ: Ահա սա էր իմ հոր որդու վերջը, եթե նրան չհաջողվի վաճառվել ստրուկների շուկայում: Գոդոսոն ճիշտ էր: Մենք քաղաք մտանք դարպասների միջով, ու մեզ տարան ստրուկների բանտ, առավոտյան էլ տարան շուկա: Այստեղ վախեցած ստրուկների բազմություն էր, ում պահակախումբը մտրակների հարվածների տակ ստիպում էր շարժվել ու ցուցադրվել գնորդներին: Ես ու Մեգիդոն պատրաստակամությամբ մեզ ներկայացնում էինք ամեն մի հարմար գնորդի, ով թույլ կտար մեզ՝ իրեն դիմել: Ստրկավաճառը թագավորական զինվորներ բերեց, որոնք կապեցին Ծովահենին ու մի լավ ծեծեցին, քանզի նա հրաժարվում էր հրամաններին ենթարկվել: Երբ նրան տարան, ես ցավ զգացի նրա համար: Մեգիդոն զգաց, որ շուտով մենք կբաժանվենք: Երբ մի պահի մոտիկ գնորդ չկար, նա ինձ հետ խոսեց ու ազդեցիկ կերպով հավաստիացրեց ինձ, թե որքա՜ն թանկ բան է աշխատանքն ապագայի համար. «Որոշ մարդիկ ատում են աշխատանքը: Նրանք դրա մեջ թշնամի են տեսնում: Ավելի լավ է դու ընկերացիր աշխատանքի հետ, փորձի՛ր սիրել նրան: Դժվարությունից խույս մի՛ տուր: Եթե մտածես, թե որքան լավ տուն ես կառուցում, ապա այդ տան համար քարշ տրվող աղյուսների ծանրությունն աչքիդ չի երևա, ոչ էլ կզլանաս հեռու աղբյուրից շաղախի համար ջուր կրել: Խոսք տու՛ր ինձ տղա՛, որ տիրոջդ համար ժրաջան կաշխատես: Եթե նա չգնահատեց աշխատանքդ ու ջանքերդ, թող դա քեզ վրա չազդի, ու մոտեցումդ չփոխես: Հիշիր՝ լավ կատարած աշխատանքն օգտակար է այն կատարողի համար: Այն մարդուն ավելի լավ է դարձնում»: Նա դադարեցրեց խոսքը, երբ մի ամրակազմ ագարակատեր մոտեցավ մեզ ու զննող հայացքով սկսեց տնտղել: Մեգիդոն սկսեց նրա հետ ագարակից խոսել, և ի վերջո ագարակատերը համոզվեց, որ Մեգիդոն լավ աշխատանք կկատարի ու որոշեց գնել նրան՝ որպես ծառա: Ագարակատերը և ստրկավաճառը երկար-բարակ սակարկեցին, և ի վերջո, ագարակատերը հանեց իր գեր քսակը: Քիչ անց ագարակատերը Մեգիդոյի հետ միասին հեռացավ: Մի քանի ստրուկ էլ առավոտյան վաճառվեց: Կեսօրին Գոդոսոն ինձ տեղյակ պահեց, որ իրավիճակը ստրկավաճառին զզվեցնում է, ու նա չի ցանկանում գիշերել: Մայրամուտին մնացածին կտանի թագավորական գնորդի մոտ: Այս լսելով՝ ես շատ մտահոգվեցի, ու երբ երեկոյան երևաց գեր, ժպտերես մի մարդ ու հարցրեց, թե մեր մեջ հացթուխ կա՞, թե՞ ոչ, ես մոտեցա նրան ու ասացի. «Իսկ ինչու՞ է քեզ նման արտակարգ խոհարարն ուզում գործը տալ իրեն զիջող մեկին: Ավելի լավ չէ՞ վերցնել ինձ նման երիտասարդ, աշխատասեր մեկին ու սովորեցնել այդ արհեստը: Ես շատ արագ սովորող ու շատ աշխատասեր եմ,

հնարավորություն տուր ինձ՝ քո քսակի համար աշխատել, և ես ջանք չեմ խնայի՝ քո քսակի համար հնարավորինս շատ ոսկի ու արծաթ աշխատելու»: Նա տպավորվեց իմ այս պատրաստակամությունից ու սկսեց սակարկել ինձ համար: Ստրկավաճառը, որ առաջին անգամ էր ինձ վրա ուշադրություն դարձնում, սկսեց ժրաջանորեն ինձ գովել. երիտասարդությունս, առողջությունս, աշխատասիրությունս: Ես ինձ զգում էի ինչպես մի յուղոտ խոյ, որ վաճառվում է մսավաճառին: Ի վերջո, ի ուրախություն ինձ՝ գործարքը կայացավ, ու ես հեռացա իմ նոր տիրոջ հետ: Այդ պահին ես ինձ զգում էի որպես Բաբելոնի ամենահաջողակ մարդ: Իմ նոր տունն ինձ շատ դուր եկավ: Նանա-նեիդը՝ իմ տերը, սովորեցրեց ինձ գարին աղալ քարե աղացով, որ գտնվում էր տան բակում, կրակ վառել փռում և ապա՝ քնջութի սերմերից ալյուր ստանալ՝ մեղրով թխվածքի համար: Մարագում՝ ցորենի պարկերի մոտ, ես բազմոց ունեի: Ծեր հավաքարար ստրուկ Սուաստին ինձ լավ էր կերակրում ու շատ գոհ էր, քանզի ես նրան օգնում էի ծանր աշխատանքի դեպքում: Ահա եկավ իմ հնարավորությունը տիրոջս իմ արժեքն ապացուցելու համար, և ես հույս ունեի այդպիսով գտնել իմ ազատության ճանապարհը: Խնդրեցի Նանա-նեիդին՝ ինձ ցույց տալ, թե ինչպես են խմոր հունցում ու դրանից հաց թխում: Նա դա արեց՝ գերված իմ սովորելու պատրաստակամությունից: Որոշ ժամանակ անց, երբ հաց թխելու գործում վարպետացա, խնդրեցի նաև ցույց տալ ինձ, թե ինչպես են մեղրաբլիթներ թխում: Կարճ ժամանակ անց ես թխում էի ամեն ինչ: Տիրոջս դուր էր գալիս պարապ մնալը, բայց Սուաստին գլուխը մտախոհ տատանում էր: Նա չէր արդարացնում անգործությունը: Զգացի, որ պահը հասունացել է, որպեսզի ես սկսեի մտածել փող աշխատելու մասին և այդպիսով գնեի իմ ազատությունը: Քանի որ թխելու գործերս վերջանում էին կեսօրին, մտածեցի՝ Նանա-նեիդը կընդունի առաջարկս, որ երեկոներին ես մի այլ գործ սկսեմ ու եկամուտն ինձ պահեմ: Ապա մի միտք էլ ծագեց. Ինչու՞ չթխել ավելի շատ մեղրաբլիթներ ու փողոցներում վաճառել սոված անցորդներին: Ես առաջարկեցի իմ ծրագիրը Նանա-նեիդին. «Եթե ես երեկոյան՝ իմ ազատ ժամերին, լրացուցիչ թխվածք թխեմ ու վաճառեմ, դեմ չես լինի՞, որ եկամտի մի մասն ինձ պահեմ, որպեսզի ծախսեմ իմ կարիքների համար...»: «Ճշմարիտ ես, ճշմարիտ ես», - համաձայնեց նա: Երբ նրան ասացի, որ իմ ծրագիրն է՝ փողոցում վաճառել մեր մեղրաբլիթները, նա շատ լավ զգաց: «Ահա թե ինչպես կանենք», - առաջարկեց նա, - «դու վաճառում ես երկուսը մեկ փենիով, դրա կեսը ես վերցնում եմ ու փակում եմ մեղրի, ալյուրի, փայտի ծախսերը, իսկ մյուս կեսը կկիսենք հավասար»: Ես շատ գոհ էի նրա այդ առաջարկից, որ թույլ էր տալիս իմ վաճառքից գոյացած գումարի մեկ քա-

ռորդն ինձ պահել: Այդ գիշեր երկար աշխատեցի, որ մի պատգարակ պատրաստեմ՝ թխվածքը վրան դասավորելու համար: Նանա-նեիդն ինձ տվեց իր հին թիկնոցներից մեկը, որպեսզի ես պատշաճ տեսք ունենամ, Սուաստին էլ օգնեց ինձ այն կարկատելու ու մաքրելու հարցում: Հաջորդ օրը ես թխեցի սովորականից մեկ բաժին ավելի մեղրաբլիթներ: Նրանց շագանակագույն տեսքը շատ ախորժալի էր, երբ ես անցնում էի փողոցներով՝ բացականչելով դրանց մասին: Սկզբում թվում էր, թե ոչ ոք հետաքրքրված չէ: Ես շարունակեցի այդպես մինչ ուշ կեսօր, և հենց մարդիկ սովածացան, մեղրաբլիթներն սկսեցին արագորեն սպառվել, և շուտով պատգարակս դատարկվեց: Նանա-նեիդը շատ գոհ էր իմ հաջողությունից ու ինձ տվեց գումարի խոստացված բաժինը: Ես հրճվեցի սեփական փենիների տեր լինելու փաստից: Մեգիդոն ճիշտ էր, որ տերը գնահատում է իր ծառայի լավ աշխատանքը: Այդ գիշեր ես այնքան ոգևորված էի, որ չկարողացա քնել: Ամբողջ գիշեր միտք էի անում, որ եթե այսպես շարունակվի, մի տարում որքան գումար կվաստակեմ, և այդպես քանի՞ տարի պետք կլինի, որպեսզի իմ ազատության համար անհրաժեշտ գումարը հավաքեմ: Ու երբ շարունակում էի այդպես ամեն օր դուրս գալ իմ թխվածքի պադգարակով, ձեռք բերեցի մշտական հաճախորդներ: Ու նրանցից մեկը հենց քո պապն էր՝ Արադ Գուլան: Նա գորգավաճառ էր ու գորգ էր վաճառում տան տիկիններին՝ մի սև ստրուկի հետ անցնելով քաղաքի մի ծայրից մյուսը՝ գորգերը բարձած իր էշի վրա: Նա գնում էր երկու թխվածք իր ու իր ստրուկի համար, ու մինչ կվերջացներ թխվածքն ուտելը, ոտքը կախ էր գցում՝ ինձ հետ զրուցելու համար: Մի օր պապդ ինձ մի բան ասաց, որ ես ընդմիշտ կհիշեմ. ‹‹Ինձ դուր են գալիս քո թխվածքները, տղա, բայց դրանցից առավել ինձ դուր է գալիս քո մոտեցումը գործին: Նման մոտեցումը քեզ մեծ հաջողություն կբերի››: Կարո՞ղ ես դու պատկերացնել, Հադան Գուլա, թե նման խոսքերն ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ մի ստրուկ պատանու վրա, ով մաքառում էր մեծ օտար քաղաքում, որպեսզի իրավիճակից դուրս գալու մի հնար գտներ: Ամիսներն անցնում էին, ու ես շարունակում էի ավելացնել քսակիս դրամները: Այն սկսեց ծանրանալ, և ինձ հաճելի էր զգալ գոտուցս կախ այդ ծանրությունը: Աշխատանքն իրոք ապացուցում էր, որ իմ իսկական ընկերն է, ճիշտ ինչպես Մեգիդոն ասաց: Ես երջանիկ էի, բայց Սուաստին մտահոգված էր: «Քո տերը չափից ավելի շատ է ժամանակ անցկացնում խաղատներում», - ասաց նա: Ես շատ ուրախացա, երբ մի օր փողոցում հանդիպեցի Մեգիդոյին: Նա տանում էր բանջարեղենով բեռնված երեք ավանակ: «Իմ գործերը շատ լավ են», - ասաց նա: - «Տերս իմ արած գործը լավ է գնահատում, ու այժմ ես կառավարիչ եմ: Ինչպես տեսնում ես, նա ինձ է

վստահում առևտուրը ու նաև պատրաստվում է իմ ընտանիքը բերել ինձ մոտ: Աշխատանքն ինձ շատ է օգնել, ու ես դուրս եմ եկել իմ դժբախտ վիճակից: Մի օր էլ այն կօգնի ինձ՝ գնել իմ ազատությունը, ու ես նորից ազարակատեր կլինեմ»: Ժամանակն անցնում էր, ու դրա հետ մեկտեղ՝ Նանա-նեիդն ավելի ու ավելի անհամբեր էր սպասում փողոցից իմ վերադարձին: Նա պատրաստ սպասում էր իմ գալուն ու անմիջապես բաժանում էր գումարը մեր միջև: Նա նաև ինձ անընդհատ դրդում էր՝ գտնել նորանոր խանութներ ու մեծացնել վաճառքը: Հաճախ անցնում էի քաղաքի պարիսպներից ու գնում պարիսպ կառուցող ստրուկների մոտ, որպեսզի թխվածքներս առաջարկեմ պահակազորին: Ես ատում էի այդ զարհուրելի տեսարանով վայրը գնալը, բայց դե պահակները շատ առատաձեռն էին: Մի օր անսպասելիորեն տեսա Զաբադոյին՝ շարքում կանգնած. նա սպասում էր, որ իր զամբյուղի մեջ քարեր լցնեն: Նա ծռված ու տանջված տեսք ուներ, մեջքին էլ մտրակների հետքեր կային: Մեղքս եկավ, ու ես իմ թխվածքներից մեկը նրան տվեցի, ինչը նա սոված գազանի պես խցկեց իր բերանը: Նրա աչքերում ագահություն տեսա ու չքացա մոտից, քանի նա չէր հարձակվել իմ պատգարակի վրա: «Ինչու՞ ես այդքան շատ աշխատում», - մի օր ինձ հարցրեց Արադ Գուլան: Ճիշտ նույն հարցը, որ այսօր տվեցիր, հիշու՞մ ես: Ես ասացի նրան, թե ինչ էր ինձ Մեգիդոն ասել աշխատանքի մասին, ու որ, իրոք, աշխատանքն ապացուցեց, որ իմ լավագույն ընկերն է: Ես ցույց տվեցի նրան իմ փենիներով լի քսակն՝ ասելով, թե ինչպես եմ ես այն հավաքում, որպեսզի մի օր վերջապես գնեմ իմ ազատությունը: «Երբ ազատ դառնաս, ինչ ես պատրաստվում անել…», - հարցրեց նա: «Այդ ժամանակ», - պատասխանեցի ես, - «կուզեմ վաճառական դառնալ»: Ու նա ինձ մի բան ասաց, որ ես երբեք չէի կռահի: «Դու չգիտես, բայց ես էլ եմ ստրուկ, ու համագործակցում եմ իմ տիրոջ հետ»:

-Սպասիր, - պահանջեց Հադան Գուլան: - Ես չեմ լսի սուտը, որ պատվազրկում է իմ պապին: Նա ստրուկ չէր: - Նրա աչքերը զայրույթից վառվում էին:

Շարու Նադան հանգստություն պահպանեց:

-Ես հարգում եմ նրան, որ չնայած իր դժբախտությանը՝ կարողացավ դառնալ Դամասկոսի ամենահարգարժան քաղաքացիներից մեկը: Իսկ դու՞՝ նրա թոռը, արդյոք նույն նյութից ես կազմված… Բավարար տղամարդկություն չունե՞ս՝ իրականության հետ առերեսվելու… թե՞ դու նախընտրում ես ապրել կեղծ պատրանքներով…

Հադան Գուլան ուղղվեց իր թամբի վրա: Հուզմունքը հազիվ զսպելով՝ նա ասաց.

-Իմ պապը սիրված էր բոլորի կողմից: Անհամար են նրա բարե-

գործությունները: Սովի ժամանակ նա չէ՞ր, որ իր ոսկով այդքան ցորեն գնեց Եգիպտոսից ու իր քարավանով չէ՞ր, արդյոք, որ այն բերեց Դամասկոս ու բաժանեց բոլորին, որպեսզի սովից փրկվեն: Ու հիմա դու ասում ես, որ նա մի զզվելի ստրուկ էր Բաբելոնում…

-Եթե նա այդպես ստրուկ էլ մնար, կարող էր լինել զզվելի… Բայց քանզի նա իր արդար ջանքերի գնով դարձավ Դամասկոսի ամենապատկառելի մարդկանցից մեկը, աստվածները դադարեցրին նրա անհաջողություններն ու օրհնեցին նրան, - պատասխանեց Շարու Նադան և շարունակեց: - Բացելով իր գաղտնիքը՝ պապդ պատմեց ինձ ստրկությունից ազատվելու իր ծրագրի մասին, և թե ինչպես է նա գումար հավաքում, որպեսզի մի օր գնի իր ազատությունը: Ու այդ ժամանակ, երբ նա արդեն հավաքել էր անհրաժեշտ գումարը, մտահոգ էր, քանզի առևտուրը պակասել էր և նա կորցրել էր իր տիրոջ օժանդակությունը: Ես հակադարձեցի նրա այդ անվճռականությանը. «Մի՛ մնա՝ տիրոջդ կառչած: Նորից ապրիր ազատության զգացողությամբ: Շարժվի՛ր որպես ազատ մարդ ու հասի՛ր հաջողությունների որպես ազատ մարդ: Որոշի՛ր, թե ինչ ես ուզում, ու հետևողական աշխատանքը քեզ կօգնի հասնել դրան»: Նա ճամփա ընկավ՝ ասելով, որ գոհ է, որ ես նրան ամոթանք տվեցի ու նաև քաջալերեցի[2]: Մի օր էլ գնացի քաղաքի դարպասներից դուրս ու շատ զարմացա՝ տեսնելով մարդկանց մի հոծ բազմություն: Երբ հարցրեցի, թե ի՞նչ է պատահել, պատասխանեցին. «Ինչ է՝ չե՞ս լսել: Մահապատժի են ենթարկում մի ստրուկի, ով սպանել է թագավորի պահակներից մեկին ու փախել: Թագավորն անձամբ այստեղ է լինելու»: Այնքան խիտ էր բազմությունը մահվան սյան մոտ, որ վախեցա առաջ գնալ, քանզի թխվածքներս կարող էին վնասվել: Ուստի բարձրացա մի անավարտ պարսպի վրա, որ կարողանամ մարդկանց գլուխների վրայով տեսնել: Բախտս բերեց. տեսա նրան՝ Նաբուգոդոնոսորին, ով անցավ իր ոսկե կառքով: Նման վեհափառ բան ես տեսած չկայի. ոսկյա ու թաֆշյա կտորներ էին երևում կառ-

2 Նկատենք, որ ստրուկի կարգավիճակը շատ լավ կանոնակարգված էր այն ժամանակներում: Ստրուկը կարող էր շատ ապահովված կյանք ունենալ, ամուսնանալ ազատ մարդու հետ: Ազատ կնոջից ծնվածը նույնպես ազատ մարդ էր: Բաբելոնի վաճառականների մեծ մասը ստրուկի կարգավիճակ ունեին: Լինելով ստրուկ՝ կարող էին իրենց սեփական ստրուկներն ունենալ: Հաճախ ստրուկն ու իր տերը գործընկերներ էին լինում:

քից կախ ընկած: Մահապատժի իրագործումը չէի տեսնում, բայց լսում էի խեղճի ճիչերը: Մտածում էի, թե ինչպե՞ս կարող է նման վեհություն ունեցող մեր թագավորը դիտել մի այդպիսի զարհուրելի տեսարան, մինչդեռ նա զրուցում և կատակում էր իր մերձավորների հետ, և ես համոզվեցի, որ նա դաժան է, ինչի պատճառով էլ պարըսպի վրա աշխատող ստրուկներին նման տաժանակիր ձևով է բանեցնում: Երբ ստրուկը մահացավ, նրան ոտքից կապած վեր բարձրացրին այան վրա, որպեսզի բոլորը տեսնեն: Ամբոխն սկսեց նվազել, ու ես կարողացա մոտենալ: Նրա մազոտ կրծքին նշմարեցի միահյուսված երկու վիշապի դաջվածքը: Դա Ծովահենն էր: Հաջորդ անգամ, երբ հանդիպեցի Արադ Գուլային, նա անճանաչելի էր և ինձ ողջունեց խանդավառությամբ. «Ահա այն ստրուկը, որին դու ճանաչում էիր, այժմ նա ազատ մարդ է: Քո խոսքերում հրաշք կար: Արդեն իսկ առևտուրս մեծանում է: Կինս երջանիկ է: Նա ազատ կին է, իմ տիրոջ զարմուհին է: Նա շատ է ուզում, որ տեղափոխվենք մի նոր քաղաք, ուր ոչ ոք չիմանա, որ ես ստրուկ եմ եղել: Այդպես մեր երեխաները չեն թիրախավորվի իմ երբեմնի կարգավիճակի պատճառով: Աշխատանքն իմ լավագույն օգնականն է դարձել: Այն օգնեց ինձ նորից ձեռք բերել իմ ինքնավստահությունն ու վաճառելու իմ ունակությունը»: Ես երջանիկ էի, որ թեկուզ մի փոքր կարողացա նրան օգտակար լինել ժամանակին ինձ քաջալերելու դիմաց: Մի երեկո Սուաստին եկավ ինձ մոտ շատ մտահոգ. «Տերը փորձանքի մեջ է: Վախենում եմ նրա համար: Մի քանի ամիս առաջ նա մեծ գումար պարտվեց խաղատանը: Նա չի վճարում ագարակատիրոջը ցորենի ու մեղրի դիմաց: Վարկատուին ևս չի վճարում: Նրանք զայրացած են ու սպառնում են»: «Ինչու՞ պետք է մենք մտահոգվենք նրա անխելքության պատճառով: Նա մեր խնամքի տակ չէ», - պատասխանեցի ես: «Անգե՛ռ երիտասարդ: Դու բան չես հասկանում: Վարկատուի մոտ գրավ է դրել քո իրավատերը լինելու վկայականը: Ըստ օրենքի՝ վարկատուն կարող է այժմ քեզ տեր դառնալ ու վաճառել»: «Չգիտեմ՝ ի՞նչ անել: Ինչու՞, ինչու՞ պետք է նման փորձանք պատահեր»: Սուաստիի մտավախությունն անտեղի չէր: Երբ ես իմ ամենօրյա գործն էի անում, վարկատուն եկավ մի մարդու հետ, ում նա Սասի էր անվանում: Այս մարդը զննեց ինձ ու ասաց, որ, համաձայն է: Վարկատուն չսպասեց էլ, որ տերս տուն գա, վերցրեց ինձ ու ասաց Սուաստիին, որ տեղեկացնի տիրոջս: Միայն մի խալաթով ու քսակս գոտկատեղիցս կախ՝ ինձ շտապ տարան՝ գործս կիսատ թողած: Ես կտրվեցի իմ երազանքներից, ինչպես քամին պոկում է ծառն անտառի միջից ու տանում, նետում ծովը: Նորից խաղատունն ու գարեջուրն ինձ դժբախտություն բերերցին: Սասին շատ պարզ ու կոշտ մարդ էր: Ամբողջ ճանապարհին ես նրան ասացի, թե

ինչ լավ աշխատող եմ եղել Նանա-նեիդի համար ու որքան բաներ եմ արել։ Նրա պատասխանը հուսահատեցրեց. «Ինձ այս գործը դուրս չի գալիս։ Տիրոջս սրտովն էլ չի։ Թագավորը տիրոջս կարգադրել է՝ ուղարկել ինձ ու կազմակերպել ջրանցքի կառուցումը։ Դրա համար տերս ինձ կարգադրել է հնարավորին չափ շատ ստրուկներ գնել ու այդ ջրանցքի աշխատանքն արագ ավարտել։ Բայց ինչպես կարելի է նման ահռելի ծրագիրը շուտ ավարտել»։ Իսկ հիմա, Հադամ Գուլա, պատկերացրու անապատ, որտեղ ծառ չկա, միայն կարճ թփեր են, ուր արևն այնպես է այրում, որ կարասների միջի ջուրն այնքան տաք է, որ մեծ դժվարությամբ է խմել լինում։ Այժմ պատկերացրու՛ մարդկային շարքեր, որ իջնում են փոսի մեջ և հողը կրում վեր ցեխոտ կածանով։ Պատկերացրու՛ ուտելիքը տրվում է մի մեծ ընդհանուր կերակրախողովակով, ու մենք դրանից սնվում էինք խոզի նման։ Չունեինք ո՛չ վրան, ո՛չ էլ ծղոտ՝ վրան քնելու համար։ Դա էր իմ նոր իրականությունը։ Քսակս թաղեցի մի լավ նշան արած վայրում՝ կասկածելով, թե երբևէ կկարողանամ այն նորից վերցնել։ Սկզբում ես ժրաջան աշխատում էի, բայց աստիճանաբար իմ հոգին մարեց։ Ապա տապի ջերմախտը պատեց իմ հյուծված մարմնին։ Կորցրեցի ախորժակս ու գրեթե չէի կարողանում սնվել։ Գիշերները գալարվում էի անքնությունից։ Տանջանքների մեջ անգամ սկսեցի մտածել, թե գուցե Ձաբադոյի մոտեցումը բոլորից ճիշտն էր, որ մարդ գլուխ պահի ու խուսափի մեջք կոտրող գործից։ Ապա հիշեցի նրա տեսքը մեր վերջին հանդիպման ժամանակ ու որոշեցի, որ դա այդքան էլ այդպես չէ։ Մտածեցի Ծովահենի մասին, որ միգուցե ավելի լավ է, որ մարդ կովի ու սպանվի, բայց հիշելով նրա արյունոտված կախված մարմինը՝ համոզվեցի, որ դա էլ լավ միտք չէ։ Ապա հիշեցի իմ վերջին հանդիպման ժամանակ Մեգիդոյի տեսքը։ Նրա ձեռքերը կոշտացած էին շատ աշխատանքից, բայց փոխարենը՝ նրա դեմքը շողում էր բավարարվածությունից ու երջանկությունից։ Նրա ծրագիրն ամենալավն էր։ Բայց չէ՞ որ ես էլ էի իրենից ոչ պակաս պատրաստակամությամբ աշխատում. նա չէր կարող ինձանից շատ աշխատել։ Ինչու՞ իմ աշխատանքն էլ չբերեց ինձ հաջողություն ու երջանկություն։ Գո՞րծն էր, որ նրան երջանկություն ու հաջողություն բերեց, թե՞ դա միայն ու միայն աստվածների կամքն էր։ Արժե՞, որ ես այսպես ամբողջ կյանքս բանեմ՝ երբեք չհասնելով իմ նպատակներին։ Այս բոլոր հարցերը սավառնում էին գլխումս, ու ես պատասխան չէի գտնում։ Իրոք որ ես մոլորվել էի։ Մի քանի օր անց, երբ ես արդեն լիովին ուժասպառ վիճակում էի՝ դեռ առանց իմ հարցերի պատասխանի, Սասին իմ ետևից մարդ ուղարկեց։ Լուր էր եկել իմ տիրոջից, որ ինձ հետ տանեն Բաբելոն։ Գոտուցս հանեցի իմ քսակը, վրաս գցեցի քրքրված խալաթս ու

գնացի: Ճանապարհին էլ այդ նույն հարցերն անպատասխան տանջում էին ինձ: Կարծես թե լսում էի տարօրինակ բացականչություններ իմ ծննդավայր Հարունից. «Մարդուն հողմը տանում է, քշում ինչպես մրրիկ, ում ուղին ոչ ոք չի կարող զարդարել, ում ճակատագիրը ոչ ոք չի կարող գուշակել»: Այդ ի՞նչ եմ արել, որ իմ ճակատագիրն այսպիսին լինի: Ի՞նչ նոր դժբախտություններ ու տառապանքներ են ինձ սպասում: Մտանք տիրոջս տնամերձ այգին, և պատկերացրու՛ իմ զարմանքը, երբ այնտեղ տեսա Արադ Գուլային: Նա օգնեց ինձ ցած իջնել ու գրկեց, ինչպես մի կորցրած եղբոր: Երբ ճամփա ընկանք, ես սկսեցի նրան հետևել, ինչպես ստրուկը պետք է հետևեր իր տիրոջը, բայց նա ինձ թույլ չտվեց: Նա իր ձեռքը գցեց ուսիս ու ասաց. «Քեզ փնտրել եմ ամենուր: Ու երբ արդեն հույսս կորցրել էի, հանդիպեցի Սուաստիին, որն էլ ինձ ասաց վարկատուի մասին, վարկատուն էլ ասաց, թե ով է քո առաքինի տերը: Շատ հզոր սակարկող էր նա ու ինձանից մի լավ գումար կորզեց: Բայց դե դու դրան արժանի ես: Քո փիլիսոփայությունն ու աշխատասիրությունն ինձ ոգևորել են և մղել դեպի իմ այս նոր հաջողությունը»: «Մեգիդոյի փիլիսոփայությունը, ոչ թե իմը», - ուղղեցի նրան: «Մեգիդոյի ու քո: Շնորհակալ եմ երկուսիդ էլ, մենք գնում ենք Դամասկոս, և ես ուզում եմ, որ դու լինես իմ գործընկերը: Տե՛ս», - բացականչեց նա, - «այս պահին դու կդառնաս ազատ մարդ»: Այդ ասելով՝ նա իր թիկնոցի տակից հանեց իմ անունը կրող կավե սալիկը: Նա այն բարձրացրեց գլխից վեր ու հարվածեց հատակին այնպիսի ուժով, որ սալիկը հազար կտոր եղավ: Ապա խանդավառությամբ այնքան ոտնահարեց երևացող կտորները, որ այդ ամենից միայն փոշի մնաց: Երախտագիտության արցունքները լցրեցին աչքերս: Ես գիտակցում էի, որ Բաբելոնի ամենահաջողակ մարդն եմ: Այսպիսով, տեսնում ես, որ նույնիսկ ամենածանր պահերին աշխատանքն ապացուցեց, որ իմ ամենալավ ընկերն է: Աշխատելու պատրաստակամությունն ինձ փրկեց մնացած ստրուկների նման պարսպի վրա բանելու հեռանկարից: Այն նաև այնքան տպավորություն թողեց պապիդ վրա, որ նա ինձ ընտրեց՝ որպես գործընկեր:

Ապա Հադան Գուլան հարցրեց.

-Ուրեմն, ոսկի շեքելներ կուտակելու պապիս գաղտնիքն աշխատանքն էր…

-Դա նրա միակ միջոցն էր, երբ ես նրան հանդիպեցի, - պատասխանեց Շարու Նադան: - Քո պապը գործից հաճույք էր ստանում: Աստվածները գնահատեցին նրա աշխատանքն ու առատորեն պարգևատրեցին:

-Ես սկսում եմ հասկանալ, - Խոսեց Հադան Գուլան: - Աշխատանքը դեպի նրան է ձգել շատ ընկերների, ովքեր հիացել են նրա

գործերով և դրա բերած հաջողությամբ: Աշխատանքը նրան այդքա՜ն պատիվ է բերել Դամասկոսում: Աշխատանքը նրան այնքան բարիքներ է բերել, որոնք ինձ հիացնում են:

-Կյանքը լի է բազմազան հաճույքներով,- շարունակեց Շարու Նադան:

-Ամեն ինչ իր տեղն ունի: Ուրախ եմ, որ աշխատանքը նախատեսված չէ միայն ստրուկների համար: Եթե այդպես լիներ, ինձանից խլված կլիներ իմ ամենամեծ հաճույքը: Շատ բաներ եմ ես վայելում, բայց դրանցից ոչ մեկն աշխատանքի տեղը չի լրացնում:

Շարու Նադան ու Հադան Գուլան ընթանում էին վեր խոյացող պարիսպների ստվերով, մինչ հասան Բաբելոնի հսկա բրոնզե դարպասներին: Նրանց մոտենալուն պես նշմարվեց պահակախումբը, որը հարգալից ողջունեց քաղաքացուն: Գլուխը վեր պահած՝ Շարու Նադան դարպասներով անցկացրեց իր քարավանն ու տարավ քաղաքի փողոցներով:

-Ես միշտ հույս եմ փայփայել, որ մի օր պապիս նման կլինեմ, -խոստովանեց Հադան Գուլան: - Երբեք չեմ իմացել, թե ինչպիսի մարդ էր նա: Դու ինձ դա ցույց տվեցիր: Այժմ դա իմանալով՝ ես նրան էլ ավելի եմ գնահատում և ուզում եմ նրա նման լինել: Ցավում եմ, որ երբեք չեմ կարող փոխհատուցել քեզ իմ պապի հաջողության գաղտնիքն ինձ ասելու համար: Այսօրվանից սկսած՝ ես էլ կկիրառեմ նրա մոտեցումը: Ես կսկսեմ ապրել համեստ կերպով, ինչն իմ այս վիճակին ավելի սազական է, քան այս զարդերն ու թանկ հագուստները:

Սա ասելով՝ Հադան Գուլան հանեց ականջներից ականջօղերը, ապա մատանիները՝ մատներից: Սանձեց իր ձին, հետ ընկավ ու հարգանքով շարժվեց քարավանի տիրոջ հետևից:

ՋՈՐՋ Ս. ՔԼԵՅՍՈՆ
Բաբելոնի ամենահարուստ մարդը

GEORGE S. CLASON
The richest man in Babylon

Խմբագիր՝ Սարգիս Հովսեփյան

Կազմի ձևավորումը՝ Ջարինե Մկրտչյան

Գեղարվեստական խմբագիր՝
Դավիթ Հակոբյան

Չափսը՝ 140x210մմ
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ²

ՄԱԳԱՂԱԹ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տպագրվել է «Մագաղաթ» տպագրատանը
Հասցե՝ ք. Երևան, Մանանդյան 33/1
Հեռ.՝ 091 460 972, 093 207 186